

ԱՂԱՄԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

**ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ
ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.**

**ՃԱՆԱՊԱՐՅՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ
ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՆԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ




ASSOCIATION OF GREAT RESEARCH INSTITUTIONS IN COOPERATION
WITH THE UNIVERSITY OF FRIEBURG

ԱՂԱՍԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ
ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

ԾԱՆԱԴԱՐՅՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ
ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ



ՀՀ ԳԱԱ "ԳԻՏՈՒԹՅՈՒՆ" ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2014

Տպագրվում ԶԶ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Թաղևոսյան Աղասի

Միգրացիա և առօրեականություն.

Թ 141 Ճանապարհորդություն մշակույթների ու պրակտիկաների
սահմանագծին/ Ա. Թաղևոսյան.- Եր.: Գիտություն, 2014.- 168էջ:

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Կովկասի ակադեմիական շվեյցարական ցանցի (ԿԱՇՑ) աջակցությամբ: ԿԱՇՑ-ը ծրագիր է, որի նպատակն է նպաստել սոցիալական և հումանիտար գիտությունների առաջխաղացմանը Հարավային Կովկասում (հիմնականում՝ Վրաստանում և Հայաստանում): Ընդհանուր առմամբ, ցանցի գործունեությունն ուղղված է նոր սերնդի տաղանդավոր գիտնականներին աջակցելուն: Հեռանկարային կրտսեր հետազոտողները ստանում են աջակցություն հետազոտական ծրագրերի, կարողությունների զարգացմանն ուղղված թրենինգների և կրթաթոշակների տեսքով: Ծրագիրը կարևորում է այն անձանց առաջընթացը, ովքեր շնորհիվ իրենց ԿԱՇՑ փորձի հաջողությամբ ինտեգրվում են միջազգային գիտական ցանցերում: ԿԱՇՑ ծրագիրը համակարգվում և իրականացվում է Ֆրիբուրգի համալսարանի՝ (Շվեյցարիա) Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի միջֆակուլտետային ինստիտուտի կողմից: Այն նախաձեռնվել և իր աջակցությունն է ստանում Գեբերտ Ռուֆ հիմնադրամի կողմից:

Այս հրատարակության մեջ զետեղված կարծիքները պատկանում են հեղինակներին, և պարտադիր չէ, որ ներկայացնեն Գեբերտ Ռուֆ հիմնադրամի և Ֆրիբուրգի համալսարանի տեսակետները:

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.7

ISBN 978-5-8080-1078-9

- © Կովկասի ակադեմիական շվեյցարական ցանց (ԿԱՇՑ)
- © ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն
- © ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
--------------------	---

ԳԼՈՒԽ 1. ՄԻԳՐԱՆՏԻ ԿԱՐԳԱՎԵՃԱԿԻ

ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ	17
1.1. Միգրացիայի ընդհանուր պատկերը Հայաստանում	17
1.2. Միգրացիայի դիմելու նպատակները	19
1.3. Միգրացիայի նպատակի ու տեղի ընտրության խնդիրը	26
1.4. Ինքնության ներկայացումը և դրա հետ կապված պրակտիկաները	31
1.5. Կարգավիճակի ձևավորման ու իրացման պրակտիկաները	36

ԳԼՈՒԽ 2. ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿՐՈՒՄ	51
2.1. Տարածական պրակտիկաները	51
2.2. Ժամանակի և ժամանցի կազմակերպում	60
2.3. Ուտեստի հետ կապված պրակտիկաները	66
2.4. Հագուստի հետ կապված պրակտիկաները	71
2.5. Միգրանտների առօրյա փոխհարաբերությունների բնույթը և առանձնահատկությունները. Անհատական և հանրային պրակտիկաները	76

ԳԼՈՒԽ 3. ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ

ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ.....	95
3.1. Մասնավորը և հանրայինը սեզոնային աշխատանքային միգրանտների առօրյա պրակտիկաներում Հայաստան վերադարձից հետո. 1-ին հետազոտական դեպք	97
3.2. Վերադարձած միգրանտները քաղաքացիական շարժումներում և նրանց առօրյա պրակտիկաները.	

Հետազոտական դեպք – 2	107
3.3. Միգրանտների պրակտիկաների առանձնահատկու- թյունները Հայաստան վերադարձից հետո	120
3.4 Ձեռք բերվող կապիտալի տեսակները և ինքնության ռեպրեզենտացիան	145
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	157
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	161

Հետազոտության նպատակն ու հիմնական խնդիրները: Վերադարձած միգրանտների համար, միգրացիան, իսկ հետո նաև վերադարձը, առաջին հերթին, ժամանակային մի սահման է, ջրբաժան, որը տարանջատում է նրանց կյանքի տարբեր հատվածները: Սահմանի կողմերում տարբեր մարդկային փորձառություններ են, որոնք ներկայացնում են տարբեր առօրեականություններ: Երբեմն կյանքի ժամանակային այդ սահմանագծի երկու կողմերում ընկած առօրեականություններն այնքան տարբեր են, որ թվում է, թե դրանք նույն մարդուն չեն վերաբերում: Բայց երբեմն էլ դրանք ձգտում են նմանվել իրար: Այդ նմանվելու ձգտումը սահմանի երկու կողմերում գտնվող տարբեր իրականությունները փորձում է մոտեցնել միմյանց՝ առանձին վերցրած մեկ մարդու պրակտիկաներում (practices)¹: Պրակտիկաներ, որոնք լցնում են նրա առօրեականությունը և այն աստիճան են կապված անհատի հետ, որ մարդիկ դրան պարզապես անվանում են կյանք:

Այս հետազոտությունը նվիրված է միգրացիայի առօրեականությանը և, միևնույն ժամանակ, առօրեականության պրակտիկաների միջոցով միգրացիայի ուսումնասիրությանը: Այդ պատճառով էլ միգրացիան մեզ համար շատ վերացարկված մի բան չէ: Այն մարդու առօրեականության մի փորձ է, որը նա անցել է տարածական ու ժամանակային այլ միջավայրում և այդ փորձի ընթացքում ձևավորել ու յուրացրել է պրակտիկաներ, որոնք նրան օգնել են

¹. Պրակտիկաներ (practices) տերմինը լայնորեն տարածված է արդի հասարակագիտական և հումանիտար գիտություններում: Հատկապես այն կապված է առօրեականության ուսումնասիրության հետ և նշում է մարդու կողմից իրացվող բոլոր այն գործողությունները, որոնց միջոցով մարդը կազմակերպում է իր փոխհարաբերությունները շրջակա աշխարհի հետ: Դրանք կարող են վերաբերել, ասենք օրինակ, տարածության կամ ժամանակի կազմակերպմանը, սնվելու կամ հագնվելու ձևերին և մնացած այն ամենին, որոնց հետ առնչվում է մարդը և ստիպված է լինում դրանց ուղղված գործողություններ իրացնել:

հասնել իր առջև դրված նպատակներին: Դրանցում առանցքայինն ապրելու ու վերարտադրվելու պրակտիկաներն են: Իսկ, թե ինչպիսին են եղել արդյունքները նոր տեղում, կախված են եղել այն բանից, թե տեղը փոխվելուց ինչպե՞ս են փոխվել նպատակի իրագործմանն ուղղված պրակտիկաները և որքանո՞վ է տեղի փոփոխությունը կամ տեղափոխությունը տարածության ու ժամանակի մեջ հնարավորություն տվել իրականացնելու դրված նպատակները: Որքանո՞վ է այդ ամենը ազդել գործող սուբյեկտի՝ միգրանտի վրա և, վերջապես, ինչպիսի՞ն է եղել վերջինիս ազդեցությունը իր միջավայրի վրա, հայրենիք վերադարձից հետո:

Լայն առումով, ներկայացվող հետազոտության նպատակը եղել է Հայաստանի հասարակական-մշակութային կյանքի վրա միգրացիայի ազդեցության ուսումնասիրությունը: Որպես նախնական հիպոթեզ, առաջ է քաշվել այն ենթադրությունը, որ միգրանտները տեղափոխվելով մի մշակութային միջավայրից մյուսը, իրենց հետ նոր մշակութային միջավայր են տեղափոխում ոչ միայն սեփական մշակույթին բնորոշ պրակտիկաներ, այլև ձևավորում են նորերը կամ յուրացնում են ընդունող հասարակության հատկապես այն պրակտիկաները, որոնք անհրաժեշտ են իրենց նպատակների իրականացման համար: Այդ պրակտիկաները միգրանտի համար ձեռք են բերում սոցիալական ու մշակութային կապիտալի նշանակություն և վերադարձից հետո չեն կորում: Դրանց որոշ մասը, որպես սոցիալական ու մշակութային կապիտալ մարմնավորվում է միգրանտի անձում և նրա հետ տեղափոխվում է հայրենիք: Հաճախ այն ներդրվում է հասարակական ու մշակութային կյանքի այս կամ այն ոլորտում, փոխարկվում կապիտալի այլ տեսակների, ազդում միգրանտի կարգավիճակի վրա ու ձևավորում պրակտիկաների նոր տեսակներ: Ասվածը, որոշ առումով մոտ է սոցիալական ու մշակութային փոխանցումների (social and cultural remittances) մասին թեզին (Levitt 1998; Levitt & Lamba-Nieves 2011), սակայն տարբերվում է դրանից, որ այս դեպքում, կարևորվում են

միգրացիայի միջոցով պրակտիկաների և սոցիալական ու մշակութային կապիտալների շրջանառության ու փոխանակության խնդիրները:

Հետազոտելու համար առաջ է քաշվել երեք հիմնական հարց: Նախ, թե ինչպես է միգրացիան ազդում մարդու վրա այդ ընթացքում և ինչ փոփոխություններ է կրում ինքը՝ միգրանտը: Այնուհետև, ինչ հետք է թողնում այդ ազդեցությունը նրա վրա Հայաստան վերադառնալուց հետո և ինչպիսին է նրա ազդեցությունը իր հասարակական և մշակութային միջավայրի վրա: Վերջին հարցի համատեքստում, առանձնակի խնդիրներից է համարվել միգրանտների ազդեցության քննարկումը քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացների վրա: Այս պատճառով, ինչպես նշվել է, մենք վերցրել ենք հետազոտական մի քանի թիրախ խմբեր, որոնց պայմանականորեն անվանել ենք *աշխատանքային սեգմնային միգրանտներ*, *երկարատև միգրացիայից վերադարձածներ* և *կրթական կամ ուսանողական միգրանտներ*: Սրանք բոլորն էլ, ըստ էության, վերադարձած միգրանտներ են, սակայն տարբերվում են մեկը մյուսից իրենց միգրացիոն նպատակներով ու փորձառություններով: Մեզ հետաքրքիր էր դիտարկել, թե որքանով է միգրացիայի նպատակը պայմանավորում միգրացիոն ռազմավարությունն ու մարտավարությունը և որքանով են վերջիններս պայմանավորում միգրանտի հետ կատարված փոփոխությունները: Այս առումով առաջնային հետազոտական խնդիրներից մեկը վերաբերում է միգրանտի հետ կատարվող փոփոխությունների գրանցմանը: Հարց է առաջանում, թե ինչպե՞ս և որտե՞ղ են երևում այդ փոփոխությունները: Մշակութային մարդաբանության դիրքից այս հարցի պատասխանը տալիս է միգրանտների առօրեականության ուսումնասիրությունը: Առօրեականությունը ճանաչելի է դառնում պրակտիկաների միջոցով: Այդ պատճառով էլ նախընտրվել է առօրյա պրակտիկաների ուսումնասիրությունը, ենթադրելով, որ դրանք լավագույնս են ցուցադրում միգրանտի ինչպես գոր-

ծողությունների, այնպես էլ դրանց տակ դրված պատկերացումների ու ընկալումների փոխակերպումները: Ահա, թե ինչու, մեր հետազոտությունում կարևորվում են այն հարցերը, թե ինչպես են փոխվում միգրանտների առօրյա պրակտիկաները անձնական ու հանրային (private and public) կյանքի ոլորտներում, ինչ նոր դիսկուրսներ են ի հայտ գալիս միգրանտների առօրեականությունում, որոնք վերաբերում են ճանաչողական, բարոյական ու գեղագիտական առումներին: Փոխվում են արդյոք միգրացիայի ընթացքում ճշմարտության ու դրան հասնելու ուղիների, գեղեցիկի ու տգեղի, բարու ու չարի մասին մարդկանց ընկալումները: Եթե այո, ապա ինչպես են դրանք փոխվում ու ինչպիսի նոր պրակտիկաներ են ձևավորում միգրացիայից վերադառնալուց հետո:

Իրականացված որակական հետազոտության տվյալները թույլ են տալիս ասել, որ միգրանտների համար կարևոր խնդիրներից մեկն ընդունող հասարակությունում *կարգավիճակի* (ստատուսի) ձևավորումն ու վերարտադրությունն է: Միգրանտի կարգավիճակը պայմանավորված է միգրացիայի նպատակով, քանի որ կարգավիճակը որոշիչ դեր է խաղում նպատակին ուղղված անհրաժեշտ գործունեությունը կազմակերպելու ու իրացնելու գործում: Այսինքն, միգրանտի գործողությունները, մի կողմից, ուղղված են ընդունող հասարակությունում իր կարգավիճակի ձևավորմանը, մյուս կողմից, այդ կարգավիճակի իրացմանը: Այս առումով կարելի է առանձնացնել առնվազն երկու տիպի պրակտիկաներ. *կարգավիճակի ձևավորման* և *կարգավիճակի իրացման*: Նշված պրակտիկաներից երկուսն էլ ծառայում են միգրանտի նպատակի իրականացմանը: Մեր հետազոտական նյութերը ցույց են տալիս նաև, որ միգրանտների նպատակները նույնպես տարբեր են: Դրանք կարելի է ընդհանրացնել երկու մեծ խմբերում՝ ռազմավարական և մարտավարական: Այս ընդհանրացման համար հիմք է ծառայել Միշել դե Սերտոյի առօրեականության ռազմավարությունների ու մարտավարությունների բնորոշումը: Համաձայն դրանց ռազմա-

վարություններ ունեն այն մարդիկ, ովքեր իրենք են ձևավորում պրակտիկաներ և մյուսները դառնում են այդ պրակտիկաները իրացնողներ, իսկ մարտավարություններ՝ երբ մարդն իրացնում է ուրիշի ձևավորած պրակտիկաները (Certeau 1984. 35-36): Այլ կերպ ասած ռազմավարությունները սեփական տեքստերը ներկայացնող (ռեպրեզենտացնող) ու իրացնող պրակտիկաներն են, իսկ մարտավարությունները՝ այլոց: Օրինակ, հետաքրքիր է նկատել, որ աշխատանքային սեզոնային միգրանտների հիմնական մասն իրացնում է գործատուների ձևավորած պրակտիկաները: Այդ պատճառով էլ հաճախ նրանց կարգավիճակը նույնպես ձևավորում են գործատուները: Միգացիայի ընթացքում ձևավորած նրա պրակտիկաները նույնպես հաճախ գործատուների կողմից կանխորոշված են և նա շատ քիչ հնարավորություն ունի դրանք փոխելու:

Ընդհանրացնելով, կարելի է ասել, որ այս աշխատանքում փորձ է արվել պատասխանել այն հարցերին, թե.

1. ինչպե՞ս է ձևավորվում միգրացիայի նպատակը և արդյոք դրա վրա ազդում է միգրացիայի դիմող անհատի *հաբիթուսը* (տերմինը վերցված է Պ.Բուրդիեյից. Bourdieu 1984. 170; Bourdieu 1992. 78-83),

2. ինչպե՞ս է միգրացիայի նպատակի ընտրությունը ազդում միգրանտի կողմից հասարակական համապատասխան *դաշտի* ընտրության (ընդունող հասարակության այս կամ այն սեզմենտը, մասնագիտական խումբը, աշխատանքային միջավայրը, հանրային կյանքի այս կամ այն փորձառությունն իրացնելու միջավայրը և այլն) և այդ դաշտում դիրքավորվելու՝ իր ստատուսը ձևավորելու պրակտիկաների վրա (*դաշտ* տերմինը վերցված է Պ. Բուրդիեյից. (Bourdieu 1984. 226-230, Bourdieu 1993a. 38-43): Պ. Բուրդիեն բնութագրում է *դաշտը* որպես կապիտալի բաշխման համար պայքարող հիմնական դիրքերի միջև փոխհարաբերությունների ամբողջություն,

3. ինչպե՞ս են դաշտի ընտրության և այդ դաշտում կարգավիճակի ձևավորման ու իրացման պրակտիկաները կապված տարածական պրակտիկաների հետ,

4. ինչպիսի՞ կապեր կան կարգավիճակի ձևավորման ու իրացման պրակտիկաների միջև,

5. ինչպե՞ս են փոխվում դիսկուրսային պրակտիկաները կամ ինչպե՞ս է միգրանտական փորձառությունը ազդում միգրանտի ճանաչողական, էթիկական ու էսթետիկական ընկալումների ու պատկերացումների վրա,

6. ինչպե՞ս է պրակտիկաների փոփոխությունը ազդում միգրանտի սոցիալական, մշակութային ու տնտեսական կապիտալների վերարտադրության վրա,

7. ինչպե՞ս է միգրացիայի փորձառությունը և միգրացիայի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները (ընկալումների և պրակտիկաների, հաբիթուսի, մշակութային, սոցիալական ու տնտեսական կապիտալների փոփոխությունը) ազդումը միգրանտի կարգավիճակի վրա վերադարձից հետո,

8. ինչպիսի՞ նոր պրակտիկաներ են ի հայտ գալիս միգրանտի վերադարձից հետո և որքանո՞վ են դրանք կապված նրա կարգավիճակի փոփոխության հետ,

9. դրանցից որո՞նք են, որ միգրանտը բերում է իր հետ միգրացիայի վայրից, որպես պարզ փոխակերպում և որոնք են, որ ձևավորվում են հայրենիքում՝ որպես միգրացիայի հետևանք (օրինակ, միգրացիայի ընթացքում վաստակած գումարով թանկարժեք մեքենա գնելը, որպես ստատուսային ազդեցիկ ցուցիչ ձևավորելու պրակտիկա կամ գյուղում սեփական հողամասը մշակելու համար բանվոր վարձելը, որպես իր միջավայրում նոր ստատուս ձևավորելու պրակտիկա, կամ դրսում մասնագիտական որակական աճ ունեցող միգրանտը իրացնում է այն Հայաստանում, ինչն օգնում է նրա ստատուսի աճին և այլն),

10. ինչպե՞ս են վերը նշված պրակտիկաներն ու փոխակերպումները ազդում միգրանտի հաբիթուսի վրա Հայաստան վերադառնալուց հետո և ինչպե՞ս է այդ հաբիթուսը ազդում նրա հանրային, այդ թվում և քաղաքացիական պրակտիկաների վրա:

Հետազոտական մեթոդները: Ներկայացված աշխատանքն իրականացվել է որակական հետազոտության հիմքի վրա: Հետազոտության խնդիրը չի եղել վեր հանել ներկայացված հարցադրումների քանակական պատկերը: Ուստի և, ներկայացվող աշխատանքում չկան այս կամ այն հարցին վերաբերող վիճակագրական տվյալներ: Եթե այդպիսիք կան էլ, ապա մեջբերվում են միգրացիայի վերաբերյալ Հայաստանում իրականացված այլ հետազոտություններից:

Հետազոտության շրջանակներում իրականացվել են 42 անհատական խորացված հարցազրույցներ և ներգրավված դիտարկումներ Երևանում, Շիրակի մարզկենտրոն Գյումրիում և նույն մարզի երեք գյուղական բնակավայրերում: Իրականացվել են նաև երկու հետազոտական դեպքի ուսումնասիրություն (Case study):

Առաջին հետազոտական դեպքը ուսումնասիրելու համար իրականացվել է 20 անհատական խորացված, երեք փորձագիտական հարցազրույց և 9 ներգրավված դիտարկում: *Երկրորդ հետազոտական դեպքը* ներառել է 21 անհատական խորացված հարցազրույց և 11 ներգրավված դիտարկում: Ընդհանուր առմամբ, հետազոտության ընթացքում իրականացվել է 83 անհատական խորացված հարցազրույց, 3 փորձագիտական հարցազրույց և 20 ներգրավված դիտարկում:

Հետազոտության մեջ ընտրվել են երեք հիմնական միգրանտական խմբեր.

1. աշխատանքային սեզոնային միգրանտներ,
2. երկարատև միգրացիայից վերադարձածներ,
3. կրթական կամ ուսանող միգրանտներ:

Աշխատանքային սեզոնային միգրանտներ են նրանք, ովքեր երկու և ավելի տարի, տարեկան առնվազն չորս ամիս ժամկետով պարբերաբար մեկնում են որևէ երկիր աշխատելու և այնուհետև վերադառնում են Հայաստան, իրենց ընտանիքների մոտ:

Երկարատև միգրացիայից վերադարձածները նրանք են, ովքեր մեկնել են այլ երկիր աշխատելու կամ ապրելու, մնացել են այնտեղ առնվազն մեկ տարի ու վերադարձել իրենց հայրենիք:

Կրթական միգրանտները նրանք են, ովքեր մեկնել են այլ երկրներ ուսման նպատակով, սովորել են այնտեղ առնվազն մեկ տարի և վերադարձել են Հայաստան:

Այս բաժանումները պայմանական են: Լայն առումով, նրանք բոլորն էլ վերադարձած միգրանտներ են: Բաժանումը կատարվել է հիմնականում առաջնորդվելով ուսումնասիրության առանձնահատկություններից: Մասնավորապես, նկատի ունենք ընդունող հասարակությունում այդ խմբերի միգրանտների միգրացիայի դիմելու նպատակների, կարգավիճակի ու միգրացիոն պրակտիկաների առանձնահատկությունները, ինչն՝ ըստ մեր նախնական փորձագիտական գնահատման, ազդում է նաև այդ խմբերի Հայաստան վերադարձից հետո ունեցած ազդեցությունների վրա:

Հետազոտական մեթոդներում անհատական հարցազրույցներին ու դեպքերի (case) ուսումնասիրությանը նախապատվություն տալը թույլ է տվել լուծել մեզ համար կարևոր երկու հետազոտական խնդիր: Անհատական հարցազրույցները թույլ են տվել ուսումնասիրել միգրացիայի մեզ հետաքրքրող տեսանկյունները և դրա որակական առանձնահատկությունները անհատական միգրացիոն պատմությունների մակարդակում: Ինչ վերաբերում է հասարակական և քաղաքացիական գործընթացների վրա ազդեցության ուսումնասիրությանը, ապա այդ նպատակով ընտրվել են երկու տարբեր հետազոտական դեպքեր:

1. աշխատանքային ու վերադարձած միգրանտներով բնակեցված գյուղական համայնք Շիրակի մարզում,
2. Երևան քաղաքի խնդիրներին նվիրված քաղաքացիական նախաձեռնություն, որում ներգրավված են եղել նաև ուսանող միգրանտներ:

Ինչ վերաբերում է ներգրավված դիտարկումներին, ապա դրանք թույլ են տալիս խորացնել ու ամբողջացնել անհատական հարցազրույցների ու դեպքերի ուսումնասիրության միջոցով գրանցված հետազոտական որակական տվյալները:

Հիմնական տեսական դրույթները և օգտագործվող հասկացությունները: Ներկայացվող հետազոտության համար տեսական առումով առանցքային կարևորություն է տրված առօրեականության ու պրակտիկաների վերաբերյալ սոցիալական գիտություններում ու սոցիալմշակութային մարդաբանության մեջ առկա գիտական մոտեցումներին: *Պրակտիկաների տեսությունը* ներկայացվող աշխատանքում ընտրված է որպես միգրացիայի արդյունքում տեղի ունեցող մշակութային փոխառությունների ուսումնասիրության գլխավոր վերլուծական մեթոդ:

Աշխատանքում օգտագործվող հիմնական հասկացություններն ու տեսական մոտեցումները ձևակերպելու համար հիմք են հանդիսացել Պ.Բուրդիեյի (Bourdieu 1992; Bourdieu 1993; Bourdieu 1993a; Bourdieu 1986; Bourdieu 1984), Ն.Էլիասի (Elias 2000), Գ.Ջիմմելի (Simmel 1984; Simmel 1971), Ի. Գոֆմանի (Goffman 1974, Goffman 1970), Մ. դե Սերտոյի (Certeau 1984), առօրեականության և պրակտիկաների վերաբերյալ առաջ քաշած տեսական դրույթները:

Վերլուծական տեսանկյունից, որպես կարևոր գործիք են ծառայել Պ. Բուրդիեյի կողմից սահմանված *դաշտ* (Bourdieu 1984. 226-230; Bourdieu 1993a. 38-43; Bourdieu 1993. 72-77) և *մշակութային կապիտալ* (Bourdieu 1986. 47) հասկացությունները:

Կարևոր են նաև *առօրեականության ռազմավարություն և մարտավարություն* հասկացությունները, որոնք գործածվում են Միշել դե Սերտոյի ձևակերպած իմաստներով (Certeau 1984. 35-38):

Ներկայացված հետազոտությունում հաճախ կարելի է հանդիպել նաև «պրակտիկայի սահման» հասկացությանը, որի ձևակերպման համար հիմք է հանդիսացել Ի.Գոֆմանի “frame” եզրույթը (Goffman 1974. 10):

Առօրեականության ու պրակտիկաների տեսական մոտեցումները մեզ համար կարևոր դեր են ունեցել որպես միգրացիայի միջոցով փոխազդեցությունների ու փոխառությունների ուսումնասիրության գործիք: Աշխատանքում միգրանտների ու ընդունող հասարակության միջև փոխհարաբերությունները փորձել ենք քննարկել ոչ այնքան որպես մշակութային սահմանների կոնտեքստում, որքան՝ պրակտիկաների: Մեր հիմնական դրույթն այն է, որ մշակույթների միջև սահմանների դժվար հաղթահարելիությունը նվազում է ու դառնում ավելի հեշտ հաղթահարելի, երբ միգրանտն ինքը՝ սահմանը մշակութային հարթությունից տեղափոխում է պրակտիկաների հարթություն: Նման անցման համար առանցքային դեր է խաղում մեկ այլ սահմանի հաղթահարման խնդիրը, սահման, որը գտնվում է միգրանտի մշակութային ինքնության ու նրա անհատականության միջև:

Միգրանտի ու ընդունող հասարակության միջև սահմանների հարցը ներկայումս քննարկվող տեսական կարևոր հարցերից է: Այս տեսանկյունից բավական հետաքրքիր մոտեցումներ են առաջարկվում տրանսնացիոնալիզմի տեսության շրջագծում: Մեզ համար, մասնավորապես, արժեքավոր է միգրանտներին վերաբերող խնդիրների քննարկումը տարբեր ազգերի ու պետությունների միջև սահմանների հաղթահարման հարցադրման դիտանկյունից (Vertovec 2009; Al-Ali & Khalid 2002; Faist 2000; Levitt P. and Jaworsky N. 2007; Boccagni P. 2012): Այս տեսանկյունը բավական տարածում ստացավ, հատկապես, Ա. Վիմերի և Ն. Գլիք Շիլերի

կողմից տրանսնացիոնալիզմի հասկացությունը լայն շրջանառության մեջ դնելուց հետո, որտեղ առաջ քաշվեց ազգային սահմանների հաղթահարելիության թեզը (Wimmer & Schiller 2002): Այս գաղափարը բավական լայն ընդունելության արժանալուն զուգահեռ, բնականաբար, ենթարկվեց նաև քննադատության (Waldinger & Fitzgerald 2004; Fitzgerald 2002; Kivitsso 2001):

Մենք խուսափել ենք տրանսնացիոնալիզմի տեսական դրույթն ամբողջովին փոխառելուց, քանի որ մեզ համար կարևոր է եղել սահմանների հաղթահարելիության խնդրի քննարկումը մշակութայինի և առօրեականության և ոչ թե՝ ազգայինի կոնտեքստում:

Մեզ համար հետաքրքիր է նաև *տրանսկուլտուրալիզմի* թեզը, որը առաջարկում է սահմանների խնդիրը տեղափոխել մշակութային հարթություն և կայում է այն ինքնության խնդրի հետ (Ortiz 1995; Bhabha 1994; Said 1990; Rutherford 1990): Մենք խուսափել ենք նաև տրանսկուլտուրալիզմ տերմինի առաջարկած տեսական մոտեցումները փոխառելուց, քանի որ դրանում շրջանառվող հասկացությունները դեռևս վերջնականորեն հստակեցված չեն և մեր դրած խնդրի լուծմանը ուղղակիորեն չեն ծառայում: Խոսքը վերաբերում է մասնավորապես հիբրիդ և բազմաչափ ինքնություն (multiple identity) հասկացությունների խնդրին:

Մեզ համար հետաքրքիր է եղել նաև Ջ. Քլիֆորդի մոտեցումը, ով միգրացիան մեկնաբանում է որպես մշակույթների ճամփորդության մի ուրույն ձև, ինչի շնորհիվ տեղի է ունենում ոչ միայն պարզապես մշակույթների տեղափոխություն, այլ նաև՝ թարգմանություն, որտեղ միգրանտը դառնում է մի յուրատեսակ թարգմանիչ իր և օտար մշակույթների միջև (Clifford 1992. 96-116; Clifford 1997): Այս առումով կարևոր է եղել նաև Է. Մաիդի ճամփորդության տեսությունը, ով քննում է ժամանակի ու տարածության մեջ տեքստերի ճամփորդության խնդիրը (Said 1983):


Փոխառելով սահմանների ու դրանց հաղթահարման թեզը, հիմնախնդրի քննարկումը տեղափոխել ենք առօրեականության

հարթություն: Այս տեսական հնարքը թույլ է տվել մեզ դիտարկել ոչ միայն մշակույթների, այլև պրակտիկաների միջև սահմանների դերակատարության ու դրանց հաղթահարման առանձնահատկությունները:

ՄԻԳՐԱՆՏԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

1.1. Միգրացիայի ընդհանուր պատկերը Հայաստանում Ձնայած միգրացիան Հայաստանին բնորոշ է եղել նաև մինչ-խորհրդային շրջանում, բայց զգալի դարձավ 1991 թ. ի վեր, երբ Հայաստանը դուրս գալով ԽՍՀՄ կազմից, և հռչակեց իր անկախությունը: 1990-ական թթ. առաջին կեսին միգրացիան Հայաստանում համընդհանուր բնույթ կրեց և դարձավ երկրի սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական բնութագրիչներից մեկը: Ըստ տարբեր հաշվարկների՝ Հայաստանից հեռացողների թիվը 1991 թ. ի վեր կազմել է 800000-1200000 մարդ (Yeganyan 2009. 38-47; Tadevosyan 2009. 162; Մինասյան և Պողոսյան 2008. 9): Միգրացիայի առավել ակտիվ շրջանը համարվում է 1991-1995 թթ., երբ Հայաստանից հեռացողների թիվը կազմել է մոտավորապես 610000-620000 մարդ: 1996-2001 թթ. համարվում է միգրացիայի տեմպերի նվազեցման ժամանակաշրջան, երբ արտագաղթողների թիվը կազմել է մոտ 250000 մարդ: Բսկ ահա 2002-2008 թթ. հեռացածների թիվը կազմել է ավելի քան 200000 մարդ (Yeganyan 2009. 38-47): Վերջին տարիներին միգրացիայի տեմպերը շարունակում են աճել: Ըստ որոշ հետազոտողների՝ միայն վերջին երկու տարում Հայաստանը լքել է ավելի քան 106000 մարդ, ինչը կազմում է երկրի բնակչության 4 %-ը (Միքայելյան 2013):

Միգրացիան Հայաստանի համար ունի երկակի նշանակություն: Դրա բացասական կողմն այն է, որ երկրից խլում է աշխատանքային տարիքի առավել ունակ մարդկանց: Միգրանտների



ավելի քան 79 %-ը 25-54 տարեկան են (Մինասյան և Պողոսյան 2008. 13): Նրանց գերակշիռ մեծամասնությունը, շուրջ $\frac{3}{4}$ -ը տղամարդիկ են: 55.7% ունի միջնակարգ, 16.1% մասնագիտական միջնակարգ, 18.7 %՝ բարձրագույն կրթություն: Ըստ, որոշ մասնագետների, սա ռազմավարական զարգացման առումով բացասական երևույթ է, որը կարիք ունի կարգավորվելու միգրացիոն քաղաքականության միջոցով (Yeganyan 2009. 51):

Մեկ այլ բացասական երևույթ է համարվում այն, որ միգրանտները ներգրավվում են հիմնականում ոչ որակյալ աշխատանք պահանջող ոլորտներում, ինչը չի նպաստում նրանց մասնագիտական աճին ու մարդկային զարգացմանը: Բացասական կողմերից են նաև միգրանտների շահագործման, իրավունքների խախտման, առողջապահական և հիգիենիկ ծանր պայմաններին վերաբերող հիմնախնդիրները (Поletaев 2004. 57; Тюрюканова 2004. 112-121):

Սակայն, նշվածով հանդերձ, միգրացիան ունի նաև դրական ազդեցություն: Միգրացիայի արդյունքում Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումները զգալի դեր են կատարում երկրի սոցիալ-տնտեսական լարվածությունը մեղմելու համար (Hakobyan 2009. 124): Դրա շնորհիվ հնարավոր է լինում մեղմել աղքատությունը և նույնիսկ գումարներ ներդնել երեխաների կրթության, առողջապահության և այլ ծախսերի համար (Gevorgyan 2009): Նշենք, որ Հայաստանի տնային տնտեսությունների մոտ 36 %, իսկ միգրանտ ունեցող տնտեսությունների 70 % դրամական փոխանցումներ է ստանում: Դրամական փոխանցումների 77 % գալիս է Ռուսաստանից, 11 % ԱՄՆ-ից, 3,2 % Ուկրաինայից, 1.4 % Ֆրանսիայից (Hakobian 2009. 127): Դրամական փոխանցում ստացող տնտեսությունների մոտ 90 % դրանք ծախսում է ամենօրյա ընթացիկ ծախսերի նպատակով: Մնացած 10% հիմնականում բաշխվում է ըստ առողջապահական, կրթական կարիքների, բնակարանային

պայմանների բարելավման, ժամանցի ու հանդիսությունների կազմակերպման ծախսերի (Hakobyan 2009. 123):

Նկատենք, որ միգրացիայի հիմնախնդիրը Հայաստանում լայնորեն հետազոտվողներից է: Վերջին տարիներին իրականացվել են դրա տարբեր տեսանկյուններին նվիրված կարևոր հետազոտություններ: Հետազոտված թեմատիկ խնդիրների շարքում կարելի է առանձնացնել աշխատանքային միգրացիայի (Galstyan and Makaryan 2012; Գալստյան 2009; Գալստյան 2006; Մինասյան և Պողոսյան 2007; Մինասյան և Պողոսյան 2005), վերադարձի միգրացիայի (Chobanyan 2012; Fleischer 2012; Migration and Skills in Armenia 2012; Մինասյան և Պողոսյան 2008), միգրացիայի ու զարգացման (Tadevosyan 2009; Migration and Development 2009), միգրացիայի կառավարման (Galstyan 2009; Galstyan, Prutsch and Pier Rossi-Longhi 2008.), միգրացիայի ժողովրդագրության (External and Internal Migration of Armenia 2008), դրամական փոխանցումների և միգրացիայի (Remittances and Development 2009) հիմնախնդիրների շրջանակը: Իրականացված հետազոտությունները շատ կարևոր են, բայց հիմնականում քանակական բնույթի են, իսկ միգրացիայի խորքային առանձնահատկությունները հասկանալու համար կարիք ունեն լրացվելու որակական բնույթի հետազոտություններով:

1.2. Միգրացիայի դիմելու նպատակները

Միգրանտների հետ իրականացվող անհատական հարցազրույցների ժամանակ նրանց խնդրվում էր ձևակերպել միգրացիայի դիմելու իրենց նպատակները: Ըստ գրանցված հետազոտական տվյալների դրանք բավական տարբեր են ու բազմազան: Տվյալների ընդհանրացումը թույլ է տալիս առանձնացնել միգրացիայի դիմելու հետևյալ հիմնական նպատակները.

ա. ընտանիքի առաջնային կարիքների բավարարում և գոյատևման հիմնախնդրի լուծում,

բ. ընտանիքի համար ավելի կայուն, արժանապատիվ ու հեռանկարային կյանքի ապահովում,

գ. սեփական անձի զարգացում, առաջընթացի ու ինքնաիրացման համար նոր հմտությունների ու կարողությունների ձեռքբերում:

ա. ընտանիքի առաջնային կարիքների բավարարում և գոյատևման հիմնախնդրի լուծում: Միգրանտների մի զգալի մասը, հատկապես սեզոնային աշխատանքային միգրանտները, իրենց իսկ պնդմամբ ստիպված են դիմում միգրացիայի: Դրա պատճառը Հայաստանում ձևավորված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակն է: Շատերը չեն կարողանում աշխատանք ճարել կամ նույնիսկ աշխատանք ունենալու դեպքում, բավականաչափ գումար վաստակել ընտանիքի առաջնային այնպիսի կարիքների բավարարման համար, ինչպիսիք են սնունդը, հագուստը, ձմռանը բնակարանի ջեռուցումը:

Հիմնականում կենցաղային ծախսեր են: Մնունդի, հագուստի, կոմունալ ծախսերը: Առաջներում խնդիր կար կրթական ծախսերը հոգալու, երբ երեխաները դեռ սովորում էին: Բայց հիմա ավարտել են: Մնացել են միայն տան ծախսերը: Իմ նպատակն ընտանիքի կերակրելու խնդիրն էր ու միգրացիան էլ դրա համար էր: Այդ հարցը լուծում է, բայց այնպիսի նպատակներ, որոնք կապված են զարգացման հետ, չի լուծում: Դե իմ հիմնական նպատակը տեղում գործ ունենալն է: Ես միշտ ձգտել եմ այստեղ աշխատանքի հարցը լուծել, բայց չի ստացվում:

Տղամարդ, 55 տարեկան,

ք. Գյումրի/Ռուսաստան (Մանկտ-Պետերբուրգ)

Մարդիկ գնում են: Ով ուր գնալու հնարավորություն ունի, գնում է: Գնա բազարում տես, ով Ռուսաստանից մի երկու

կոպեկ բերել է, նա է ի վիճակի ինչ-որ բան գնելու: Ըստեղի ժողովուրդն իր գրոշներով ի՞նչ կարող է առնել:

Տղամարդ, 50 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան (Արտյոմ)

Այսպիսի նպատակադրմամբ միգրանտները հիմնականում մեկնում են սեզոնային աշխատանքի դեպի Ռուսաստան: Նրանց միգրացիոն սեզոնը սովորաբար սկսվում է մարտ-ապրիլ ամիսներին և տևում մինչև հոկտեմբեր-նոյեմբեր: Նրանք, ովքեր սեզոնային աշխատանքային միգրացիայի են մեկնում պարբերաբար մի քանի տարի, բացի վերը նշված առաջնային կարիքների բավարարումը, կարողանում են նաև ավելի երկարատև ու հիմնարար բնույթի խնդիրներ լուծել, ինչպես նաև հոգալ երեխաների կրթության ծախսերն ու ընտանիքի անդամների առողջապահական կարիքները:

Հիմնական նպատակս ընտանիք պահելու համար վաստակելն է եղել: Այստեղ Հայաստանում լավ չեն վճարում, շատ քիչ են վճարում և այդ գումարի քանակը չի հերիքում, դրա համար էլ գնացել եմ: ... կերթաս կաշխատես գումար կվաստակես, կգաս ընտանիքդ կպահես: Ուրիշ լավ բան չկա գնալու մեջ: Չգնայի ավելի վատ կլինեի: Հայաստանում բան չկա: Հայաստան մնալու տեղ չի: Էն է, որ ծնողներ, հարազատներ այստեղ են, մենք էլ ենք մնում, ապրում:... Ավելի մեծ նպատակս էն է, որ տուն առնեմ այստեղ գյուղում, ընտանիքով առանձնանամ ծնողներիցս ու ապրեմ: Հիմա այդ ուղղությամբ եմ աշխատում: Բայց այդ հարցի համար պետք է երկար մնալ, ասենք տարի, տարի ու կես: Իմ հայրական ընտանիքը տասնինը մարդուց բաղկացած ընտանիք է: Երեք ախպերով ապրում ենք հայրական տանը, դրա համար էլ ուզում եմ առանձին տուն առնել: Սենյակները չեն հերիքում:

Տղամարդ, 28 տարեկան,
գ. Սարմաշեն/Ռուսաստան (Յակուտսկ)

բ. Ընտանիքի համար ավելի կայուն, արժանապատիվ ու հեռանկարային կյանքի ապահովում: Հարցազրույցներում որպես միգրացիայի նպատակը նշվում է նաև կայուն, արժանավայել կյանքով ապրելու ձգտումը: Նման նպատակադրում ունեցող միգրանտներ կան ինչպես սեզոնային աշխատանքի մեկնողների մեջ, այնպես էլ նրանց, ովքեր ավելի երկարատև ժամանակով են մեկնել Հայաստանից: Սեզոնային աշխատանքի մեկնողների մեջ այսպիսի նպատակադրում ունեցողները տարբերվում են գուտ գոյատևման ռազմավարություն ունեցողներից: Միգրացիայի դիմելու նրանց նպատակը ոչ միայն գումար վաստակելն ու հետո դրանով Հայաստանում ընտանիքի նվազագույն կարիքների բավարարումն է, այլ ընտանիքի և հատկապես երեխաների համար ավելի կայուն հեռանկարների ձևավորումը: Այդ պատճառով նրանք սեզոնային աշխատանքին մոտենում են, որպես մարտավարական քայլ, որի հետևանքով նպատակը միգրացիոն լավ կենսագրություն ստեղծելն է և ընդունող երկրում սոցիալական կապիտալի ձևավորումը: Մա կարող է հիմք հանդիսանալ հետագայում ավելի հեռանկարային այնպիսի խնդիրների լուծման համար, ինչպես մշտական բնակություն հաստատելն ու, վերջապես քաղաքացիություն ստանալն է: Այդ պատճառով աշխատանքային սեզոնային միգրատների մեջ նման նպատակներ ունեցողները ընդունող հասարակությունում ցուցաբերած իրենց վարքագծով էականորեն տարբերվում են գոյատևման նպատակ ունեցողներից:

Ես ուզում եմ գնալ, որովհետև այն պրոբլեմները, որ այստեղ է, այնտեղ չկան: Այն միևնույն հարցերը, որ անհրաժեշտ են մարդուն, լուծված են: Դրա համար էլ ես ուզում եմ գնալ, որ երեխաներս մարդավայել պայմաններում մեծանան: Ցանկացած մակարդակների մարդկանց հետ շփվելով ու համեմատական կարգի դնելով մեր հանրապետության հետ, գալիս եմ այն եզրակացության, որ եթե ամեն մարդու մի կյանք է տրված, պետք է ապրենք մարդավայել: Այսինքն,

առավոտը զարթնեցիր, պետք է մտածես օրվա անելիքներիդ մասին, իրիկունը որ քնեցիր, պետք է մտածես հաջորդ օրվա անելիքների մասին: Մարդու առօրյան էն կարգի դրսևորումներ ձեռք կբերի, որ հետագայում դա կազդի նաև քո երեխաների կյանքի վրա: Ասենք օրինակ, այնտեղ ցանկանում ես, որ քո երեխան ավելի ճկուն, սլացիկ ձևով իր ապագան կառուցի: Այստեղ դա հնարավոր չէ: Ես կուզեմ իմ երեխաները ճիշտ ապրեն, մակարդակով ապրեն: Ես անձամբ իմ մակարդակիս մեջ փոփոխություն եմ տեսել:

Ես ամեն ինչ անում եմ, որ իմ միզրացիոն պատմությունը մաքուր ու օրինակելի լինի: Դրա համար ամեն ինչ անում եմ, որ խախտումներ չունենամ: Ես ուզում եմ քաղաքացիություն ստանալ: Դրա համար իրենք պետք է տեսնեն, որ դու նորմալ մարդ ես ու օգուտ կարող ես տալ իրենց պետությանը:

Տղամարդ, 29 տարեկան,
ք.Գյումրի/Ռուսաստան (Անապա.)

Ինչ վերաբերում է արևմտյան զարգացած երկրներից վերադարձած միգրանտներին, ապա նրանց մեջ կան մարդիկ, ովքեր չնայած մեկնել են տարբեր պատճառներով, սակայն ընդունող երկրում մնալու հիմնավորումը եղել է նույնը՝ մարդավայել ապրելու և կայուն կյանքի հեռանկարների ձևավորման ձգտումը:

Տղաս հիվանդ եր, դրա համար գնացիք: Հետո ժամանակի հետ աշխատեցինք, որոշեցինք ապրել, մնալ: Ճիշտ է սկզբնական շրջանում բուժման նպատակով էինք գնացել, բայց հետագայում տեսնելով, որ պայմանները լավ են, հնարավորություններն ավելի մեծ, կյանքն ավելի հետաքրքիր ու հեռանկարային, որոշեցինք մնալ, աշխատանք փնտրել ու որոշ ժամանակով ապրել:

Տղամարդ, 43 տարեկան,
ք. Գյումրի/Գերմանիա (Բեռլին)

գ. Կյանքում առաջընթացի ու ինքնաիրացման համար նոր կարողությունների ու հմտությունների ձեռք բերում և սեփական անձի զարգացում: Այս դեպքի համար կարելի է առաձնացնել երկու հիմնական մոտեցում: Ըստ մոտեցումներից մեկի կարևոր է անհատի, իսկ ըստ մյուսի՝ կարողությունների զարգացումը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե սրանք իրարից առանձնապես չեն տարբերվում: Սակայն, կա մի շատ էական տարբերություն: Նրանք, ովքեր նպատակաուղղված են իրենց անձի զարգացմանը, միգրացիայի ընթացքում կարևորում են ոչ միայն մասնագիտական որակների աճը, այլև ուշադրություն են դարձնում հոգևոր, արժեքային և, վերջապես, աշխարհայացքային բնույթի երևույթների հետ ծանոթանալուն:

Այս խմբում հատուկ տեղ ունեն մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով միգրացիայի դիմաձևերը: Նրանցից ոմանք ցանկացել են բարձարցնել հենց մասնագիտական որակավորումը: Սակայն կան նաև այնպիսիները, որոնք գնացել են սովորելու, նոր մասնագիտություն ձեռք բերելու նպատակով:

Հիմնական նպատակս այն էր, որ ուզում էի սովորել ու նոր մասնագիտություն ստանալ: Նախկին մասնագիտությունիցս գոհ չէի և ուզում էի նոր բան սովորել: Դժգոհ էի նաև հայկական կրթությունից և չէի ուզում նոր մասնագիտացումը Հայաստանում ստանալ, քանի որ այստեղի կրթությունը որակ չունի:

Կին, 29 տարեկան,
ք.Երևան/Շվեդիա (Ստոքհոլմ)

Այս խմբի մեջ մտնող միգրանտների հիմնական նպատակը առաջնայնորեն մշակութային, այլ՝ ոչ թե ֆինանսական կապիտալի ձեռք բերումն է: Սրանք էականորեն տարբերվում են գոյատևման ռազմավարությամբ առաջնորդվող միգրանտներից, ում համար միգրացիայի գլխավոր նպատակը ֆինանսական կապիտալի ձեռքբերումն է: Ավելին, այս խմբի մոտ կարելի է հանդիպել նաև

այնպիսիներին, ովքեր գումար են հավաքել, ռոպեսգի այն օգտագործեն իրենց մասնագիտական որակավորումը բարձրացնելու նպատակով:

Մի օր որոշեցի, որ ինչ-որ բան իմ ուսանողական կյանքում չի հերիքում: Ինչ-որ բան պակաս էր, բայց ի՞նչ, չէի հասկանում... Լինել կինոյում: Ի սկզբանե նպատակս դա է եղել: Որ ինչքան շատ հնարավորություն ունենամ ճանապարհորդելու, այնքան շատ իմ որակը կլավանա: Այսինքն, Եվրոպա գնալու նպատակը էնտեղ սովորելն էր: Հա, սովորել ու էլի հետ գալ Հայաստան ու էստեղի կինոն, իմ կինոն, ավելի որակով դարձնել... Հա, վերջացրել եմ ուսումս: Հիմա մնացել ա սսպիրանտուրան անեմ: Ասպիրանտուրային արդեն պատրաստ եմ իմ կարծիքով: Ասպիրանտուրայի համար մի համալսարան կա Պերուջայում՝ Բտալիայում: Հիմա էլի գումարի հավաքման ընթացքն է:

Տղամարդ, 26 տարեկան,
ք. Երևան/Անգլիա (Լոնդոն)

Այս խմբի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում այն մարդիկ, ովքեր առաջին հերթին կարևորում են իրենց անձի զարգացումը և այդ նպատակի իրականացման համար որպես մարտավարական քայլ ընտրում են զարգացման ավելի բարձր մակարդակում գտնվող երկիր ուսման կամ աշխատանքի նպատակով մեկնելը:

Իմ գլխավոր նպատակն է շարունակել ներքնապես և արտաքնապես հարստանալ: Ներքինը՝ ճանապարհորդել, նոր մարդկանց հետ հանդիպել, նոր բաներ սովորել, անել: Ֆինանսական հարստությանն էլ առանձնապես դեմ չեմ: Կարևորն այն է, որ ես ապրում եմ այնպես, ինչպես ուզում եմ, որ հետո շատ բաների համար չփոշմանեմ:

Տղամարդ, 32 տարեկան,
ք. Երևան/Ֆրանսիա (Փարիզ)

Կան նաև միգրանտներ, ովքեր չեն ունեցել հատուկ նպատակներ և միգրացիայի դիմելը նրանց մոտ տեղի է ունեցել հանգամանքների բերումով կամ ուրիշի որոշմամբ:

Ճիշտ է դրանք շատ չեն: Մեր իրականացրած 42 անհատական խորացված հարցազրույցներից միայն երեքն է, որ միգրացիայի նպատակը որոշել է ոչ թե անձամբ միգրանտը, այլ՝ նրա ընտանիքի անդամները կամ բարեկամներ: Դրանցից մեկի դեպքում որոշումը կայացրել է ամուսինը, իսկ երկուսի դեպքում՝ ծնողները:

1.3. Միգրացիայի նպատակի ու տեղի ընտրության խնդիրը

Նկատելի է փոխկապվածություն միգրացիայի նպատակի ու միգրացիայի համար ընտրված երկրների միջև: Այսպես օրինակ, ընտանիքի կենցաղային հոգսերը և առաջնային կարիքները բավարարելու համար սեզոնային աշխատանքի նպատակով միգրացիայի դիմածների հիմնական մասը Ռուսաստան մեկնողներն են: Ռուսաստանը նախընտրելու հիմնական պատճառը նրանք համարում են այն, որ այդ երկիրն իրենց հարազատ է մշակութայնորեն: Քիչ թե շատ հեշտ է լինում հաղթահարել նաև լեզվական անջրպետը: Չկան նաև մուտքի վիզա ստանալու հետ կապված դժվարություններ: Ռուսաստանը բաց է սևագործ կամ արհեստագործական ժամանակավոր աշխատուժի համար, ինչը նույնպես շատ կարևոր է: Այդտեղ առկա են ձևավորված այնպիսի միգրանտական սոցիալական ցանցեր, որոնք նպաստում են միգրանտների աշխատանք ճարելուն ու ընդունող հասարակությունում տեղավորվելուն: Դրանք հիմնականում ձևավորված են ազգությամբ հայ մարդկանցից, ովքեր գլխավորապես բարեկամներից, ընկերներից, համերկրացիներից ու ծանոթներից ձևավորված խմբեր են:

*Բրիգադիր կա, ով մշտական ապրում է Յակուտսկում:
Նա ազգությամբ հայ է: Ինքն այնտեղ աշխատանք է ճա-*

րում, պայմանավորվում է, հետո կապվում է մեզ հետ և ասում, որ նման մարդիկ են պետք: Մենք էլ այստեղ, ըստ այդ պահանջի հավաքվում, գնում ենք: Առանձին-առանձին գնում ենք, հետո այնտեղ տարբեր մարդկանց հետ աշխատանքային խմբեր են ձևավորվում ու աշխատում ենք այս կամ այն շինարարական օբյեկտի վրա: ... Հա գումարի քանակը ձեռք է տվել: Քննարկել ենք ախպերներին ու հորոխպոր տղերքին հետ, ձեռք է տվել, պասպորտներս տվել ենք, տոմսերը մեր համար առել են, գնացել ենք: Մեզ տեղավորել, մնացած բոլոր հարցերը լուծել է հրավիրող կողմը: Հինգ հոգիս եղել ենք հորոխպոր տղերք, մյուսն էլ մեր գյուղից է եղել:

Տղամարդ, 28 տարեկան,
գ. Մարմաշեն/Ռուսաստան (Յակուտսկ)

Նման պատմություններ բնորոշ են հարցմանը մասնակցած գրեթե բոլոր սեզոնային աշխատանքային միգրանտներին: Ռուսաստանի, որպես միգրացիայի երկրի, նպատակահարմարությունն այս դեպքում նաև այն է, որ եթե նույնիսկ սոցիալական ցանցերի միջոցով աշխատանքի հետ կապված նախնական պայմանավորվածությունները չեն կայացել, ապա հնարավոր է եղել ժամանակավոր աշխատանք գտնելը:

Ռուսաստանի հետ կապվածության կարևոր պայմաններից մեկն էլ միգրացիոն փորձի ու ավանդույթների առկայությունն է: Սեզոնային միգրանտների գերակշիռ մասը տարիների փորձ ունի և նրանց համար ավելի վստահելի տարբերակ է այդ երկիր մեկնելը, քան այնպիսի մի տեղ, որտեղ իրեն անհրաժեշտ է լինելու զրոյից ծանոթանալ ընդունող հասարակությանը: Այստեղ շատ էական է ընդունող հասարակության ֆոնային ու հիմնական պրակտիկաներին միգրանտների ծանոթությունը, այդ պրակտիկաներից շատերին տիրապետելը (*Ֆոնային* անվանվում ենք այն պրակտիկաները, որոնք առաջին հայացքից նկատելի չեն, սակայն որոշիչ դեր ունեն միջանձնային ու հանրային փոխհարաբերություններում:

Այս խնդրին անդրադարձել են՝ Wittgenshtein 1980. 97; Searle 1980. 227; Garfinkel 2011. 54):

Հատկանշական է, որ այն միգրանտները, ովքեր իրենց առջև դրել են ոչ թե գոյատևման, այլ՝ զարգացման ու ինքնաիրացման նպատակներ, նախընտրել են մեկնել արևմտյան զարգացած երկրներ: Դրա պատճառները մի քանիսն են: Նախ, որ այդ երկրներում ավելի մեծ են կրթական կամ մասնագիտական որակավորումը բարձրացնելու ու փորձը հարստացնելու հնարավորությունները: Երկրորդ կարևոր պայմաններից է համարվում նոր միջավայրերում ապրելը, աշխարհայացքի ու փորձի ընդլայնումը: Որոշ միգրանտների մոտ արևմտյան երկրներ մեկնելու պատճառների մեջ թվարկվում է նաև գումար վաստակելը:

Ես միշտ էլ ուզել եմ դուրս գնալ: Իմ շրջապատում կային մարդիկ, որ դուրս էին գալիս տարբեր նպատակներով՝ կամ սովորելու, կամ Work and travel –ով: Միշտ էլ ուզել եմ գնալ, բայց հետ դառնալ: Երբեք չեմ մտածել մնալու համար: Ուղղակի ուզում էի Եվրոպա կամ Ամերիկա գնալ, այդ ժամանակ ջահել էի, ուզում էի գնալ, տեսնել, շրջագայել ու նաև փող աշխատել:

Կին, 30 տարեկան,
ք. Երևան/ԱՄՆ(Չիկագո)

Հետաքրիքը է նաև, որ հարցվածների մեջ եղել են մարդիկ, ովքեր մասնագիտական աճի ու անձնական հետաքրքրությունների իրացման համար սկզբնապես ընտրել են Ռուսաստանը, սակայն մի որոշ ժամանակ այնտեղ ապրելուց հետո, որոշել են տեղափոխվել արևմտյան մի որևէ երկիր:

Արդեն ընթացքում Ռուսաստանը դուրս չեկավ, չսիրեցի: Հիասթափվեցի: Սկզբից շատ բան չէի տեսնում: Հետո, երբ շատ հետները շփվեցի, շատ շուրջնապատկան, ինչ-որ դեգրադացված գաղափարներ ունեին, իբր մենք ենք ու վերջ ու ուրիշ բան գոյություն չունի: Իրենք իրենց

են միայն ճանաչում: Ու ինչքան հեռու էին էլ մեզապո-
լիսային քաղաքներից՝ Պիտեոից, կամ Մոսկվայից, հո-
գիներն ավելի մաքուր էր, ներսը շատ ավելի մաքուր,
բայց ուղեղների մեջ էլ ագիտացված քաղաքականությ-
յունն էր, որ մենք ենք ու ուրիշ բան չկա: Իրենցից շատե-
րի մոտ էն կարծիք է մինչև հիմա, որ սառը պատերազ-
մը դեռ կա: Իրենք էլ էլ Երկաթե վարագույրի հետևում
են: Ու հետո, որ հետ եկա Հայաստան, ճանապարհներ
էի փնտրում Եվրոպա մեկնելու համար:

Տղամարդ, 26 տարեկան,
ք. Երևան/Անգլիա (Լոնդոն),

Իրականացված հետազոտական տվյալների վերլուծությունը
թույլ է տալիս ասել, որ միգրացիայի նպատակները սերտորեն
կապված են և պայմանավորում են միգրացիայի աշխարհագրությ-
յունը: Այն մարդիկ, ում համար միգրացիայի նպատակը բխում է
գոյատևման ռազմավարությունից և սահմանափակվում բացառա-
պես ընտանիքի համար անհրաժեշտ առաջնային կարիքների բա-
վարարման համար անհրաժեշտ փող վաստակելով, նրանք պատ-
րաստ են հարմարվելու ամեն տեսակ անհարմարությունների,
այնքան որ կարողանան վաստակել անհրաժեշտ նվազագույն գու-
մարը: Քանի որ այս մարդիկ միգրացիան համարում են ժամանա-
կավոր մի բան, չունեն իրենց անձի զարգացման, աճի, մշակութա-
յին կապիտալի ձեռքբերման նպատակներ: Նրանք հաճախ համա-
կերպվում են նույնիսկ շատ անտանելի ու անմարդկային պայման-
ների:

*Բնակչությունը քաղաքում խառն էր. կորեացիներ, չի-
նացիներ, մորդվաներ, ռուսներ: Դեռևս Եկատերինայի
ժամանակներից դա աքսորավայր էր, ուղարկում էին
հանցագործներին, գողերին: Բնակչությունը շատ վատն
էր, գողությունն էր շատ, թալանը: Մեզնից էլ ահագին
բաներ են գողացել: Հանգստյան օրեր որպես էդպիսին
չենք ունեցել: Մենք ենք որոշել, մեկ-երկու հոգու պետք*

է տանը մնալ, մնացել են ինչ-որ բան արել, բայց ընենց, որ հիմնական աշխատանքին չխանգարի: Նույնիսկ մայիսի 9-ին ենք աշխատել: Ամբողջ քաղաքում տոն էր, իսկ մեզ հենց էդ օրը տեխնիկա տվեցին: Ստիպված աշխատեցինք:

Տղամարդ, 50 տարեկան,
ք.Գյումրի/Ռուսաստան (Արտյոմ)

Նման ռազմավարություն ունեցող միգրանտների համար մարտավարական կարևորագույն քայլը կարճ ժամանակում այնպիսի աշխատանք գտնելն է, որը իրենից լրացուցիչ ջանքեր չի պահանջի: Նրանք ժամանակ չեն տրամադրում իրենց անձի վրա ծախսելու կամ իրենց կարողությունների զարգացման վրա ներդրումներ անելու համար: Այդ պատճառով էլ նախընտրում են ժամանակավոր աշխատանքի համար մեկնել իրենց անհրաժեշտ այդ նվազագույն գումարը վաստակելու հնարավորություն ընձեռող երկիր՝ Ռուսաստան:

Մարդիկ, ովքեր ունենում են ավելի բարձր կամ երկարատև նպատակներ, ինչպես ասենք իրենց անձի զարգացումն է, կարողությունների ու հնարավորությունների կատարելագործումը, հետաքրքրությունների բավարարումը, մասնագիտական որակավորման բարձրացումը, ստեղծագործորեն կամ մասնագիտորեն իրացվելը, ավելի արժանավայել միջավայրում ապրելը, հիմնականում նախընտրում են արևմտյան զարգացած այնպիսի երկրներ, ինչպիսիք են Գերմանիան, Շվեդիան, Դանիան, Ֆրանսիան, Անգլիան, Շվեյցարիան, Իսպանիան, Չեխիան, ԱՄՆ-ը, Կանադան և այլն: Իսկ գոյատևման խնդիրների լուծման համար սեզոնային ժամանակավոր աշխատանքի դիմողները նախընտրում են հիմնականում Ռուսաստանը: Դա են վկայում նաև թվային տվյալները: Աշխատանքային միգրանտների թիվը կազմում է միգրանտների ընդհանուր թվի 94 %, իսկ աշխատանքային միգրանտների շուրջ 96 % կազմել են Ռուսաստան մեկնողները (Migration and Development 2009. 6-7):

1.4. Ինքնության ներկայացումը և դրա հետ կապված պրակտիկաները

Խոսելով ինքնության ու առօրեականության մասին, Պ.Բերգերը նշում է, որ ինքնության տիպերը հնարավոր է դիտարկել առօրեականության մեջ (Berger&Luckmann 1991. 195): Առօրյան, իրոք, հազեցած է ինքնության ներկայացման պրակտիկաներով և դա հնարավոր է նկատել նաև միգրանտների մոտ: Մեր հետազոտական տվյալները թույլ են տալիս ասել, որ ընդունող հասարակություններում միգրանտներն իրենց ինքնությունը ներկայացնելու երկու հիմնական ձև են գործադրում:

Առաջինն այն է, երբ միգրանտը փորձում է ներկայացնել իր ինքնությունը շեշտադրելով էթնիկական կամ կրոնական խմբին իր պատկանելությունը:

Երկրորդ դեպքում, ինքնությունը փորձ է արվում ներկայացնել սեփական անհատականության և կարողությունների ցուցադրման միջոցով:

Սկզբից շատ դժվար էր: Իրենք մի քիչ շատ փակ էին: Ճիշտն ասած, իրենց էլ մեղադրելու չէ, որովհետև ընդեղ մեր ազգը մենակ չի: Օտար ազգերը շատ անշնորհ բաներ են անում: Դրա համար ավստրիացիները մեզանից ոնց որ հոգնած և զգված են: Ես իրանց /ավստրիացիներին/ հիմա լրիվ հասկանում եմ: Էն ժամանակ վիրավորվում էի, ասում էի թող նախ անհատ ճանաչեն, չընդհանրացնեն: Ու էտպես նրանք սկզբից իմ հանդեպ էլ մի տեսակ փակ էին լինում: Որ ասում էի հայ եմ, արդեն մի տեսակ էին լինում: Բայց շփվելուց հետո շատ ընկերանում էինք: Մինչև հիմա էլ, ասենք, շփում ունեմ հետները:

Կին, 33 տարեկան,
ք.Երևան, Ավստրիա (Գրաց)

Սկզբունքորեն տարբեր նշված երկու եղանակները ձևավորում են ինքնության ներկայացման պրակտիկաների տարբերությո-

յուն: Տարածված է որպես հայ և քրիստոնյա ներկայանալը, քանի որ քրիստոնյա լինելու հանգամանքը որոշ միջավայրերում ձևավորում է ավելի դրական վերաբերմունք: Դա հատկապես կարևորվում է մահմեդական երկրներից գաղթած միգրանտներից տարբերվելու առումով: Դրա հիմնական պատճառն այն է, որ նպաստում է իրենց հանդեպ միջավայրի վերաբերմունքի փոփոխությանը, դարձնելով այն համեմատաբար ավելի բարյացակամ: Հարցմանը մասնակացած միգրանտներից շատերի հավաստմամբ մահմեդական երկրներից եկածների հանդեպ Ռուսաստանում և որոշ եվրոպական հասարակություններում առկա է ոչ բարյացակամ վերաբերմունք, ինչն արտաքին ֆիզիկական նմանության պատճառով հաճախ նաև տարածվում է հայերի վրա:

Ունեցել եմ մի քիչ հոգեբանական խնդիր իմ արտաքինի հետ կապված: Արևելյան տեսք ունենալու պատճառով Եվրոպայում ինձ հայի տեղ չէին դնում: Ջգում էի, որ մարդիկ մի քիչ վախվորած են նայում կանգառում ինձ, հավանաբար, արաբ միգրանտի հետ շփոթելով: Մի անգամ երբ մոտեցա կանգառին, նկատեցի, որ մի կին նստարանին դրած պայուսակը հապշտապ վերցրեց ձեռքը: Ոչ ոք չի պատկերացնում, որ ես գերմանական գրականություն ավելի լավ գիտեմ, քան Գերմանիայի 70 տոկոսը: Ոչ ոք իմ դեմքից դա չի կարող կարդալ: Էդ առումով ես նեղանալու իրավունք չունեմ: Ես ակամա էդ խտրականությանը ենթարկվում էի: Եթե իրենք իմանում էին, որ դու հայ ես մի փոքր փոխվում էին: Հայի հետ կապված էդ առաջնային խնդիրը քրիստոնեությունն է և եվրոպացին արդեն դրական է տրամադրվում: Կրոնը կարևոր դեր է խաղում: Երբ, որ ասում էի հայ եմ. միանգամից զգում էի, որ ինչ-որ բան փոխվեց: Իմ փորձից ելնելով, կարող եմ ասել, որ եվրոպացու համար իրոք դա դեր է

*խաղում: Եթե դու քրիստոնյա ես, ինքը քո նկատմամբ
ավելի դրական է տրամադրված:*

Տղամարդ, 30 տարեկան,
ք.Երևան/Գերմանիա (Ենա)

Ազգային միջոցով իրենց ինքնությունը ներկայացնել ցանկացողները առաջին հերթին փորձում են գտնել այլ հայերի, ինտեգրվել նրանց միջավայրին, իսկ հետո նաև այդ խմբի միջոցով ներկայանալ ընդունող հասարակության այլ շրջանակներին: Այս ճանապարհն ընտրած անհատներն իրենց ինքնությունը սովորաբար ներկայացնում են որպես խմբի անդամ: Նրանց այս մոտեցումը արտացոլվում է այնպիսի արտաքին ցուցիչների մեջ, ինչպիսիք են օրինակ հագուստը և ոճականության այլ բաղադրիչները, ժամանցի ձևը, տոնական միջոցառումներին մասնակցությունը, հանրային միջավայրերում ցուցաբերվող վարքը, ընդունող հասարակության հետ փոխհարաբերվելու ձևը: Այս մոտեցման ներկայացուցիչները շատ ավելի հաճախ մեկուսանում են ընդունող հասարակությունից և աշխատում են հնարավորինս քիչ երևալ հանրային վայրերում, խուսափում են տեղացիների հետ աշխույժ շփումներից և այլն: Նրանք ավելի ներփակվում են իրենց խմբի մեջ:

Հետաքրքիր է, որ այն միգրանտները, ովքեր միգրացիայի սկզբնական շրջանում ինտեգրվել են էթնիկ խմբային միջավայրերին, սակայն հետագայում, երբ իրենց անհատական հետաքրքրություններն իրացնելու նպատակով ցանկացել են տարանջատվել խմբից, ենթարկվել են քննադատության: Այդ առումով, շատ դիպուկ է միգրանտներից մեկի այն նկատառումը, որ հայկական միջավայրում անհատականության ներկայացման պրակտիկաները չէին խրախուսվում և գերադասությունը տրվում էր ազգայինին:

*Բնդիվիդուալ շփումներ չէին ստացվում և սովորաբար
յունը՝ ավելի շատ ազգային հողի վրա էր ձևավորվում,
քան՝ անհատական: Իսկ անհատական հետաքրքրությո-*

*յունների վրա ավելի շատ այլազգիների հետ էի շփվում,
քան՝ հայերի:*

Տղամարդ, 28 տարեկան,
Երևան/ ԱՄՆ (Միջիգան)

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ աշխատանքային սեզոնային միգրանտների մեջ, իրենց ինքնության ներկայացմանն ու իրացմանն ուղղված *անհատական* պրակտիկաներ տարածված չեն: Պատճառները տարբեր են: Նախ, այն որ սեզոնային միգրացիայի հիմնական նպատակը արագ, մի քանի ամսվա ընթացքում Հայաստանում մնացած ընտանիքի կարիքների բավարարմանն ուղղված գումար վաստակելն է, այլ՝ ոչ թե այդ հասարակությունում հաստատվելը, մշտական աշխատանք ձգելն ու առաջ գնալը: Դրա համար, որոշ միգրանտների համար հանրային միջավայրերում իրենց ինքնությունը ներկայացնելը նույնիսկ ցանկալի չի համարվել: Ավելին, այս միգրանտների մեջ ավելի գերիշխող է ընդունող հասարակությունից մեկուսանալու ձգտումը, որպեսզի խուսափեն բարդություններից ու կոնֆլիկտներից: Մյուս կարևոր պատճառն այն է, որ սեզոնային միգրանտներն իրենց զգալով ժամանակավոր բնակիչներ, առանձնապես մոտիվացված չեն ընդունող հասարակությունում հատուկ կարգավիճակ ձևավորելու հարցով: Նրանք բավարարվում են գործատուների ու ընդունող հասարակության կողմից իրենց տրվող արդեն պատրաստի կարգավիճակով: Այդ պատճառով, ինքնության ձևակերպումով ու ներկայացմամբ հատուկ չեն զբաղվում:

Բոլորովին այլ է պատկերը հիմնավորվելու նպատակով կամ երկարատև աշխատանքի մեկնածների և ուսանող միգրանտների մոտ: Այստեղ նկատելի են ինքնության ձևակերպման ու ներկայացման ինչպես խմբային, այնպես էլ անհատական մոտեցումները: Ինքնության ներկայացման ձևերի տարբերությունը առաջին հերթին պայմանավորված է միգրանտի անձով, որում կարևոր դեր է խաղում հատկապես անձի հաբիթուսը: Խմբային արժեքներ ունե-

ցողները տարբերակվում են ընդունող հանրությից, կրելով հատկապես էթնիկ ազգայինը շեշտադրող ցուցիչներ: Միգրանտների այս խմբի մոտ նկատելի է մեկուսացման երկու մարտավարություն: Առաջինը բնորոշ է գլխավորապես աշխատանքային սեզոնային միգրանտներին: Դա այն է, երբ անհատը հիմնականում մեկուսանում է ընդունող հասարակությունից, ներփակվում ինքն իր մեջ և շփվում գլխավորապես իր հետ Հայաստանից սեզոնային միգրացիայի եկած համերկրացի ընկերների ու բարեկամների հետ: Երկրորդ տիպի մարտավարությունը ավելի հաճախ հանդիպում է երկարատև կամ ուսանող միգրանտների միջավայրում: Նրանց մոտ մեկուսացումը դրսևորվում է հաղորդակցման շրջանակը տվյալ բնակավայրում հայկական համայնքի ներկայացուցիչներով սահմանափակելով: Իսկ եթե հայկական համայնք չկա, ապա փորձում են կապեր հաստատել նախկին ԽՍՀՄ երկրների միգրանտների հետ:

Անհատակենտրոն արժեհամակարգին գերադասություն տվողներն ավելի քիչ են առնչվում հայկական համայնքի հետ: Նրանց ինքնության ներկայացման համար ազգայինը չի գերակայում անհատականին: Այնպես չէ, որ այն անտեսվում է: Այն կարևորվում է, կազմելով նրա անհատական ինքնության բաղադրիչներից մեկը: Սակայն, որպես ինքնությունը ներկայացնող միջոց, ամենից առաջնայինը չէ: Նրանց ինքնության ներկայացման պրակտիկաները ուղղված են իրենց անձնական ունակությունների ու հատկանիշների ցուցադրմանն ու իրացմանը: Ընդունող հասարակությունն այս առումով նրանք համարում են նպաստավոր միջավայրը, քանի որ այն գերծ է էթնիկ մշակութային կաշկանդող ստերեոտիպերից, որոնք միշտ փորձում են անհատին ենթակայության մեջ պահել առօրեականության խմբային պրակտիկաներից ու ռճականությունից: Այս առումով, անհատակենտրոն մոտեցում ունեցողները գերադասում են ներկայացնել իրենց և իրացվել նոր պրակտիկաների ու փոխհարաբերությունների միջոցով: Հատկանշական

է, որ Հայաստան վերադառնալուց հետո գերազանցապես անհատակենտրոն մոտեցում ունեցածները հատուկ նշում են անհատականի նկատմամբ խմբայինի ճնշող ներկայությունը:

Անմիջապես, որ օդանավակայանում իջա, ասեցին հլը սրա մազերը: Դա բարի գալուստն էր:

Տղամարդ, 26 տարեկան,
ք.Երևան/Անգլիա(Լոնդոն)

Մեզ մոտ, ասենք, թեկուզ միատեսակ հագնվելով ճնշում են մեր անհատականությունը դրսևորելը: Բոլորը միատեսակ են, նեյտրալ:

Տղամարդ, 32 տարեկան,
ք.Երևան/Ֆրանսիա (Փարիզ)

1.5. Կարգավիճակի ձևավորման ու իրացման պրակտիկաները

Կարգավիճակի ձևավորումը միգրանտների կյանքում առանցքային դեր ունեցող խնդիրներից է: Խոսքն այստեղ ոչ միայն իրավական կարգավիճակին է վերաբերում, այլ, ընդհանրապես, հասարակական կյանքում ունեցածին: Վերջինս ավելի լայն հասկացություն է ու ներառում է նաև իրավական կարգավիճակը: Կարգավիճակ ասելով, կոնկրետ այս տեքստում նկատի է առնվում մարդու կողմից կյանքում ընտրած դիրքը, որտեղից նա նայում է կյանքին, իմաստավորում այն, դնում իր առջև նպատակներ, ձևավորում դրանց իրականացմանն ուղղված պրակտիկաներ ու ռեպրեզենտացնում իր համար նշանակալից իմաստներ պարունակող պրակտիկաները իր համար նախընտրելի տեղերում: Պրակտիկաների ռեպրեզենտացումը գլխավորապես ուղղված է լինում նպատակների իրացմանը և կարգավիճակի վերարտադրությանը: Այն, որ մարդն ընտրում է միգրացիայի պրակտիկան, նույնպես կապված է նրա կարգավիճակի ու կարգավիճակը վերարտադրելու ձգտման հետ: Եթե տղամարդը ապրում է հայկական պահպանո-

ղական, պատրիարխալ բնույթի համայնքում, ապա նրա համար կարևոր նշանային գործառույթ ունի ընտանիքի կենսապահովումն արժանավայել կերպով ապահովողի, կերակրողի և հոր դերը: Եթե նա իր այդ դերը լավ չկատարի, ապա մեծ է ռիսկը, որ կկորցնի հարգանքն իր միջավայրում: Հարգանքը կարևոր է, քանի որ դրա միջոցով մարդիկ ցույց են տալիս, որ տվյալ անհատի կարգավիճակն իրենց համար ընդունելի է: Այդ պատճառով էլ միջավայրի հարգանքը անհատի կարգավիճակը պայմանավորող կարևոր գործոնի դեր է ստանում: Կարգավիճակը միգրանտի համար կարևոր է միջավայրում իր դիրքը պահպանելու համար, քանի որ այդ դիրքը թույլ է տալիս նրան իրացնելու իր համար կենսական նշանակություն ունեցող պրակտիկաները: Այդ պատճառով էլ գյուղական համայնքներից կամ մարզային քաղաքներից, որտեղ մարդիկ ճանաչում են միմյանց անձնապես, միգրացիայի դիմող տղամարդիկ վերադարձից հետո կարևոր նշանակություն են տալիս ոչ միայն ընտանիքի նյութական բարեկեցությանը, այլ նաև իրենց համար նշանակալի՝ հասարակական միջավայրերում հասարակայնորեն ճանաչելի ցուցիչների միջոցով դրա (բարեկեցության) ներկայացմանը: Այն իրականացվում է ավտոմեքենայի, տան կահույքի և կահկարասու, ընտանիքի անդամների հագուստի, ոսկե զարդերի, և այլ նյութական արժեքների ցուցադրման միջոցով:

Այսինքն, միգրանտի համար միգրացիայի դիմելու կարևոր խնդիրներից մեկը վերադարձից հետո իր կարգավիճակի պահպանումն ու բարձրացումն է, ինչը հնարավոր է դառնում միգրացիայի ընթացքում որոշակի ֆինանսական, սոցիալական ու մշակութային կապիտալի ձեռք բերման և այն Հայաստանում կյանքի տարբեր ոլորտներում շրջանառության մեջ ներդնելու շնորհիվ: Այդ պատճառով մեզ համար կարգավիճակի հետ կապված կարևոր հետազոտական խնդիրներից մեկը ոչ միայն վերադարձից հետո, այլև միգրացիայի ընթացքում կարգավիճակի ձևավորմանն ու իրացմանն ուղղված պրակտիկաների ուսումնասիրությունն է: Այս

խնդիրը կարևոր ենք համարել նաև այն պատճառով, որ կարգավիճակի ձևավորման գործընթացում միգրանտը ստիպված է եղել այս կամ այն չափով առնչվել ընդունող հասարակությանը կամ հակառակը՝ խուսափել, ինչի հետևանքում նա յուրացրել է որոշ նոր պրակտիկաներ, որոնք ազդել են նաև միգրանտի վարքագծի վրա Հայաստան նրա վերադարձից հետո:

Միգրացիայի վայրում կարգավիճակի ձևավորման ու իրացման պրակտիկաները միգրանտների մոտ միանման չեն: Դրանք տարբերվում են ըստ միգրացիայի նպատակի, ընդունող երկրի, միգրանտի հաբիթուսի և մի շարք այլ գործոնների:

Կարգավիճակի ձևավորման ու իրացման պրակտիկաների առումով աշխատանքային սեզոնային միգրանտները հատուկ խումբ են կազմում: Նրանց մեջ քիչ չեն այնպիսիները, ում մասնակցությունը սեփական կարգավիճակի ձևավորմանը ծայրահեղ կրավորական բնույթ ունի: Շատերն ի սկզբանե հակված են եղել ընդունել այն կարգավիճակը, որը միգրացիայի ընթացքում նրանց առաջարկվել է գործատուի կողմից: Նման պահվածքը նրանք բացատրում են իրենց առջև դրված նպատակի տեսանկյունից: Նրանց գլխավոր խնդիրը բավարար գումար վաստակելն ու Հայաստան վերադառնալն է: Այսինքն, հիմնական նպատակը ֆինանսական բնույթի է: Այլ խնդիրներ կապված սոցիալական ու մշակութային կապիտալների վերարտադրության հետ հետազոտության ընթացքում չեն գրանցվել: Նրանք չեն ունեցել նաև ընդունող հասարակության հետ կապված երկարատև նպատակներ: Դրանով էլ բացատրում են այդ հասարակությունում հատուկ կարգավիճակ ձևավորելու հանդեպ շահագրգռվածության թուլությունը: Իրենց լիովին բավարարել է այն կարգավիճակը, ինչը հնարավորություն է տվել վաստակել անհրաժեշտ գումարի չափը, կարգավիճակի ձևավորման համար առանց ավելորդ փող ու ժամանակ ծախսելու:

Ձևակերպումները գործ տվողն է արել: Գրանցել են իրենց ծանոթներից մեկի տան վրա: Նորմալ աշխատել

եմ: Բայց առանց աշխատանքի թույլտվության: Որովհետև ում տարածքում աշխատել եմ, ինքը որն է խնդիր կազմակերպությունների հետ չի ունեցել, իրեն չեն ստուգել: Ժամանակավոր գրանցումն արել եմ գուտ քաղաք դուրս գալու հնարավորությունների համար:

Տղամարդ, 46 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան (Սոչի)

Այս օրինակում, հստակ երևում է, որ միգրանտն իր կարգավիճակի ձևավորումը պայմանավորում է ոչ թե իր անհրաժեշտությամբ, այլ՝ ուրիշի, տվյալ դեպքում՝ գործատուի: Նկատելի է նաև, որ նրա համար միգրացիայի վայրի կարգավիճակն էական չէ: Այն ձևակերպվում է ուրիշի կողմից և ինքն իրացնում է հիմնականում այն պրակտիկաները, որոնք բխում են գործատուի կողմից իրեն տրվող կարգավիճակից: Այլ կարգավիճակ, որը դուրս է նրա նպատակներից և կարող է փոխել նրա պրակտիկաները, համարվել է ոչ պետքական: Հետազոտությանը մասնակցած միգրանտների հիմնական մասի մտքով նման բան անգամ չի էլ անցնել: Նրանց հիմնական մասն ընդունող երկրում իրենց ապրելն ու աշխատելը լեզվիկացնող նվազագույն քայլերի անգամ չի դիմել, չհամարելով դա անհրաժեշտ: Իսկ որոշներն էլ համակերպվել են այն կարգավիճակին ու պրակտիկաներին, որը նրանց համար հարմար է համարել գործատուն: Այդ պատճառով էլ այս միգրանտները հիմնականում ապրել են ընդունող հասարակությունից մեկուսացված:

Եղբորս հետ գնում էիք գործի, հետ գալիս: Ես էնքան էլ չէի շփվում ռուսների հետ: Գործի, գործից տուն ու մեր հայ տղեքի հետ: Դե շատ ման գալու ժամանակ էլ չկար: Հետո դոկումենտի հարցն էլ դժվարություններ էր ստեղծում:

Տղամարդ, 32 տարեկան,
ք. Երևան/Ռուսաստան (Նովոռոսիյսկ)

Հետաքրքիր է, որ այն աշխատանքային միգրանտները, ում նպատակները չեն սահմանափակվում միայն ընտանիքի գոյատև-

ման խնդիրների բավարարմամբ և ունեն ավելի հեռանկարային նպատակադրումներ, ինչպես ասենք ընդունող հասարակությունում մշտական բնակություն հաստատելն է կամ կայուն ու երկարատև վաստակի աղբյուր գտնելը, ավելի մտահոգ ու հետևողական են մոտենում ընդունող հասարակությունում իրենց կարգավիճակի ձևավորման գործին: Նախ, նրանք իրենք են ձգտում լուծել իրենց կարգավիճակի հետ կապված իրավական խնդիրները: Երկրորդ, աշխատում են ձևավորել սոցիալական կապիտալի այնպիսի կարևոր բաղկացուցիչներ, ինչպիսիք են վստահությունը, միջավայրի հարգանքը, օրինակելիությունը, օրինապահությունը, և այլն:

Դե եթե ուզում ես այնտեղ ապրել, աշխատել, պետք է օրինականությանը հետևես: Միգրանտը պետք է ապահովի իր օրինականությունը, փաստաթղթային կողմը: Դե ես գնացել եմ և առաջին հերթին զբաղվել եմ էդ հարցերով: Գնացել եմ ամուսնուս հետ: Եթե դու էդ օրինականությունը չապահովես, իրավունք չունես էդ երկրում մնալու ու իմաստ էլ չունի, որովհետև լուրջ գործեր չես կարող իրականացնել, քեզ ազատ չես կարող զգալ:

Կին, 50 տարեկան,
ք.Երևան/Ռուսաստան (Մոսկվա)

Իհարկե, Ռուսաստանում, կարգավիճակի հետ կապված բարությունները պայմանավորված են ոչ միայն այդ հարցին միգրանտների ունեցած մոտեցմամբ, այլև այդ երկրում առկա բյուրոկրատական ու կոռուպցիոն բարդություններով, որոնք հաղթահարելու փորձերը ոչ միշտ է, որ միգրանտների մոտ հաջողությամբ են պսակվել:

Որոշեցինք ինքնուրույն գրանցում անել: Տեղացի միջնորդ հայտնվեց, ով խոստացավ ամեն ինչ նորմալ անել: Փողերը տվեցինք՝ ամեն մեկս վեց հազար ռուբլի: Ստիպված էինք դա անել, որովհետև անընդհատ խնդիրներ էինք ունենում: Ոստիկանությունն էր ճանապարհը փակում, փաստաթղթերն էր ստուգում, հետո քաղաք դուրս գալու խնդիրներ կային: Մի խոսքով բարդություններ շատ կա-

*յին ու մենք ռիսկի դիմեցինք, գրանցումն ինքնուրույն
արեցինք: Հետո պարզվեց, որ կեղծ գրանցում են արել:*

Տղամարդ, 50 տարեկան,
ք.Գյումրի/Ռուսաստան (Արտյոմ)

Այսինքն, ընդունող հասարակությունում աշխատանքային սեզոնային միգրանտների կարգավիճակը կանխորոշված է ոչ միայն նրանց գործատուների, այլև, լայն առումով, հասարակության կողմից: Հայտնի են այս միգրանտների կարգավիճակը շեշտադրող բազմաթիվ արտահայտություններ, որոնք լայնորեն գործածական են ռուսաստանյան հասարակությունում որպես միգրանտի կարգավիճակը ցուցող պիտակավորումներ: Ըստ մեր հետազոտական տվյալների դրանցից առավել տարածվածներն են «սևեր», «սև հետույքավորներ», «կովկասցիներ», «խաչիկներ» և այլն: Սա նույնպես, լուրջ գործոն է հանդիսանում ընդունող հասարակությունում կարգավիճակի ձևավորմանն ուղղված պրակտիկաների տեսանկյունից:

Սեզոնային միգրանտների գերակշիռ մասի համար *կարգավիճակի ձևավորման պրակտիկաները* հանգում են այլոց կողմից իրենց համար սահմանված կարգավիճակը առանց առանձնակի դիմադրության ընդունելուն: Որպես կանոն, հարցմանը մասնակցած սեզոնային աշխատանքային միգրանտները չեն ձգտում բարձր տեղ գրավել ընդունող հասարակության կարգավիճակային սանդղակում, չեն գործադրում դրան ուղղված նույնիսկ նվազագույն անհատական ջանքեր, բավարարվում են սեզոնային միգրանտին տրված *լուսանցքային կարգավիճակով* և դրանից բխող պրակտիկաներով:

Կարելի է ասել, որ նրանք, ովքեր ընդունում են այլոց կողմից իրենց համար ձևավորած կարգավիճակը, հարմարեցնելով դա իրենց նպատակին, իրացնում են գլխավորապես այլոց նախատեսած պրակտիկաները և նվազագույնս են մասնակցում իրենց կարգավիճակի վերաձևակերպմանը, դրա բովանդակության ու ձևի վե-

րասահմանմանը: Այս առումով հատկապես կրավորական բնույթ է ստանում ընդունող հասարակության հանրային պրակտիկաներին միգրանտի մասնակցությունը: Այդ պատճառով սեզոնային միգրանտի կարգավիճակը տարիներ շարունակ Ռուսաստանում վերարտադրվում է նույնականորեն: Սակայն, նրանք, ովքեր մասնակցում են իրենց կարգավիճակի ձևավորման ու ձևակերպման գործին, ավելի աշխույժ ու ներգրավված են ընդունող հասարակության հանրային պրակտիկաներում: Նրանք նաև գործուն են անհատական պրակտիկաների իրացման առումով: Նկատենք, սակայն, որքան էլ որ անհատական գործոնը կարևոր է, նույնքան կարևոր է նաև Պ.Բուրդիոյի կողմից սահմանված *դաշտի* դերը (Bourdieu 1984. 226-230; Bourdieu 1993a. 38-43; Bourdieu 1993. 72-77): Կարևոր է, թե ինչ դաշտում է դիրքավորվում միգրանտը իր ստատուսը ձևավորելու ու իրացնելու առումով: Մի դեպքում դաշտը շինհրապարակն է, մյուս դեպքում՝ համալսարանը: Մի դեպքում, դա ռուսական բնակավայրն է, որտեղ տեղացի-միգրանտ պրակտիկաները թելադրում են տեղացիները, որոնցում ազդեցիկ դեր ունեն ազգայնական տեքստերն ու պրակտիկաները: Մյուս դեպքում դաշտը արևմտյան քաղաքն է, որտեղ օտարը ձևակերպված է ոչ թե որպես թշնամի, այլ՝ իրենցից տարբեր, բայց՝ հավասար: Ռուսաստանում միգրանտը որակվում է որպես կապիտալի վերաբաշխման գործընթացում տեղացիների հնարավոր վաստակը յուրացնող և սոցիալական հողի վրա նրանց թշնամին ու դժբախտությունների պատճառներից մեկը, իսկ՝ արևմտյան համալսարանում սովորող ուսանողը համարվում է, որպես համալսարանին վարձավճար տվող, տվյալ երկիր ֆինանսական ներդրում անող կարևոր մարդ, ում հանդեպ հասարակությունը պետք է ունենա հարգալից վերաբերմունք: Այսինքն, դաշտն ազդում է միգրանտի կարգավիճակի վրա: Սակայն, մյուս կողմից, շատ կարևոր են նաև կարգավիճակի ձևակերպման և ընդունող հասարակությունում այն ներկայացնելուն ուղղված պրակտիկաները: Նրանք, ովքեր հարմար-

վում են ընդունող հասարակությունում իրենց տրված կարգավիճակին, հիմնականում բնութագրվում են հասարակական աշխույժ շփումներից խուսափողական վարքով: Նրանք, ովքեր փորձում են իրենք ձևակերպել իրենց կարգավիճակը, վարքագծով ավելի համարժեք են միջավայրին: Փորձում են չխուսափել հանրային վայրեր դուրս գալուց, խնամքով են վերաբերվում իրենց արտաքին տեսքին, որպեսզի միջավայրը նույնպես հարգալից լինի:

Իրանք չեն տարբերե, չգիտեն, թուրք ես, վրացի ես, իրանց համար սաղ սև են: Մնացածն էլ քեզնից է կախված: Եթե քեզի համեստ պահես, շնորհքով, պրոբլեմ չկա: Մաքուր, սափրված պտի եղնիս: Եթե տեսան, որ գործից հետո մաքուր ես, լավ կվերաբերվին:

Տղամարդ, 55 տարեկան,
ք.Գյումրի/Ռուսաստան (Սանկտ Պետերբուրգ)

Հետազոտական որակական տվյալները թույլ են տալիս ենթադրելու, որ ընդունող երկրում միգրանտի կողմից իր կարգավիճակի ձևավորման ու իրացման մարտավարությունը փոխկապված է Հայաստանում նույն խնդրի հանդեպ նրա մարտավարության հետ: Վերադարձած միգրանտների համար, անկախ նրանց ունեցած տարբերություններից, կարևոր է իրենց կարգավիճակի վերարտադրությունը Հայաստանում: Կախված այն բանից, թե ինչն են նրանք համարում կարևոր, ինչն են արժևորում և, ընդհանրապես, ինչպիսի նպատակներ ունեն կյանքում, տարբերվում են նաև նրանց միգրացիոն նպատակները, այդ նպատակների իրացմանը ծառայող կարգավիճակներն ու պրակտիկաները:

Պատահական չէ, որ նրանք, ում համար միգրացիայի գլխավոր նպատակը Հայաստանում ընտանիքի բարօրությունն ապահովելն է, կարևորում են հենց Հայաստանում ունեցած իրենց կարգավիճակի պահպանումը: Հետևաբար և, կարելի է ասել, որ միգրացիան այս խմբի համար դարձել է մի յուրատեսակ միջոց Հա-

յաստանի իրենց բնակավայրում կարգավիճակը պահպանելու ու վերաբրտադրելու համար:

Կարևորն էն է, որ մարդ կարողանա ընտանիքը նորմալ պահել, որ իր ընտանիքը ոչ մի բանի կարիք չունենա: Բայց Հայաստանի էսօրվա վիճակից ելնելով ըդիկ հնարավոր չէ: Գյանքում իմ ամենակարևոր նպատակը ընտանիքի բարօրությունն է, իմ ծնողների, մոտիկների, ընկերների լավ եղնելը: Ես գուզեմ որ, ում որ կսիրեմ, կհարգեմ, իրանք լավ եղնին: Բայց էս պայմաններում Գյումրիում եղ ամենին հասնել հնարավոր չէ: Բայց Ռուսաստան հնարավոր է: Աշխատելու միջոցով: Եթե ըստեղ հնարավորություն չկա, ուրեմն պոտի էրթամ Ռուսաստան աշխատիմ, էտ գամ:

Տղամարդ, 35 տարեկան,
բ. Գյումրի/Ռուսաստան (Մանկտ Պետերբուրգ)

Նման մոտեցումն այն գլխավոր պատճառներից մեկն է, որ սեզոնային միգրանտների մոտ ընդունող երկրում կարգավիճակի վերաբերյալ մտահոգություններ չի առաջացնում: Համարելով դա ժամանակավոր մի բան, նրանք պատրաստ են սեզոնային միգրացիայի ժամանակահատվածում անտեսել կարգավիճակի հետ կապված խնդիրները և զոհաբերել դա հայրենիքում իր ընտանիքի բարօրության ու կարգավիճակի պահպանման խնդրին: Այդ պատճառով էլ ընդունող հասարակությունում կարգավիճակի ձևավորմանն ու իրացմանն ուղղված հատուկ պրակտիկաներ սեզոնային միգրանտների մոտ առանձնապես չեն հանդիպում: Սեզոնային միգրացիայի մի քանի ամսվա ընթացքում նրանք հարմարվում են իրենց ժամանակավոր կարգավիճակին, որպեսզի դրա ձևավորման վրա ժամանակ ու էներգիա չկորցնեն և իրացնում են իրենց համար արդեն ստանդարտ դարձած ժամանակավոր պրակտիկաները: Իսկ տուն վերադարձից հետո թողնում այդ ամենը միգրացիայի վայրում՝ իրենց հետ Հայաստան բերելով ոչ շատ նշանակալի պրակտիկաներ:

Այն միգրանտները, ում համար ընտանիքը նույնպես կարող է համարվել կարևոր արժեք, իսկ գումար վաստակելը կարևոր խնդիր, սակայն գերակա նպատակն իր կամ ընտանիքի անդամների անձի զարգացումն ու իրացումն է, կարգավիճակի ձևավորմանն ուղղված ձգտումների ու պրակտիկաների առումով արմատակա-նորեն տարբերվում են աշխատանքային սեգոնային միգրանտներից: Նրանց համար կարևոր խնդիր է դառնում, նախ, *հնարավորինս իրատեսորեն ճանաչել ընդունող հասարակությունը և դառնալ ճանաչելի, որպես անհատ*: Այս տեսանկյունից կարգավիճակային ցուցիչի նշանակություն է ստանում միգրանտի անձնական հատկանիշներն ու շնորհները: Այս պատճառով, նրա պրակտիկաներն ուղղվում են իր անձի զարգացմանը և միջավայրում ներկայացմանը:

Ես մտածում էի, որ իրենց երկիրն է և իրենք ոչ մի բանով ինձ պարտավոր չեն: Ես եկել եմ ճիգեր գործադրելու, որ իրենց երկրում հաջողության հասնեմ, ոչ թե որպես հայ կամ եսիմ ինչ, այլ որպես մարդ, հետաքրքիր մարդ: Ինչ որ ժամանակ հետո ես իմ նպատակին հասա ու էդ տարվանից, օրինակ, ունեմ ֆրանսիացի ընկերներ, որ մինչև հիմա իմ մոտիկ ընկերներն են: Գիտեք, այդ 10 տարվա մեջ եղել են տարբեր փուլեր: Կորած-մոլորած ուսանողի փուլը: Հետո եղել է ստաժորի փուլը: Հետո եղել է մասնագիտական փուլը: Շատ լավ աշխատանք եմ ունեցել: Ավարտելուց հետո բիզնես խորհրդատու եմ դարձել շատ լավ ամերիկյան խորհրդատվական ֆիրմայում: Ապրում էի Փարիզի կենտրոնում, շատ մեծ բնակարան էի վերցրել՝ 100 քառակուսի մետր: Ոչ թե, որովհետև կարիք ունեի, այլ՝ որ էդպես հետաքրքիր էր: Մեծ փարթիկներ էի անում: Միրուն պատշգամբ ունեի, Նոտերդամի վրա էր դուրս գալիս:

Տղամարդ, 32 տարեկան,
ք.Երևան/Ֆրանսիա(Փարիզ)

Միգրանտների այս խումբը, ի տարբերություն սեզոնային միգրանտների, կապիտալի վերարտադրության հարցին շատ ավելի բազմազան ու ռազմավարական մոտեցում ունի: Սեզոնային միգրանտներին կարելի է բնութագրել, որպես մարդիկ ովքեր ապրում են գոյատևման ռազմավարության ռեժիմում: Նրանց հիմնական մասը չունի զարգացման սեփական ռազմավարություն: Այդ պատճառով էլ իրացնում են ուրիշի կողմից իրենց համար նախատեսած պրակտիկաները: Պրակտիկաների այս տիպը Միշել դե Մերտոն անվանում է մարտավարություններ: Նրանք, ովքեր չունեն սեփական ռազմավարություն, իրացնում են այլոց ռազմավարություններին ծառայող մարտավարություններ (Certeau 1984. 35): Այս տեսանկյունից, սեզոնային միգրանտները նման են վերջիններին: Այդ պատճառով, նրանք միգրացիայի ընթացքում անհատական աճ գրեթե չեն ունենում: Իրենց անձի զարգացումը, որպես խնդիր, ձևակերպված չէ: Իսկ նրանց համար, ովքեր ունեն զարգացմանն ուղղված ռազմավարություն, միգրացիան ծառայում է որպես մարտավարական քայլ՝ ուղղված ոչ միայն տնտեսական, այլև՝ սոցիալական ու մշակութային կապիտալների վերարտադրությանը: Այդ պատճառով, նրանք ձգտում են ընդունող հասարակությունում ձևավորել այնպիսի կարգավիճակ, որը թույլ կտա իրականացնել մշակութային ու սոցիալական կապիտալների աճողական (դինամիկ) վերարտադրություն: Նման դեպքերում սոցիալական կապիտալի վերարտադրության համար առանցքային է դառնում մշակութային կապիտալի աճը: Խոսքն այս դեպքում վերաբերում է մշակութային կապիտալի վերաբերյալ Պ. Բուրդիեյի ձևակերպմանը, ըստ որի մշակութային կապիտալը դիտարկվում է որպես մարդու ունակությունների ու հմտությունների այնպիսի ռեսուրս, որը կարելի է ներդնել հանրային կյանքի տարբեր ոլորտներում (Bourdieu 1986. 47): Հայտնի է, որ կապիտալի շրջանառությունը ձևավորում է ավելացված արժեք: Մշակութային կապիտալն այս իմաստով բացառություն չի կազմում: Մշակութային կապի-

տալը շրջանառության մեջ դնելու ու ավելացված արժեք ստանալու համար, անհրաժեշտ է ձևավորել համապատասխան կարգավիճակ: Մշակութային կապիտալի շրջանառությունից ստացված ավելացված արժեքը կարող է փոխարկվել տնտեսական կամ սոցիալական կապիտալի և նպաստել կարգավիճակի բարձրացմանը: Ահա թե ինչու, այն միգրանտները, ում համար միգրացիայի դիմելու նպատակը սեփական անձի զարգացումը և կարողությունների ու հմտությունների աճն է, այսինքն մշակութային կապիտալի աճողական վերարտադրությունը, ավելի մտահոգ են ընդունող հասարակությունում կարգավիճակ ձևավորելու խնդրով ու իրենց պրակտիկաներում դրան կարևոր տեղ են տալիս:

Ինչ որ պահ կա, որ անցնում ես, արդեն դու էդ երկրում ինտեգրվել ես: Արդեն դրանից հետո դու դառնում ես էդ երկրի քաղաքացի: Անձնագրով կարող է դեռ չես դարձել, բայց գաղափարով ու քո ունեցած պոտենցիալով դառնում ես: Ու եթե ինքդ բավական ճիգեր ես գործադրել, որ էդ երկրում ինչ որ բանի հասնես, հաստատ հասնում ես: Ու երբ ստատուսդ փոխում ես, աշխատում, էլ առանձնակի խնդիրներ չունես: Էդ արդեն կախված է քո ունակություններից, ինտելեկտի մակարդակից, դիպլոմներից ու մնացած շնորհքներից:

Տղամարդ, 47 տարեկան,
ք.Գյումրի/Գերմանիա (Մայնի Ֆրանկֆուրտ)

Որպես անհատականություն ձգտելով գտնել իր տեղն ընդունող հասարակությունում, միգրանտն իր մեջ զարգացնում է անհատական նոր հատկանիշներ ու որակներ, որոնք դառնում են նրա էության անբաժանելի մասն ու հետագայում նրա հետ տեղափոխվում Հայաստան: Դա փոխում է վերադարձածի վարքագիծը, կարգավիճակի ընկալումը և այն հասարակայնորեն ներկայացնող ցուցիչները՝ խմբայինից շեշտադրումը տեղափոխելով անհատականի վրա:

Մինչև սա, մի քանի տարի առաջ կասեի տուն կառուցեմ, երեխա ունենամ, ծառ տնկեմ: Բայց հիմա փոխվել է, էլ այդպես չի: Հիմա կցանկանայի ապրել այնպիսի միջավայրում, որ ինձ համար հետաքրքիր է և որին ես հետաքրքիր եմ և իմ համար հեշ կարևոր չէ, կլինի դա իմ բարեկամների մեջ, թե՞ ուրիշ մարդկանց:

Տղամարդ, 28 տարեկան,
ք. Երևան, ԱՄՆ (Միչիգան)

Ստատուսի ձևավորմանն ուղղված անհատական քայլերի մեջ միգրանտների այս խմբի որոշ ներկայացուցիչների մոտ կարևոր տեղ են ստանում նաև հանրային պրակտիկաները: Դրանք կարևոր են, որպեսզի ընդունող հասարակությունում նա ներկայանա որպես բաց, վստահելի, օրինական, պատասխանատու և հանրային առումով այլ նշանակալի հատկանիշներով: Ահա նման միգրանտներն են, որ կրելով անհատական փոփոխություններ, վերադառնալուց հետո հանրային տարածքներում իրացվելու պահանջից ելնելով, ստիպված են լինում ձգտել ձևավորելու այնպիսի նոր կարգավիճակներ, որոնք կնպաստեն դրան: Հաճախ նաև այս պատճառով, այդ անհատականություններն իրացնում են Հայաստանում իրենց կարգավիճակի վերափոխմանն ուղղված նոր պրակտիկաներ, որոնք ընդգրկում են նաև հանրային ու քաղաքացիական բաղադրիչներ:

Ես արդեն լավ կրթություն ունեի, կապեր, այնպես որ դրսից ինձ առանձնապես բան պետք չէր ու ճիշտ համարեցի վերադառնալ Հայաստան: Որպես քաղաքացի արժանապատվությունս բարձրացավ: Ես ինձ ավելի շատ պատկերացնում եմ ակտիվիզմի ոլորտում: Կապվում եմ տարբեր միջազգային ակտիվիստական խմբերի հետ, իրար հետ փորձի փոխանակում ենք անում, ու այդ ամենը փորձում եմ տարածել: Շատ են նպատակները: Կոնկրետ նպատակ ունեմ ստեղծել մի մեծ քաղաքացիական շարժում, որտեղ հավաքված

կլինեն երիտասարդ սերնդի ներկայացուցիչները Հայաստանի ապագայի վերաբերյալ իրենց հստակ տեսլականով, մեզ համար միասնական պլան ու մեր գաղափարները իրագործելու հստակ քայլեր մշակենք:

Կին, 30 տարեկան,
ք.Երևան/Անգլիա (Լոնդոն)

Ըստ կարգավիճակի ձևավորման ու իրացման պրակտիկաների առանձնահատկության՝ մեր հարցմանը մասնակցած միգրանտների մեջ առանձնանում է երկու խումբ: Առաջին, երբ կարգավիճակի ձևավորման գործում ընդունում են կրավորական կեցվածք և գլխավոր դերակատարությունը թողնում ուրիշներին: Հիմնականում այդ դերակատարությունը նեղ առումով իրականացնում է գործատուն, իսկ լայն առումով՝ ընդունող հասարակությունը: Կարգավիճակի ձևավորման ու վերարտադրմանն ուղղված գործունեությունում գերիշխում են ընդունող հասարակությունից մեկուսանալու պրակտիկաները: Մովորաբար, կարգավիճակի ձևավորմանն ու իրացմանն ուղղված նման վարքագիծը բնորոշ է այն միգրանտներին, ում համար միգրացիան դիտվում է որպես ժամանակավոր մարտավարական քայլ, ուղղված ընտանիքի կենսապահովման համար նյութական միջոցներ հայթայթելուն: Իսկ վերադարձից հետո կարգավիճակի ձևավորմանն ու վերարտադրությանն ուղղված պրակտիկաները կապված են հիմնականում նյութական բարեկեցություն նշող արժեքների ցուցադրման հետ:

Երկրորդ խմբին կարելի է դասել նրանց, ովքեր իրենց կարգավիճակի ձևավորման ու իրացման գլխավոր դերակատարն են: Իսկ կարգավիճակի վերարտադրման գործում գերիշխում է ընդունող հասարակության հետ աշխույժ շփումների պրակտիկաները: Նման անհատներին բնորոշ է իրենց կարգավիճակի աճին ուղղված ռազմավարական նպատակադրումները: Դրանցում առանցքային տեղ է տրվում ոչ միայն տնտեսական, այլև՝ մշակութային ու սոցիալական կապիտալների ձեռք բերման ու վերարտադրության

խնդիրներին: Նշված դեպքերում ռազմավարական գլխավոր խնդիրը համարվում է սեփական անձի զարգացումը և դրան նպաստող ունակությունների, կարողությունների ու հմտությունների ձեռք բերումը: Իսկ Հայաստան վերադառնալուց հետո նրանց համար կարևոր խնդիր է դառնում սեփական անհատականության, ունակությունների ու հմտությունների իրացման միջոցով կարգավիճակի ձևավորումն ու վերարտադրությունը: Դա, սովորաբար, իրականացվում է ոչ միայն նյութական, այլև՝ վերացական այնպիսի արժեքների տարածման միջոցով, ինչպիսիք են գիտելիքը, հանդուրժողականությունը, օրինապաշտությունը, իրավունքը, քաղաքացիությունը և այլն: Այդ պատճառով էլ նրանց վարքում նկատելի են իրենց անհատականությունը ներկայացնող արժեքների իրացման համար համարժեք հանրային նոր հարթակների ձևավորմանն ուղղված պրակտիկաների կիրառում, այդ թվում նաև՝ քաղաքացիական պրակտիկաների:

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿՐՈՒՄ

Միգրանտների առօրեականությունը հնարավոր է ճանաչել հիմնականում նրանց պրակտիկաների միջոցով: Հետազոտական նպատակներով առանձնացվել են պրակտիկաների հետևյալ տեսակները. ա. տարածական, բ. ժամանակի կազմակերպման և ժամանցային, գ. ուտեստի, դ. հագուստի, ե. ընդունող հասարակության հետ փոխհարաբերվելու և հանրային ու քաղաքացիական պրակտիկաներ:

2.1. Տարածական պրակտիկաները

Կարելի է առանձնացնել միգրանտների տարածական պրակտիկաների մի քանի տեսակ: Նախ, դրանք վերաբերում են միգրացիայի ընթացքում բնակության տարածքի լուծման խնդրին: Երկրորդ կարևոր հարցը վերաբերում է ընդունող հասարակությունում միգրանտի տեղաշարժման պրակտիկաներին, ներառյալ տեղաշարժման հետ կապված սահմանափակումներն ու ազատության չափը:

Նշենք, որ Ռուսաստան մեկնած սեզոնային աշխատանքային միգրանտները իրենց տարածական պրակտիկաներով էականորեն տարբերվում են միգրանտական մյուս խմբերից, այդ թվում նաև Ռուսաստան երկարատև միգրացիայի մեկնածներից: Սեզոնային միգրանտները հիմնականում տեղավորվում են հենց աշխատավայրում իրենց հատկացված բանվորական կացարաններում կամ

էլ ծանոթ-բարեկամների մոտ: Շատ հազվադեպ է, որ նրանք հասուն կենսական են վարձում և հետամուտ են լինում կացարանի բարեկեցության խնդրին:

Գնացել եմ ընդեղ, ծանոթներ շատ կային, զանգել եմ, գործը գտել եմ, գնացել եմ խոսացել ենք, գործի տեղն էլ մնացել ենք: Դաչեն սարքած է եղել, հայաթի մեջը դռնիկ է եղել, սկզբից դռնիկում ենք ապրել: Հետո սվադն էրել ենք, տաքությունն ապահովել ենք, մտել ենք մի սենյակ, սկսել ենք ըտեղ մնալը ու հետո էլ գործը էնել: Լրիվ բրիգադով ընդեղ կմնայինք:

Տղամարդ, 38 տարեկան,
ք.Գյումրի/Ռուսաստան(Մոսկվա)

Այս միգրանտներից շատերն իրենք նույնիսկ չեն էլ մասնակցել բնակության տեղի ընտրության խնդրին: Նրանց փոխարեն այդ հարցը լուծել է գործատուն կամ որևէ մեկ այլ պատասխանատու:

Դա գործը դասավորողն է արել: Այս տարի մենք քնել ենք իր օֆիսում: Ամեն հարմարություն կար, լողանալու պայմաններով, քնելու նորմալ տեղով: Վեց տեղանոց սենյակ է եղել, որտեղ քնել ենք այստեղից իմ հետ եկած խոպանչիներով: Դրանք բոլորն էլ իմ ախպերներն ու հորեղբոր տղաներն են եղել, ում հետ միասին գնացել ենք աշխատելու:

Տղամարդ, 28 տարեկան,
գ. Մարմաշեն/Ռուսաստան (Յակուտսկ)

Մի քանի տարի է ես մեկնում եմ Մոսկվա, աշխատում եմ կահույքագործական արտադրամասում: Բրիգադի տղերքով ապրում ենք հենց արտադրամասի օֆիսային տարածքում գտնվող մի քանի սենյակում: Պայմանները լավագույնը չեն, բայց տաքության, սննդի ու մաքրության համար ամեն անհրաժեշտ բան կա:

Տղամարդ, 46 տարեկան,
Երևան/Ռուսաստան (Մոսկվա)

Միգրացիայի ընթացքում տարածքի կազմակերպումը աշխատանքային սեգոնային միգրանտների հիմնական մասի համար ավելի շատ խմբային բնույթ է կրել, քան՝ անհատական: Նրանցից շատերը չեն էլ մտածել հատուկ անձնական տարածք ունենալու մասին: Դա նրանց համար կարևոր չի եղել, քանի որ նպատակը ոչ թե հարմարավետություն ձևավորելն է եղել, այլ՝ ընտանիքի համար անհրաժեշտ գումար վաստակելը: Իսկ տեղի հարցին մոտեցել են որպես շատ ժամանակավոր մի բանի:

Բնակության պայմանները հանրակացարանային պայմաններ են. երեքը-չորսի վրա սենյակ, ութ մարդ: Չորս երկհարկանի մահճակալ, ահա քեզ պայմանները: Մանկտարական պայմանները համեմատաբար տանելի էին. տաք ջուր կար, բաղնիք կար, տանելի էր:

Տղամարդ, 50 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան (Արտյոմ)

Ոմանց համար կացարանը բացի գիշերելու նպատակից, որևէ այլ գործառույթ չի կրել: Այնքան որ քնելու տեղը հարմար լիներ և նվազագույն հիգիենիկ պայմաններն առկա լինեին:

Այլ է երկարատև միգրանտների դեպքում: Նրանք հիմնականում ապրել են վարձակալած բնակարաններում: Նրանց համար, կացարանը եղել է ավելին, քան պարզապես գիշերելու տեղ: Իրենց վարձակալած բնակարաններում նրանց կյանքը առօրեականության ամբողջականության առումով առանձնապես չի տարբերվել տեղացիներից: Այս առումով, առանձնապես կարևոր չէ, թե որ երկրում են ապրում միգրանտները՝ Ռուսաստանում, թե արևմտյան որևէ երկրում: Այս միգրանտները տարբերվում են իրենց նպատակով ու ռազմավարությամբ: Սրանք, հաճախ նպատակ են ունեցել շարունակաբար մնալու ու աշխատելու հյուրընկալող երկրում: Ոմանք նույնիսկ ընդունող երկրում հիմնական բնակության հաստատելու խնդիր են դրել: Այս միգրանտներն իրենք են ընտրել

իրենց բնակվելու տեղը, ինչպես բնակարանային պայմանների, այնպես էլ թաղամասի առումով:

Դե սկզբնականում մնացել եմ ընկերուհուս տանը: Մի շաբաթ օգնելը դրսի համար շատ մեծ բան է: Թեպետ իրենք դեմ էին, որ մենք դուրս գայինք, բայց ճարել ենք մեր բնակարանը, մուծումը կատարել ենք, պայմաններն էլ արտակարգ էին, վերանորոգված, հարմարություններով:

Կին, 50 տարեկան,
ք. Երևան/Ռուսաստան (Մոսկվա)

Բնակարանի հետ կապված պրակտիկաները տարբեր են նաև ուսանող միգրանտների մոտ: Նրանք էլ, մեծամասամբ, բնակվել են վարձակալած տներում կամ համալսարանների հատկացրած սենյակներում: Նրանց հիմնական մասն ապրել է առանձին կամ ուսանող ընկերների հետ: Հատկանշական է, որ նույնիսկ մի քանի հոգու հետ մեկ սենյակում ապրելը, ինքնուրույն ապրելու փորձառություն չունեցող այս երիտասարդների համար համարվում է կարևոր, քանի որ շատերն այդ ժամանակ առաջին անգամ են առիթ ունեցել ծնողներից առանձին ապրելու:

Մենակ էի ապրում իմ սենյակում, բայց հարկում տասնվեց հոգի կար: Ամեն մեկն իր սենյակն ուներ, ուղղակի խոհանոցը բոլորն իրար հետ էին օգտագործում:

Կին, 28 տարեկան,
ք. Երևան/Շվեդիա (Ստոքհոլմ)

Ես մենակ էի ապրում, որ բավականին լուրջ փորձ է բոլոր առումներով: Որ մենակ ես ապրում, մանավանդ, ինչ-որ անձանոթ քաղաքում ու շատ բաներ ինքդ ես լուծում, էդ Հայաստանից շատ էր տարբեր: Շատ պուճուրիկ սենյակ էր, մեջը մի հատ աթոռ, մի հատ ուսանողական սեղան, քնելու տեղ, զգաստապահարան: Լոգարանն ու զուգարանն առանձին էին: Բազմոց կար, որտեղ պարզվում է, հնարավոր էր նաև քնել: Մի հատ մեծ

հայելի կար, պատին էլ կպցրած էին դարակներ, որի մեջ գրքեր կարելի էր շարել:

Կին, 24 տարեկան,
ք. Երևան/ԱՄՆ (Մինեսոտա)

Միգրացիայի ընթացքում մյուս կարևոր տարածական պրակտիկան կապված է հյուրնկալող երկրում ազատ տեղաշաժվելու հնարավորության հետ: Այս դեպքում սեզոնային միգրանտները նույնպես խիստ տարբեր են եղել մյուսներից: Նրանց հիմնական մասն, իրենց իսկ խոստովանությամբ, շատ հազվադեպ է դուրս եկել աշխատավայրի տարածքից: Նախ, դուրս չեն եկել, որովհետև դրա անհրաժեշտությունը չեն զգացել, նաև չեն ունեցել աշխատանքից ազատ ժամանակ: Իրենց հիմնական մտահոգությունը աշխատելն է եղել ու ազատ ժամանակ ֆիզիկապես հանգստանալը, ուժերը վերականգնելը:

Գործից հետո հիմնականում հոգնած գալիս էինք, տնային կալանքի նման մի բան էր, տանը նստած հանգրստանում էինք, հեռուստացույց նայում: Քաղաք երբեմն երբեմն էինք դուրս գալիս: Դուրս գալիս ինչ անեինք: Մոտիկ խանութ կար, սիգարետ ու մանր-մուկ բաներն ընտելից էինք առնում:

Տղամարդ, 50 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան (Արտյոմ)

Ռուսաստան մեկնող սեզոնային աշխատանքային միգրանտների համար ընդունող հասարակությունում ազատ տեղաշարժման գլխավոր խոչընդոտներից մեկն էլ համարվում է նրանց հանդեպ հասարակության անբարյացակամությունը ու տարբեր կարգի հնարավոր վտանգները: Ռուսաստանում, սեզոնային միգրանտի կարգավիճակն արդեն իսկ պատճառ է, որը սահմանափակում է նրա տեղաշարժման ազատությունը: Նրան տրվող ցածր կամ լուսանցքային կարգավիճակը ձևավորել է ստորադասության զգացողություն և վախ ընդունող հասարակության հանդեպ:

Ստեղ լավ ա, ազատ ման ես գալիս: Իսկ ընդեղ միշտ պասսպորտդ ջեբդ ա: Որ մի երկու օր էլ գրանցումդ ուշ ես անում, մի քիչ միլիցեքից ես վախում, որ չբռնեն, տուգանք մուծես: Ընդեղ շատ ու փորձանքը շատ ա: Խմածներ շատ են լինում: Մանավանդ ռուսներ: Սներին էլ, որ չեն սիրում, գալիս կանում են, որ կռիվ սարքեն: Իսկ կռվից հետո արդեն ընկնում ես շատ ու փորձանքի մեջ: Շատ ու փորձանք էն ա, որ միլիցեքը գալիս, հավաքում տանում են: Պետք ա դրանցից զգույշ լինես, իսկ ստեղ տենց բան չկա: Ամառվա կեսին մեր շենքերի հայտնում կարում ենք ազատ գարեջուր խմենք, բան: Իսկ ընդեղ մի քիչ վտանգավոր ա:

Տղամարդ, 32 տարեկան,
ք. Երևան/Ռուսաստան(Իստրա)

Կարգավիճակի պատճառով ձևավորված սահմանափակումները թույլ չեն տվել շատերին լիարժեք հաղորդակցման մեջ մտնել ընդունող հասարակության հետ, ճանաչել դրանում առկա նշանակալի կարգավիճակները, դրանց հիերարխիան: Լիարժեք հաղորդակցման հնարավորության դեպքում նա կարող էր իր վարքագծային պրակտիկաները կազմակերպել նշանակալի կարգավիճակներին արձագանքելու սկզբունքով, որն էլ կարող է մեծացնել այդ հիերարխիայում շարժունությունն ունենալու նրա շանսը: *Կարգավիճակային հիերարխիայում շարժունության սահմանափակումները ուղղակիորեն ազդում է ընդունող հասարակությունում միգրանտի տեղաշարժման հնարավորությունների ու պրակտիկաների վրա:* Նման կապի հիմնական պատճառն այն է, որ տարածությունում ֆիզիկապես տեղաշարժվելու պրակտիկաները փոխկապված են տվյալ հասարակության սոցիալական տարածության արտադրության գործընթացներին միգրանտի ներգրավման և որպես դրանից (ներգրավումից) ստացվող ավելացված արժեք, սեփական կարգավիճակի փոփոխության հետ: Կարգավիճակի փոփոխության հնարավորությունը առաջանում է, քանի որ տարածականորեն

տեղաշարժման ազատությունը մեծացնում է միգրանտի ինտեգրման հնարավորությունը: Տարածականորեն տեղաշարժման ազատությունը և ինտենսիվությունը միգրանտի համար ընդլայնում է ընդունող հասարակությունը իր համար ճանաչելի դարձնելու նշանների տարապատկերը: Ընդունող հասարակությունում հագուստի, ոճականության, ժամանցի, վարվեցողության և այլ պրակտիկաների տարածված նշանային ցուցիչների յուրացումը կարող է մեծացնել այդ նշանների դաշտում ավելի ճկուն ձևով դիրքավորվելու ունակությունը:

Հատկանշական է, որ ի տարբերություն աշխատանքային սեգոնային միգրանտների, երկարատև ու ուսանող միգրանտները տեղաշարժման առումով ավելի ազատ են ու ճկուն:

Քաղաքն ինձ շատ էր դուր գալիս: Մի քանի այլ քաղաքներում էլ եմ եղել, բայց Պորտլենդն ուրիշ էր: Նույնիսկ տրանսպորտում շատ հաճելի էր, մարդիկ ինչ որ հետաքրքիր բաներ էին պատմում, ուրախ մթնոլորտ էր տիրում: Հետո էլ իջնելուց շնորհակալություն էին հայտնում վարորդին, այդպիսի ջերմ մթնոլորտի համար: Հիմնականում մենակ էի քաղաքով շրջում: Գնում էի ֆոտոյի դասերին, համ էլ քաղաքն ուսումնասիրում: Գնում էի արվեստի թանգարան: Նստում էի ավտոբուս, գնում այլ թաղամասեր: Օրինակ, մի թաղամաս կար, որը կամուրջների ու վարդերի թաղամաս էր կոչվում: Մի խոսքով ամեն ինչ շատ գեղեցիկ էր, հավես էր: Հետո էլ մարդիկ շատ պատրաստակամ ու ուրախ էին, երբ ինչ որ հարց էիր տալիս, ինչ որ վայրի տեղ հարցնում:

Կին, 21 տարեկան,
ք. Երևան/ԱՄՆ (Պորտլենդ)

Նրանք չեն ունեցել տեղաշարժման ազատությունը սահմանափակող սեգոնային միգրանտների համար բնորոշ կարգավիճակային խոչընդոտները, ինչի շնորհիվ կարողացել են առավել ինտեգրված կերպով ապրել ընդունող հասարակությանում: Տեղա-

շարժման ազատության հետ կապված տարածական պրակտիկաների տարբերությունը թույլ է տվել այդ միգրանտներին առնչվել ընդունող հասարակության առօրեականության համարյա բոլոր ուղորտների պրակտիկաներին ու նաև փոխառել որոշները:

Շատ էի գնում ոռք համերգների և օպերա: Դրանք ինձ համար ինդիկատորներ են երկիրը գնահատելու համար: Ինձ համար ոռքը մտածելակերպ ա, ու ոռք լսող մարդիկ ունեն նման հետաքրքրություններ, մտածելակերպ ու ինձ հաճելի էր գտնվել այդպիսի միջավայրում: Այնտեղ փորձում էի ինձ նման շատ համախոհներ գտնել: Գնում էի նաև թանգարաններ: Շատ ճանապարհորդել եմ Եվրոպայով: Հա, բացի սովորելուց, որպես ուսանողներ, կարող էինք նաև աշխատել: Ասենք, ծաղիկների խանութում մաքրել կամ այլ տեղեր: Ու վարձատրվում էինք այդպիսի գործերի համար ժամը մոտ 12 դոլար:

Կին, 30 տարեկան,
ք.Երևան, Անգլիա (Լոնդոն)

Տեղաշարժման առումով պրակտիկաները բազմազան են եղել հատկապես արևմուտքում միգրացիոն փորձառություն ունեցածների մոտ: Նրանք կարողացել են շրջել ու առնչվել ընդունող հասարակության առօրեականությանը ոչ միայն իրենց բնակության վայրում, այլ նաև ազատ շրջագայել են տարբեր քաղաքներում ու նույնիսկ հարևան երկրներում: Ի դեպ, ոմանք այդ փորձառությունն անցել են օգտվելով ճամփորդելու ամենաբազմազան ձևերից, սկսած ինքնաթիռից, վերջացրած ավտոմեքենայով ու հեծանիվով ճամփորդելը:

Ամեն տեղ եղել եմ: Չիկագոյում, Նյու-Յորքում, Լոս-Անջելեսում: Նույնիսկ Այասկայում եմ եղել: Իմ նահանգի կողքն ինչքան պուճուր ու մեծ քաղաք կա եղել եմ՝ Ֆլորիդայում, Դիսնեյ Լենդում, ամեն տեղ եղել եմ: Ու էդ ամեն ինչը արել եմ Նոր տարվա երեք շաբաթների ըն-

թացքում, երբ ազատ էինք: Ես առել էի հնարավորին շատ տոմսեր ու ամեն տեղ գնում էի:

Կին, 24 տարեկան,
ք. Երևան, ԱՄՆ (Միներսոտա)

Տեղաշարժման ազատությունը թույլ է տվել ընդունող հասարակության մնացած անդամների նման, հավասարապես օգտվել ու յուրացնել տեղաշարժման տարբեր պրակտիկաներ:

Ուսանողներին ճանապարհորդելու տոմսը զեղջվում էր: Այնտեղ կան շատ էժան ինքնաթիռներ Լոնդոնից Փարիզ հետադարձով՝ 10 ֆունտ ստեռլինգ էր: Չորս անգամ գնացել եմ Փարիզ, վերադարձել Լոնդոն: 20 դոլարով էլ թոշել եմ Բարսելոնա վերադարձել Լոնդոն:

Կին, 30 տարեկան,
ք. Երևան, Անգլիա (Լոնդոն)

Ուշագրավ է, որ մի դեպքում, միգրանտի ու ընդունող հասարակության միջև տարածությունը ձեռք է բերում սահմանային բովանդակություն և սահմանը, երբեմն, ունի ընդգծված ֆիզիկական բնույթ: Իսկ մյուս դեպքում՝ այն ֆիզիկական ու տարածական չէ և գտնվում է պրակտիկաների հատույթում: Կոնկրետ սեզոնային աշխատանքային միգրանտների դեպքում, ովքեր, ինչպես նշվեց, հաճախ բնակվում են իրենց աշխատանքի վայրում կամ հասարակությունից մեկուսացված պայմաններում, ընդունող հասարակության հետ ֆիզիկական սահմանը անցնում է իր կացարանի ու շինհրապարակի եզրով: Ամեն ինչ, ինչ դրա ներսում է, սահմանի մի կողմում է, իսկ մնացածը՝ սահմանից դուրս: Ներսում նա իրեն ապահով է զգում, իսկ դրսում՝ վտանգված: Նույնը կարելի է ասել նաև փախստականների ճամբարներում բնակվելու փորձ ունեցող միգրանտների համար:

Ամփոփելով սեզոնային աշխատանքային, տնական և ուսանող միգրանտների տարածական պրակտիկաներին վերաբերող հետազոտության այս հատվածը, կարելի է ասել, որ որոշ միգ-

րանտներ ընդունող հասարակությունում իրենց տեղը որոշակիացնելու համար դիմում են մեկուսանալու և սահմանազատվելու պրակտիկաներին: Իսկ ոմանք ընդհակառակը՝ ձգտում են հնարավորինս շատ հաղորդակցվել և իրենց տեղաշարժման միջոցով ավելի շատ տարածքներ սոցիալականացնել: Նման միգրանտների համար ամեն մի նոր տարածական փորձառություն ավելի ու ավելի է մեծացնում ընդունող հասարակությունում սեփական տեղի ճշտորոշման դինամիկան: Իսկ վերջինս էլ ազդում և պայմանավորում է ընդունող հասարակությունում միգրանտի կողմից նոր պրակտիկաների ձևավորմանը կամ փոխառմանը: Եվ այն միգրանտները, ովքեր ավելի քիչ են տեղաշարժվում և այնպիսի տեղ են ընտրում ապրելու համար, որը չի նպաստում սոցիալական միջավայրի հետ հաղորդակցման բազմազան փորձառությունների ձևավորմանը, նրանք նաև ավելի փակ են մնում նորույթների ու փոփոխությունների առջև: Այս միգրանտներին առավելագույնս հաջողվում է ձևավորել ոչ մեծ ֆինանսական կապիտալ, որը նրանց թույլ է տալիս ծառայեցնել իրենց ընտանիքների գոյատևման խնդիրների լուծմանը: Սակայն, նրանց չի հաջողվում ունենալ սոցիալական ու մշակութային կապիտալների դինամիկ աճ և զարգացում, ինչն ավելի հաճախ հանդիպում է երկարատև և ուսանող միգրատների մոտ:

2.2. Ժամանակի և ժամանցի կազմակերպում

Առօրեկանությունը հաճախ պայմանավորվում է ժամանակի կազմակերպման պրակտիկաներով: Դրանցում կարելի է առանձնացնել ժամանակի կազմակերպումն ըստ ժամային բլոկների, դիմիների ու ժամանակացույցերի:

Կարևոր է նաև ժամանակի տնօրինման խնդիրը: Օրինակ, սեզոնային աշխատանքային միգրանտների տարբերությունը մյուսներից, առաջին հերթին, վերաբերում է ժամանակի տնօրինմանը: Սեզոնային աշխատանքային միգրանտների մոտ հաճախ է

հանդիպում այն պրակտիկան, երբ նրանք թույլ են տվել որպեսզի իրենց ժամանակը լիովին տնօրինվի գործատուի կողմից: Գործատուների կողմից սահմանված աշխատանքային ռիթմը, փաստացիորեն, պայմանավորել է ոչ միայն սեզոնային աշխատանքային միգրանտի աշխատանքային, այլև՝ ոչ աշխատանքային ժամերը, ժամանակ չթողնելով միգրանտին անձնական կամ հանրային կյանքին տրամադրելու համար: Մեր հետազոտությանը մասնակցած սեզոնային միգրանտներից շատերի մոտ, ժամանակը կազմակերպվել է այլոց կողմից և ժամանակային ռիթմերը ծառայել են գլխավորապես աշխատանքային պրակտիկաների իրացմանը: Սովորաբար, շատ միգրանտների մոտ աշխատանքային օրը տևել է տասներկու և ավելի ժամ: Աշխատանքային օրն այնպես է կազմակերպվել, որ միգրանտներից շատերին օրվա մեջ ազատ մնացած ժամերը հազիվ բավականեցրել է ընթրիքին, մի փոքր երեկոյան հանգստին ու քնին:

Հաճախ հանդիպող պրակտիկաներից է եղել նաև երկու շաբաթը մեկ միայն մի կիրակի օր հանգստանալը: Այսինքն միգրացիոն ողջ սեզոնում, նման գրաֆիկով աշխատող մարդիկ յուրաքանչյուր 14 օրը միայն մեկ հանգստյան օր են ունեցել:

Առավոտվա ութից մինչև երեկոյան ութը-ինընը աշխատել ենք: Ընդամիջում ունեցել ենք: Սնունդը հրավիրող կողմն էր կազմակերպում: Մեծ ճաշարան կար, մեր համար պատրաստում էին, ընդամիջմանը գնում ուտում էինք ու դուրս գալիս: Ես երբ աշխատանքս կատարել վերջացրել եմ, եկել հացս կերել, պառկել հանգստացել եմ, որ առավոտյան նորից նույն գրաֆիկով աշխատեմ: Երկու շաբաթը մեկ էինք կիրակի անում: Մի կիրակին մերն էր, մյուսը իրենք, գործը տվողինը:

Տղամարդ, 28 տարեկան,
գ.Մարմաշեն, /Ռուսաստան(Յակուտսկ)

Հազվադեպ են հանգստացել նաև տոն օրերին: Ողջ սեզոնում նշվել են մեկ-երկու տոնական օր: Եթե փորձենք ներկայացնել սեզոնային միգրանտի ժամանակի կազմակերպումն ըստ ժամանակային բլոկների (Zarubavel 1993. 9), ապա տարվա մեջ կարելի է առանձնացնել երկու մեծ ժամանակային բլոկ, որոնցից մեկը միգրացիոն ժամանակահատվածն է, մյուսը՝ վերադարձից հետո ընտանիքում գտնվելը: Միգրացիայի ժամանակահատվածում առանձնանում են երկու ավելի փոքր ժամանակային բլոկներ՝ աշխատանքային և հանգստյան: Աշխատանքային ժամանակային բլոկը ընդգրկել է շաբաթվա համարյա բոլոր օրերը: Հանգստացել են հիմնականում կիրակի օրերին, կամ էլ՝ երկու շաբաթը մեկ: Միջինը օրեկան տասներկու ժամ հատկացվել է աշխատանքին, մոտ մեկ ժամ ընթրիքին, մեկ-երկու ժամ ընթրիքից հետո հանգստին և մնացածը քնելուն:

Աշխատանքից հետո, ոչ մի բան չենք արել: Ուշ ժամի ենք գալիս, ցանկություն ու ուժ էլ չկա, զբաղվում ենք մեր ընթրիքով, մի քիչ թերթ կարդում, հեռուստացույց նայում ու քնում:

Տղամարդ, 40 տարեկան,
ք. Գյումրի/ Ռուսաստան(Միջուրինսկ)

Աշխատանքային ժամերը. ժամը յոթից ճաշարան, հետո արդեն ավտոբուսը կուգար ամեն մարդու կտաներ իրա տեղը: Արեղի ժամին կբերեին, հաց կուտեիր, կհանգստանայիր, հետո նորից գործի, մինչև ժամը յոթը: Երկար աշխատել էղել է երբ ասֆալտի պահ է էղել: Բայց ես չեմ որոշե, թե ինչ պտի էնեմ: Ըղիկ մաստերն ու պրարաբն են որոշել:

Տղամարդ, 25 տարեկան,
գ.Մարմաշեն/Ռուսաստան (Արխանգելսկ)

Հատկանշական է, որ սեզոնային աշխատանքային միգրանտների ժամանակային դիֆուզիան ծրագրավորվել են ոչ թե իրենց, այլ՝ գործատուների կողմից: Ժամանակացույցը ընդհանուր է

եղել տվյալ շինարարական օբյեկտում աշխատող բոլոր միգրանտների համար: Այն վերաբերել է միայն միգրանտներին և էականորեն տարբերվել ընդունող հասարակության անդամների համար գործող աշխատանքի կազմակերպման ժամանակացուցային պրակտիկաներից: Դա կարելի է համարել այն պատճառներից մեկը, որ սեզոնային միգրանտները առավել օտարվածն են եղել ընդունող հասարակությունից և նրա առօրեականության պրակտիկաներից:

Ինչ վերաբերում է երկարատև միգրանտներին, ապա նրանցից շատերը ապրել են ոչ թե մեկուսի, զուտ միգրանտական միջավայրին հատուկ, այլ՝ ընդունող հասարակության այս կամ այն հատվածին բնորոշ ժամանակացույցով ու դարձել ընդունված ժամանակային պրակտիկաների կրողը:

Մովորական օրը Գերմանիայում ակամա պլանավորում էի ամեն ինչ: Որովհետև եթե չես պլանավորում, դառնում ես outside: Կյանքի ռեյսերից դուրս ես գալիս, որովհետև դու չես կարող ապրել մարդկանց հետ, որոնց մոտ ամեն ինչն է պլանավորած: Առավոտը շուտ համալսարան էի գնում: 7.30 դասերը սկսվում էին: Աշխատանքային օրս ավարտվում էր ժամը երկուսին: Դրանից հետո մի երեք ժամ գնում էի գրադարան: Ակամա օրը պլանավորվում էր, ամեն ինչ ընկնում էր իր տեղը: Շաբաթ, կիրակին իհարկե ազատ է, քո տրամադրության տակ: Ամեն ուրբաթ օրը ես նստում էի գնացք ու գնում եվրոպական քաղաքներ՝ Փարիզ, Վենետիկ կամ ասենք Պրահա:

Տղամարդ, 30 տարեկան,
ք. Երևան, Գերմանիա (Եևա)

Պատահական չէ, որ նրանցից ոմանք Հայաստան վերադառնալուց հետո մի որոշ ժամանակ շարունակել են ժամանակային այդ պրակտիկաները, մինչև որ սկսել են շարժվել տեղական ժամանակացույցերով:

Երբ եկա Հայաստան, ամեն ինչ նույնն էր շարունակվում: Աշխատանքի մեջ էլի նույն պունկտուալությունը: Փորձում էի deadline-երով աշխատել: Բայց անցան ամիսներ ու երբ տեսնում ես կոլեգաներդ ուշ են գալիս աշխատանքի, հետո ռեսուրսներն ամբողջովին չեն օգտագործում էդ գործի մեջ ու ըստենց վիրուսի նման ինձ էլ վարակեց նորից: Էդքան իմ վրա աշխատանքս ինչ-որ մի տեղ ընկավ ջուրը:

Տղամարդ, 26 տարեկան,
ք.Երևան, Անգլիա (Լոնդոն)

Իր «Թաքնված ուրիշներ» գրքում Է. Ջարուբավելը գրում է, որ ժամանակացույցերն ունեն հանրային նշանակություն և դրանք հասարակության մեջ պրակտիկաների ընդհանրություն, սինխրոնացում և սոցիալական համերաշխություն ձևավորող գործոններ են (Zarubavel 1985. 64): Եթե այս տեսանկյունից դիտարկենք միգրանտների ժամանակի կազմակերպմանը վերաբերող որակական տվյալները, ապա կարելի է ասել, որ սեզոնային աշխատանքային միգրանտների ժամանակացուցային պրակտիկաները նպաստել են միմիանց հետ նրանց համախմբվելուն: Սակայն, քանի որ նրանց առօրեականությունը կարգավորող ժամանակացույցերն ու ժամանային ուղիքները արմատականորեն տարբեր են եղել ընդունող հասարակությունում ընդունվածից, ապա դժվար է այն նպաստավոր գործոն համարել միգրանտների ու ընդունող հասարակության միջև ընդհանրությունների ձևավորման համար:

Ինչ վերաբերում է երկարատև միգրանտներին, ապա նրանց ժամանակը կառուցված չի եղել այնպես, ինչպես սեզոնային միգրանտների մոտ: Ինչպես վերը նկատել ենք արդեն, վերջիններիս ժամանակի հիմնական մասը բաժին է ընկել աշխատանքային ժամային բլոկին: Իսկ ժամանցին ու հանգստին շատ փոքր ժամանակ է հատկացվել, ինչը թույլ չի տվել նրանց առնչվել ընդունող հասարակության առօրեականության ավելի լայն սպեկտր ընդգրկող պրակտիկաներին: Իսկ ահա երկարատև միգրանտները, բացի

աշխատանքին հատկացվող ժամանակից, ունեցել են նաև բավականաչափ ազատ ժամանակ ու հանգստյան օրեր:

Աշխատանքը ժամը վեցին էր սկսվում: Տրանսպորտի հարց չկար, առավոտից իր գրաֆիկով աշխատում էր: Շաբաթ-կիրակի չէինք աշխատում: Առավոտ ժամը վեցից մինչև ցերեկվա երկուսն անց կես էինք աշխատում՝ կես ժամ ընդմիջումով: Դե հետո հասկացանք, որ լավ ռեժիմա:

Տղամարդ, 56 տարեկան,
ք. Երևան/Չեխիա (Պրահա)

Սա հնարավորություն է տվել նրանց, մի կողմից, ժամանակային պրակտիկաների տեսանկյունից ինտեգրվել աշխատանքային, մյուս կողմից էլ, ազատ ժամանակ ունենալու շնորհիվ՝ ընդունող հասարակության այլ միջավայրերին: Նույնը վերաբերում է նաև ուսանողներին: Նրանք էլ ուսումնական գործում ունենալով հստակ ժամանակացույցեր, ունեին նաև ազատ ժամանակ, որը կազմակերպում էին ընդունող հասարակությունում ընդունված ժամանային պրակտիկաների ընդօրինակմամբ: Ժամանակի կազմակերպման այս առանձնահատկությունը նպաստում էր ուսանողական առօրեականության ժամանակացույցերի ընդհանրության հիմքի վրա ինտեգրվել ուսանողությանը, մյուս կողմից էլ հանգստի ու ժամանցի ժամանակային բլոկի առկայությունը նպաստում էր ընդունող հասարակության այլ սեգմենտների ժամանակային պրակտիկաների հետ ծանոթացմանն ու փոխառմանը: Որոշ դեպքերում ժամանակային պրակտիկաների յուրացումն այն աստիճանի զգալի է եղել, որ ազդել է ոչ միայն պարզապես միգրանտի ժամանակի կազմակերպման, այլ՝ նրա ողջ գործունեության վրա: Երբեմն նրանց կողմից այն համարվել է նույնիսկ որպես մտածողության փոփոխության վրա ազդող հիմնարար գործոն:

Իմ մոտ ամբողջ մտածողությունս է փոխվել: Ժամանակի կազմակերպումն իմ մոտ լրիվ փոխվել է, ժամանա-

կի ընկալումը: Ես իմ վրա զգացի, թե ինչ մեծ տարբերություն կա:

Կին, 29 տարեկան,
ք.Երևան/Շվեդիա (Ստոքհոլմ)

2.3. Ուտեստի հետ կապված պրակտիկաներ

Առօրեականության ուսումնասիրություններում կարևոր տեղ է տրվում ուտեստի պրակտիկաներին: Դրան անդրադարձել են առօրեականության այնպիսի հետազոտողներ, ինչպիսիք Ն. Էլիասը (Elias 2000. 87-109) և Պ. Բուրդիեն (Bourdieu 1984. 179-190): Չնայած մշակույթում ունեցած իրենց կայուն բնույթին, ուտեստի հետ կապված պրակտիկաները հաճախ նաև ենթարկվում են փոփոխությունների: Ունենալով մշակութային ընդգծված բնութագիր, ուտեստը հաճախ մարդկանց համար կատարում է նշանային գործառույթ, որի միջոցով նրանք ցուցադրում են իրենց կարգավիճակը, սոցիալական դասը, արժեհամակարգը, ոճը, նախասիրությունները կամ ազգային պատկանելությունը: Պատահական չէ, որ հաճախ ազգային խոհանոցը դառնում է միգրանտների ինքնաներկայացման ու ճանաչելի դառնալու կարևոր բաղադրիչ: Որոշ տեղերում ազգային խոհանոցների հիմքի վրա հիմնադրված ռեստորանները նպաստում են ընդունող հասարակությունում միգրանտական տվյալ հանրության ճանաչելի դառնալուն:

Ամենազարմանալին այն է, որ Վլադիվոստոկից մինչև Արտյոմ, մոտավորապես 35 կմ վրա լիքը հայկական ռեստորաններ կային՝ Արարատ, Գյումրի, Սևան, Անի:

Տղամարդ, 59 տարեկան,
ք.Գյումրի/Ռուսաստան(Վլադիվոստոկ)

Դրանք, մի կողմից, ընդունող հասարակությունում ներկայանալու, ճանաչվելու ու սեփական մշակույթը ուտեստի միջոցով տարածելու, մյուս կողմից էլ, ըստ ազգային հատկանիշի, միգրանտներին իրար շուրջ համախմբվելու, շփվելու ու սոցիալականացվելու միջոց են:

Ազգային խոհանոցների կազմակերպված ձևով ներկայացումը նպաստում է նաև ընդունող հասարակության հետ մերձենալուն:

Անվիճելի է, որ միգրանտների համար ուտեստը առօրեականության կարևոր բաղադրիչներից է: Ոմանք խիստ պահպանողական են սնվելու հարցում, ոմանք էլ՝ հակառակը, ձգտում են ծանոթանալ ընդունող հասարակության կամ այլ միգրանտական հանրությունների խոհանոցին, ընդօրինակել ուրիշինը, ներկայացնել ու փոխանցել սեփականը: Մեր ուսումնասիրած միգրանտական միջավայրերում ուտեստի հետ կապված պրակտիկաները շատ տարբեր են: Միգրանտների առօրյայում ուտեստի հետ կապված պրակտիկաները կարելի է բաժանել մի քանի հիմնական խմբի. ա. սննդի կազմակերպման, բ. կերակրատեսակների և ճաշացանկի ընտրության, գ. ընդունող հասարակության ուտեստի հետ փոխհարաբերության պրակտիկաներ:

Սննդի կազմակերպման պրակտիկաները իրենց յուրահատկությամբ առանձնանում են սեզոնային աշխատանքային միգրանտների մոտ: Հանդիպում է երկու հիմնական ձև: Մի դեպքում սննդի կազմակերպման խնդիրը լուծել է գործատուն: Դա իրականացվել է միգանտների համար այդ նպատակով ճաշարանի համար հարմարեցված հատուկ տարածքում: Սա բնորոշ է հիմնականում շինարարության տարբեր բնագավառներում ընդգրկված միգրանտներին:

Առավոտվա ութից մինչև երեկոյան ութը-ինը աշխատել ենք: Ընդմիջում ունեցել ենք: Մնունդը գործատուն էր կազմակերպում: Մեծ ճաշարան կար, մեզ համար պատրաստում էին, ընդմիջմանը գնում, ուտում էինք ու դուրս գալիս: Մովորական մեր հայկական ճաշերն էինք ուտում: Խոհարարը հայ էր, հայկական ճաշեր էր եփում: Ասենք օրինակ, լոբով ապուր, մակարոնով կամ գարոխով սուպ, փլավներ, սալաթներ:

Տղամարդ, 28 տարեկան,
գ. Մարմաշեն/Ռուսաստան (Յակուտսկ)

Այս մոտեցումը սկզբունքային առումով շատ նման է սեզոնային աշխատանքային միգրանտների մեջ տարածված ժամանակի ու տարածության կազմակերպման այն պրակտիկաներին, երբ իրենք կրավորական դերում էին այն հարցերի որոշման գործում, թե որտեղ պետք է ապրեն կամ որքան պետք է աշխատեն: Նման այլ հարցերի որոշողը գործատուն էր: Ինչպես այդ, այս դեպքում նույնպես, միգրանտը գործատուի որոշումը սպառողի դերում էր:

Երկրորդ դեպքում, միգրանտներն իրենք են լուծել սննդի հարցը: Այդ նպատակով նրանք կամ հերթապահությամբ են կազմակերպել կերակուրների պատրաստման գործը, կամ էլ թե չէ իրենցից ընտրել են խոհարարական հմտություններ ունեցող մեկին և նրան գործի մի որոշ մասից ազատել, որպեսզի նա զբաղվի մյուսների համար կերակուր պատրաստելու գործով:

Մենք կերակրվում էինք մեր միջոցներով: Գնումներ էինք անում, պահեստավորում, տղաներից մեկին նշանակում խոհարար: Մենք սովոր էնք մեր հայկական կերակուրներին: Սովորել ենք ու մեզ համար ինքներս էլ պատրաստում ենք:

Տղամարդ, 40 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան (Միջուրինսկ)

Սեզոնային աշխատանքային միգրանտները հիմնականում պահպանել են հայաստանյան ճաշացանկը: Պատճառաբանությունն այն է, որ իրենք սիրում են այդ ճաշատեսակները, դրանք են համարում համեղ ու սննդարար, կամ էլ, որ իրենք սովոր են դրանց: Սնվելու պրակտիկաներում հիմնական կարևորությունը տրվել է ոչ այնքան համային նրբերանգներին, որքան ֆիզիկական ծանր աշխատանքի տեսանկյունից կերակուրի սննդարարությանը: Սակայն, որակյալ սննդի կարևորությունը ոչ միշտ է առաջնային համարվել: Որոշ սեզոնային աշխատանքային միգրանտներ սնվելու որակական կողմը չեն կարողացել պահպանել, պատճառաբա-

նելով դա իրենց բազմազբադությամբ և միգրանտական ժամանակավոր կարգավիճակով.

Սննդի կազմակերպումն, օրինակ, բարդ էր: Գործից հոգնած պիտի գաս ու սննդի հարց լուծես: Էնքան հոգնած ես, որ կարճ ու կոնկրետ մի բան պիտի անես: Մենք ի նշ կանեինք. մակարոն կամ կարտոֆլա կխաշեինք: Գիտես ինչդ է, ընտեղ նույնիսկ չես մտածե ուտելիքի դուր գալու մասին: Գիտես, որ գնացել ես կոնկրետ նպատակով, պտի հարմարվիս, գործդ է՛նես:

Տղամարդ, 35 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան (Յակուտսկ)

Նկատենք, որ, թե բանվորական ճաշարանում սնվելու և թե տանն ինքնուրույն պատրաստելու դեպքում, սնունդը կազմակերպելու պրակտիկաներն իրենց ձևով մեկուսի են եղել և չեն նպաստել ընդունող հասարակության հետ միգրանտների հաղորդակցմանը և փոխհարաբերությունների զարգացմանը:

Պատկերը տարբեր է երկարատև միգրանտների և ուսանող միգրանտների մոտ: Նախ, տարբերվում է սննդի կազմակերպման ձևերը: Բացի տան սնվելուց, տարածված ձևերից մեկն էլ մի որևէ սննդի հաստատությունում կերակրվելն է եղել, որտեղ նրանք ծանոթացել են նաև ընդունող հասարակությունում տարածված ոչ միայն տարբեր ճաշատեսակների, այլև՝ դրանց հետ կապված որոշ սովորություններին, նիստ ու կացին:

Մեզոնային աշխատանքային միգրանտներից ուսանող ու երկարատև միգրանտների գլխավոր տարբերություններից մեկն էլ սնունդը ընդունելու ձևի մեջ է: Եթե վերջիններս ճաշարանում կամ էլ թե կացարանում սնվում էին իրենց հետ աշխատանքային միգրացիայի մեկնած հայ բարեկամների կամ ընկերների հետ խմբով, ապա երկարատև միգրանտներին կամ ուսանողներին ավելի բնորոշ էր անհատական կարգով սնվելու պրակտիկան: Իրենց սննդի պրակտիկաներում նրանք ավելի հաճախ են առիթ ունեցել շփվել

ընդունող հասարակության հետ, ծանոթանալ այլ ազգերի խոհանոցների: Այս առումով սննդի խառը պրակտիկաների միջավայր կարելի է համարել հասարակական սննդի տարբեր հաստատությունները, սկսած սրճարաններից, վերջացրած ռեստորաններով:

Ուսանող միգրանտների կյանքում հանդիպող հաճախակի պրակտիկաներից է եղել ուտեստի միջոցով սեփական մշակույթը մյուսներին ճանաչելի դարձնելը, երբ նպատակը եղել է ոչ միայն պարզապես ուտելու ֆիզիկական պահանջմունքը բավարարելը, այլ ուտեստի միջոցով ուրիշներին ճանաչելի դառնալը և այլոց ճանաչելը:

Մենք այնտեղ ունեցել ենք երկրները ներկայացնելու միջոցառում: Ես պատրաստել եմ թփով տոլմա մեր ամբողջ խմբի համար: Բոլորը հավանեցին, իսկ ես մի տեսակ ինձ լավ զգացի, որ մյուսներին մեր հայկական ճաշատեսակը այդքան դուր եկավ:

Կին, 29 տարեկան,
ք.Երևան/Լեհաստան (Վրոցլավ)

Ուսանող միգրանտների համար կարևոր փոխառությունների միջավայր են ծառայել հանրակացարանների ընդհանուր խոհանոցները: Այդտեղ նրանք առիթ են ունեցել յուրացնել սննդի հետ կապված ուսանողական առօրյայում ընդունված պրակտիկաները, առնչվել տարբեր ազգերի խոհանոցներին ու ուտեստին վերաբերող սովորություններին:

Ճիշտն ասած սննդի մեջ շատ բան չէր փոխվի, եթե ես ընդհանուր խոհանոցից չօգտվեի: Հաճախ նայում էի, թե ուրիշներն ինչ էին պատրաստում ու ես էլ էի նման բաներ անում: Ես մեր ընդհանուր խոհանոցում սովորեցի ստուսներ պատրաստել: Դա ես սովորեցի մեր իտալացի ընկերներից: Խոհանոցի իմ ընկերները մակարոնը առանց ստուսների ուտելը համարում են վիրավորանք մակարոնին: Մակարոնը մենք Հայաստանում սխալ ենք պատրաստում: Այն պետք է ստուսներով ու այլ հավելյալ բաներով ուտել, համեմունքներով, պանրով: Չե-

խերից սովորեցի կնեղիկ պատրաստել: Հետո մի շվեդ տղայից սովորեցի, թե ոնց սնունդը պահել սառնարանում: Որ տաք սնունդը պետք է սառեցնել, նոր դնել սառնարան:

Կին, 29 տարեկան,
ք.Երևան/Շվեդիա(Ստոքհոլմ)

2.4. Հագուստի հետ կապված պրակտիկաները

Հետազոտական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ըստ հագուստի հետ կապված պրակտիկաների, կարելի է առանձնացնել երեք հիմնական մոտեցում: Առաջինը, երբ միգրացիայի ընթացքում և վերադարձից հետո որևէ փոփոխություն տեղի չի ունենում: Երկրորդը, երբ միգրացիայի ընթացքում մարդիկ ունենում են հագուստի որոշ բաղադրիչների փոփոխություն, սակայն վերադարձից հետո հրաժարվելով փոփոխություններից, նորից անցնում են իրենց հայաստանյան ոճին: Երրորդը նրանք են, ովքեր միգրացիայի ընթացքում կրած փոփոխությունները պահպանում են նաև միգրացիայից հետո:

Հատկապես, աշխատանքային սեզոնային միգրանտները հագուստի առումով շատ պահպանողական մոտեցում են ցուցաբերում: Օրվա հիմնական մասը, շուրջ 12 ժամ, նրանք կրում են իրենց աշխատանքային հագուստը: Իսկ հաջորդող աշխատանքային ոչ մեծ ժամանակահատվածն էլ անցկացնում են իրենց կացարաններում և շատ հազվադեպ են դուրս գալիս հանրային միջավայրեր:

Մենք շատ որ դուրս չենք գալիս մեր աշխատատեղից, խնդիր էլ չունենք իրենց նմանվել հագուստով: Գլխավորը կոկիկ հագնվենք դուրս գալուց:

Տղամարդ, 55 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան (Սանկտ-Պետերբուրգ)

Աշխատանքային սեգոնային բոլոր միգրանտներն, իրենց հարցազրույցներում միանշանակ կերպով շեշտադրում են իրենց ու ընդունող հասարակության միջև հագուստի պրակտիկաների տարբերությունը:

Մենք մեր համար մեր ձևով էինք հագնվում: Իրենք սովորական, պրակտիկ կհագնվեն: Չէին նայե ուրիշներին: Ընդեղ մոդա բան չկար: Ավելի շատ մեր ազգն է հագուկապին նայող, ցուցադրական, իսկ իրենք իրենց սովորական շորերով, ով ինչ ունի կհագնի, կարևորը մաքուր եղնի:

Տղամարդ, 38 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան(Մոսկվա)

Սեգոնային միգրանտների մեջ շատ են այնպիսիները, ովքեր քննադատական մոտեցում ունեն ընդունող հասարակության հագուստի հանդեպ: Հատկապես երիտասարդության հագուստը նրանք համարում են շատ ավելի համարձակ ու բաց:

Ընտեղի հագուկապն իմ դուրս չի գա: Մենք ավելի սովորական կհագնվինք: Ընտեղի աղջիկների ու ըստեղի մեջ շատ տարբերություն կա: Ընտեղ շատ ավելի ազատ է:

Տղամարդ, 25 տարեկան,
գ.Մարմաշեն/Ռուսաստան (Արխանգելսկ)

Իմ հագնվելու մեջ օրինակ տարբերություն չի եղել: Թե չէ մինի հագնելը ընտեղ սովորական բան էր: Մեր մոտ երեսուն-երեսունհինգ տարեկան կինը իրեն թույլ չէր տա ընպես հագնվել, ինչդ օր ընտեղ: Ըղիկ երևի ազգի մենթալիտետից էլ է:

Տղամարդ, 46 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան(Մոշի)

Միգրանտների մեջ կան նաև այնպիսիները, ովքեր չնայած ընդհանուր առմամբ դրական են գնահատում ընդունող հասարակությունում տարածված հագուստի պրակտիկաները, սակայն իրենք շարունակում են պահպանել իրենց ոճն ու նախընտրություն-

ները: Նման մոտեցում ունեցողների կարելի է հանդիպել միգրանտների բոլոր խմբերում: Բայց այդպիսիներին, ավելի հաճախ, կարելի է հանդիպել երկարատև միգրանտների մոտ, ում առօրյա հաղորդակցումը ընդունող հասարակության հետ ավելի աշխույժ է և ինտենսիվ: Դրա արդյունքում փոփոխվել է յուրայինի ու օտարի միջև սահմանի ձևն ու բովանդակությունը: *Յուրայինի ու օտարի միջև կյանքի բոլոր ոլորտների վրա տարածվող, ընդհանրական բնույթի, հիմնականում անջրպետող դեր կատարող և երկու մշակույթների տարբերությունը շեշտող սահմանը, առօրյա հաճախակի շփումների արդյունքում մշակութային հարթությունից տեղափոխվում է պրակտիկաների հարթություն: Այս փոփոխությունը ազդում է սահմանի բնույթի վրա, առօրյա, առանձին վերցրած պրակտիկաների մակարդակում դառնալով ավելի հեշտ հաղթահարելի:* Ի տարբերություն պրակտիկաների սահմանագծերի, որոնք հակված են հաճախ խախտվելու, մշակութային տարբերությունները շեշտող սահմանները շատ ավելի կոշտ են ու դժվար հաղթահարելի: Մշակութային սահմանը միագիծ է և տարածվում է կյանքի բոլոր ոլորտների վրա: Եվ եթե անհատն իրեն նույնացնում է մշակույթի հետ, ապա կյանքի բոլոր ոլորտներում ինքը սահմանի մի կողմում է, մնացած աշխարհը՝ մյուս: Ցանկացած հարցում սեփականից հրաժարումը կապվում է սահմանն անցնելու և օտարի տարածք մտնելու հետ: *Պրակտիկաների մակարդակում երկարաձիգ ու միագիծ դժվար հաղթահարելի մշակութային սահմանները բեկվում են՝ վեր ածվելով բազմաթիվ մանր, միայն տվյալ պրակտիկային վերաբերող սահմանների: Դրանցից յուրաքանչյուրը հնարավոր է խախտել, առանց առնչվելու յուրայինի ու օտարի մշակութային հիմնախնդրին:* Եթե մարդը նախընտրում է հագնել առօրյա հարմարվետ հագուստ, ապա նա խախտում է միայն հագուստի պրակտիկան, այլ՝ ոչ թե դավաճանում սեփական մշակույթը կամ դրանով դադարում հայ լինելուց: Այս դեպքում հագուստը իրականացնում է ոչ թե մշակութային պատկանելությունը շեշտող, այլ՝

ընդունող հասարակության հետ փոխհարաբերվելու ու պրակտիկաները յուրացնելու ցուցիչի դեր:

Բնձ համար անհասկանալի էր, թե ոնց կարելի է ապրել նոր միջավայրում ու մնալ կադապարների մեջ: Չեմ ասում, որ պետք է ասելիք, թե հայ չեմ: Բայց միևնույն ժամանակ սխալ է փակվել: Տղաներ կային, որ նույնիսկ հազնվում էին այնպես, ինչպես այն անլեզալ միգրանտները: Ոնց կարող ես դու համալսարանում սովորել, տեսնել, թե ինչպես են հազնվում չորս կողմդ ու շարունակես հազնվել այդպես: Սև շորեր, սուրքիթ կոշիկներ, խոսալու ոճն ու շարժումները:

Կին, 29 տարեկան,
ք. Երևան/Շվեդիա (Ստոքհոլմ)

Կարելի է ասել, որ միգրանտների որոշ խմբերի մոտ հագուստի հետ կապված նախընտրությունները պայմանավորված են մշակութային սահմաններով, իսկ որոշների մոտ էլ՝ պրակտիկաների: Մշակութային սահմանները ձևավորում են հագուստի խմբային նախընտրություններ ու նպաստում խմբային ոճակաւնության վերարտադրությանը, իսկ պրակտիկաները՝ անհատական ոճականությանը: Դրա համար առաջինների մոտ հագուստը ցուցում է մարդու պատկանելությունը տվյալ խմբին, իսկ երկրորդի համար շեշտադրում է նրա անհատական ճաշակն ու ընտրությունը:

Մարդիկ հանգիստ են հազնվում: Մեզ մոտ մի քիչ ուրիշ ձևի է: Իմ մոտ հաճախ տպավորությունն այն է, որ մարդիկ հազնվում են այդպես, որ ուրիշները իրենց տեսնեն: Գուցե ինքը դրա մեջ հանգիստ չէ: Հազիվ է քայլում էդ կոշիկներով, բայց ինքը հագել է դա: Չէի ասի, որ այնտեղ մարդիկ ավելի ճաշակով են քան այստեղ, բայց ավելի շուտ տարբերությունը հարմար հազնվելու մեջ է:

Կին, 25 տարեկան,
ք. Երևան/Կանադա (Օտտավա)

Հագուստի հարցում մշակութային սահմանների ընդգծվածությունը հատկապես ավելի սուր է արտահայտված աշխատանքային սեզոնային միգրանտների միջավայրում, ինչպես նաև այն երկարատև ու ուսանող միգրանտների միջավայրերում, ում համար առավել բնութագրական են ինքնության ներկայացման խմբային ցուցիչները: Հագուստի ոճական փոփոխություն նկատելի է հատկապես այն միգրանտների մոտ, ովքեր իրենց ինքնության ներկայացումը և ստատուսի ձևավորման մարտավարությունը կազմակերպում են իրենց անհատականության ցուցադրման միջոցով: Նման դեպքերում խմբային պատկանելության ցուցիչները խոչընդոտող դեր են կատարում անհատականության ներկայացմանն ու ճանաչմանն, այն իմաստով, որ ընդունող հասարակության համար դրանք ավելի շատ միգրանտի տարբերությունը ցուցադրող ու տարանջատող գործառույթ են իրականացնում:

Նրանք ովքեր իրենց կարգավիճակի ձևավորման գործում ավելի մեծ նշանակություն են տալիս իրենց անձնական հատկանիշներին, նրանց համար հագուստը ֆունկցիոնալ դեր չի կատարում և չի դիտվում որպես ստատուսային գործոն:

Ես այնտեղից որ եկա, սև գույնի շոր չունեի, ամբողջը բաց գույնի շորեր էին: Հարմարավետ էի հագնվում, ջինսեր, մայկաներ, ուսապարկ: Բնձ համար հարմարավետությունը առաջին տեղում է: Միայն այդ դեպքում ես կարողանում հանգիստ լինել, հավասարակշռված, իրավիճակին ադեկվատ մտածել:

Կին, 29 տարեկան,
ք. Երևան/Անգլիա (Լոնդոն)

Իսկ նրանք, ովքեր հայտնվելով հյուրընկալող հասարակությունում ընդունում են իրենց պատրաստի մատուցվող սեզոնային միգրանտի կարգավիճակը, նրանք կրում են այնպիսի հագուստ, որը ներկայացնում է նրանց խմբային ինքնությունը: Հագուստը նրանց խմբային ինքնության ցուցիչն է: Ու եթե նույնիսկ ընդունող հասա-

րակության հագուստի պրակտիկաներն իրենց դուր են եկել, իրենք հագուստում փոփոխություններ չեն թույլ տվել:

Ընտեղ հագուկապն ավելի թեթև ու հարմար էր: Հագուստն իրենց համար ավելի շուտ հարմար էղնելու, ոչ թե ճոխության խնդիր էր: Բայց դե ես կհագնեի էն, ինչ որ մենք սովոր ենք: Ինչ որ ես ըստեղ կհագնիմ, իրենք չեն հագնի:

Տղամարդ, 35 տարեկան,
ք.Գյումրի/Ռուսաստան (Սանկտ Պետերբուրգ)

Այդ պատճառով էլ ընդունող հասարակությունում նրանք հեշտ տարբերվող են ու նաև ճանաչելի որպես սեզոնային միգրանտ: Այս դեպքում, թե միգրանտը և թե ընդունող հասարակությունը հակված չեն քննարկելու նրա անձնական հատկանիշները և այդ դիտանկյունից վերանայելու միգրանտի կարգավիճակը:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ միգրանտների տարբեր խմբերի մոտ հագուստի դրսևորումները շատ բազմազան են: Միգրանտների մի մասի, հատկապես սեզոնային միգրանտների մոտ այն հանդես է գալիս որպես մշակութային ցուցիչ, որը միգրանտին ներկայացնում է որպես ընդունող հասարակությունից տարբերվող էթնիկական խմբի ներկայացուցիչ: Միգրանտների մի մասի համար էլ այն ոչ թե հատուկ մի բան է, որի միջոցով նա ձգտում է ներկայացնել իր անձը, այլ՝ հանդիսանում է առօրեականության սովորական պրակտիկաներից մեկը: Իսկ ընդունող հասարակությանը նա ներկայանում է ոչ թե հագուստի միջոցով, այլ՝ իր անհատականության:

2.5. Միգրանտների առօրյա փոխհարաբերությունների բնույթը և առանձնահատկությունները. Անհատական և հանրային պրակտիկաները

Ընդունող հասարակության հետ փոխհարաբերությունները միգրանտի մոտ սկսվում են տվյալ հասարակության մասին պատկերացումների ձևավորումից: Հետազոտության ընթացքում հարց-

ման ենթարկված միգրանտների հիմնական մասը, անկախ այն բանից, թե որ երկրից են վերադարձել, գտնում է, որ ընդունող հասարակությունը հայաստանյանից շատ տարբեր է: Այդ տարբերությունը ընդգրկում է առօրեականության համարյա բոլոր ոլորտները: Հարցված միգրանտների հիմնական մասը, խոսելով Հայաստանի ու ընդունող հասարակությունների միջև տարբերությունների մասին, նկատի ունի, ոչ միայն կյանքի այս կամ այն ոլորտը, այլ ողջ ապրելակերպը:

Իրանց ապրելակերպը մերի հետ չես համեմատե: Իրանք լրիվ ուրիշ ձևի կապրին: Իրանք նախընտրեն կը ազատ կյանքը: Ընտեղ ամեն մարդ իրա գլխին է: Եթե կինը ինչ-որ բան որոշեց, կարող է մարդու հետ խորհրդակցե, բայց պարտադիր չէ: Կամ էրեխեքը. Իրանց մոտ աղջիկ էրեխեն կըռնա գիշերը ժամը իրեքին տուն գա, ու ըղիկ սովորական է, իսկ մեր մոտ ըղիկ եքա բարդություններ ու պատմությունների պատճառ կդառնա: Կամ եթե ընտեղ մարդը չափահաս է, ինքնուրույն է: Ինքն իրա գլխուն է, իրա կյանքն ունի, ինքը կորոշե: Բայց ես օրինակ էդ բաները չեմ ընդունե: Էդ առումով իմ դուրս գնալ գալն իմ վրա չի ազդել:

Տղամարդ, 28 տարեկան,
գ. Մարմաշեն/Ռուսաստան(Յակուտսկ)

Ընդունող հասարակության մասին ընկալումներն արտացոլված են միգրանտների նկարագրություններում: Միգրանտների պրակտիկաների փոփոխության առումով դրանք կարևոր դեր են խաղում, քանի որ նրանց գործողությունները շատ դեպքերում արձագանքներ են ոչ միայն իրական միջավայրին, այլ՝ այդ միջավայրը նկարագրող մեկնաբանություններին (ինտերպրետացիաներին): Մեկնաբանություն եզրի օգտագործումը այս տեքստում մոտ է Կ.Գիրցի կողմից դրան տրվող նշանակությանը (Girtz 1973. 3-33): Հաճախ, ինչպես որ միգրանտներն ընկալում ու բնութագրում են միջավայրը, այնպիսին էլ լինում են նրանց գործողությունները: Այդ

պատճառով, շատ կարևոր է նաև, թե ընդունող հասարակության իրականությունը առավել համարժեքորեն ընկալելու ու դրան արձագանքելու առումով տվյալ հասարակությունում միգրանտների հանդեպ ինչպիսի պրակտիկաներ են իրականացվում: Օրինակ, եթե միգրանտն, իր հանդեպ ցուցաբերվող վստահությունը ընկալում ու գնահատում է որպես այդպիսին, այլ՝ ոչ թե որպես միամտություն, ապա նրա պրակտիկաները լինում են ավելի համարժեք: Հակառակ դեպքում, նա փորձում է չարաշահել այդ վստահությունը, օգտագործելով այն տարբեր մանր օգուտներ կորզելու համար:

Նորմալ կապրեինք: Հեշ մարդ չէր խաբե իրար: Խաբելն իրենց մոտ հեշ տարածված չէր: Վստահությունը շատ բարձր էր:

Տղամարդ, 43 տարեկան,
ք.Գյումրի/Գերմանիա (Բեռլին)

Հետաքրքիր է, այս առումով Գերմանիայում երկարատև միգրացիայում գտնված մեր ռեսպոնդենտներից մեկի այն պատմությունը, թե փախստականների ճամբարում ապրող որոշ հայեր քմծիծաղել են նրանց վրա, երբ իրենք որոշել են ոչ թե օգտվել իրենց ցուցաբերվող օգնությունից, ամեն կերպ աշխատելով երկարաձգել ճամբարում մնալու իրենց ժամկետները, այլ՝ ձգտել են աշխատանք գտնել ու աշխատելով ապրել: Նման պատմություններ հանդիպում են նաև եվրոպական այլ երկրներում միգրացիայի փորձ ունեցողների պատմություններում: Այսպես, Ֆրանսիայում փախստականի կարգավիճակով հաստատված և նպաստ ստացող որոշ հայեր զարմացել են իրենց բարեկամի այն մտադրության վրա, որ նա մտադիր է տեղափոխվել Ֆրանսիա ոչ թե նպաստով ապրելու, այլ՝ աշխատանք գտնելու ու աշխատանքով ապրելու համար: Նման մի պատմություն էլ գրանցվել է Չեխիա երկարատև միգրացիայից վերադարձածից:

Դե մենք տիպիկ միգրանտ չենք էլի, օրինապահ ենք: Ես սիրում եմ, որ փաստաթղթերում ամեն ինչ նորմալ է:

Մի պատմություն պատմեմ: Մի անգամ ինձ աշխատողներ էին պետք, ես գնացի Բոնոյի մոտ գտնվող փախըստականների ճամբար, որ աշխատուժ վարձեմ: Հայեր էին, ասեցի աշխատանքի մասին, դե որ փաստաթղթերն էլ էի կարգավորում, իրենց ճամբարից հանում էի, բայց չուզեցին: Ծիծաղում էին իմ վրա: Մարդիկ դե տարբեր են:

Տղամարդ, 56 տարեկան,
ք. Երևան/Չեխիա (Պրահա)

Հատկանշական է, որ ռեսպոնդենտը տիպիկ ու ոչ տիպիկ միգրանտների առանձնահատկությունը տեսնում է հենց պրակտիկաների այնպիսի տարբերության մեջ, որոնք ձևավորվում են այս կամ այն մեկնաբանության հիմքի վրա:

Կարելի է ասել, որ որոշ դեպքերում, ընդունող հասարակության հանրային ու սոցիալական քաղաքականության պրակտիկաների ոչ համարժեք ընկալման հետևանքում միգրանտների մոտ նպաստառուի վիճակը վեր է ածվում ապրելակերպի: Իսկ այն դեպքերում, երբ մարդը ձգտում է ճանաչել իր շրջապատող միջավայրը, նրա վարքը պայմանավորող պրակտիկաները դառնում են ավելի համարժեք ու նպաստում, որ նա ավելի հաջողակ դիրք զբաղեցնի այդ հասարակությունում, ձեռք բերի լավ աշխատանք, գրանցի տնտեսական, մշակութային ու սոցիալական կապիտալի զգալի աճ:

Այս առումով չափազանց կարևոր դեր է խաղում այն, որ միգրանտները ոչ միայն փորձում են ծանոթանալ ընդունող հասարակությանը, նրան բնորոշ առանձնահատկություններին ու պրակտիկաներին, այլև՝ այդ ամենին տվյալ հասարակության կողմից տրվող *մեկնաբանություններին*: Երբ միգրանտները հայտնվում են նոր միջավայրում, նրանց համար կարևոր խնդիրներից մեկը դառնում է ճանաչելի դառնալն ու դիմացինին ճանաչելը: Փոխճանաչողության գործընթացում կարևոր նշանակություն է տրվում նշանների փոխանակությանը: Ինչպես Ժ. Դերիդան է ա-

սում, նշանի առաջնային ֆունկցիան տեղեկատվության հաղորդումն է (Derrida 1982. 294-326): Այս դեպքում, այդ տեղեկատվությունը մի իրականությունից մյուսը՝ միգրանտականից ընդունող հասարակությանը և հակառակը՝ հաղորդվում է որոշակի պրակտիկաների միջոցով: Այստեղ կարևոր խնդիր է դառնում, թե որքանով է միգրանտը կարողանում ընկալել ու համարժեքորեն մեկնաբանել այն պրակտիկաները, որոնց միջոցով հյուրընկալող հասարակության առօրեականությունը բնութագրող տեղեկատվությունը փոխանցվում է միգրանտին և ինչ պրակտիկաներ է ընտրում միգրանտը դրանց արձագանքելու համար: Այսպես, եթե տղամարդ միգրանտը թաղամասում իրեն բարևող կնոջ ժպիտը ընկալում է որպես իրեն գայթակղելուն ուղղված գործողություն, ապա նա կարող է արձագանքել դրան այնպիսի արարքով, որը կարող է կոնֆլիկտի պատճառ դառնալ: Սակայն, եթե դա գնահատվում է որպես ողջույնի ընդունված ձև, ապա արձագանքը լինում է այդ ձևի ընդօրինակումը և որպես ընդունված պրակտիկա, հետագայում դրա կիրառումը: Որոշ դեպքերում տեղեկատվություն փոխանցող նշանների դերը կատարում են ֆոնային կամ հիմնական պրակտիկաները, ասենք օրինակ, հագուստը կրելու ձևը, ոճականությունը, ողջույնի ձևը, վստահություն ցուցաբերելու ձևը և այլն: Հատկանշական է, որ երբ ընդունող հասարակությունում միգրանտները յուրացնում են նման պրակտիկաները, երբեմն Հայաստան վերադարձից հետո հայտնվում են հակառակ իրավիճակում և դժվար ընկալելի են դառնում սեփական միջավայրում:

Մենք շատ բաներ տեսանք: Երեխերի աշխարհայացքը լրիվ ուրիշ ձև զարգացավ: Գերմանացիքի մտածելակերպը ուրիշ է: Շփվելով իրենց հետ, լավ զարգացել ենք: Ասենք իրենց համար կարմիր լույսի տակից անցնելը ամոթ էր: Հարգված մարդը պտի խախտում չենք, ամոթ էր: Իրենց պատվի հասկացողությունը լրիվ ուրիշ էր: Նորմալ մարդ էին, նորմալ մարդու նման էին մտա-

ծում: Մեր մոտ մարդն իր գրաված դիրքով ուզում է մյուսի վրա իշխել, վերից կնայել: Իսկ ընդեղ եղպես չէր: Հակառակը, իրենց առավելությունը չէին ցույց տա: Էդ ռեստորանի տերը մուլտիմիլիոնատեր էր, բայց որ գետինն ընկած թուղթ տեսներ, կվերցներ, կդներ սեղանին: Ստեղ չի լինի էտպիսի բան, տերը մի հատ էլ կարող է գոռա աշխատողի վրա, իրեն ցույց տա: Քաղաքակրթվածության մակարդակների տարբերությունը հսկայական է, շատ հսկայական: Հետո բացի դրանից, օրենքները մարդու համար են, մարդիկ էլ օրենքը կհարգեն: Հասարակ բան, այստեղի հարկային օրենքները, որ հատուկ գործ անողին խեղդելու համար են: Ես ռեստորանի մենեջեր եմ եղել, ես էտ գիտեմ, իսկ ինչ է Երևանում դեկավարները չգիտե՞ն էտ ամեն ինչը:

Տղամարդ, 47 տարեկան,
բ.Գյումրի/Գերմանիա (Մայնի Ֆրանկֆուրտ)

Մեկնաբանություններն այս առումով շատ կարևոր են, քանի որ նպաստում են միգրանտներին ավելի համարժեքորեն արձագանքել ու կիրառել տվյալ հասարակության առօրեականությանը բնորոշ պրակտիկաները: Իսկ այն դեպքերում, երբ մարդիկ փորձում են միջավայրը և առօրեականության պրակտիկաները մեկնաբանել յուրովի, սեփական ընկալումների համատեքստում, ապա նրանց վարքն ու պրակտիկաները սկսում են զգալիորեն տարբերվել, ինչը որոշ դեպքերում կարող է նաև բախումների պատճառ դառնալ: Օրինակ, երբ ռուսական միջավայրում հայտնված միգրանտը խանութում աշխատող կնոջ բարեհամբույր վերաբերմունքը ընկալում ու մեկնաբանում է որպես թեթևաբարոյության ցուցիչ, ապա դա կարող է միջանձնային պրակտիկաներում ձևավորել ոչ համարժեք վարք ու դառնալ բախման պատճառ:

Ամենալուրջ պրոբլեմն էղել է են, օր տեղացիների հետ կոնֆլիկտ ենք ունեցել, դժվար է լուծվել: Ըղիկ իմ կոնֆլիկտը չէր, ավելի շատ հայ տղեքի կոնֆլիկտն էր: Կոնֆ-

լիկտի լուծումը տևեց իրեք օր: Էդ կոնֆլիկտն էլ մեր պատճառով էր էղել, որովհետև մերոնք մտել են խանութ, ինչ-որ վատ բաներ են քսել, էդ խանութի աղջկա ամուսինն էլ էկել է, պատիվ պահանջել: Աշխատել ենք, որ շատ մարդիկ չիմանան:

Տղամարդ, 25 տարեկան,

գ.Մարմաշեն/Ռուսաստան(Արխանգելսկ)

Այդ առումով շատ էական դեր է խաղում նաև ճիշտ ու սխալի մասին ընկալումները: Եթե միգրանտը փորձում է գնահատել ընդունող հասարակությունը սեփական ճիշտ ու սխալի դիրքից, ապա նրա պրակտիկաներում կարող են ի հայտ գալ շատ տարբերվող ու երբեմն նաև բախում առաջացնող անհամաժեք դրսևորումներ: Սակայն, եթե նա փորձում է ճանաչել այդ հասարակությունը և այդտեղ ընդունված ճիշտ ու սխալի, գեղեցիկի ու սոցեղի, բարու ու չարի մասին պատկերացումները, ապա նրա պրակտիկաները սկսում են բախումնայինից վեր ածվել համագործակցայինի:

Պահ կատացվի, որ կարող է դու մարդու հետ կոնֆլիկտի մեջ կմտնիս, բայց ինքը իրա մտածելակերպով ճիշտ է, ուղղակի դու չես ընդունե:

Տղամարդ, 38 տարեկան,

ք.Գյումրի/Ռուսաստան(Սանկտ Պետերբուրգ)

Առօրյա կյանքի տարբերությունները, որոնք հաճախ նշում են հարցմանը մասնակցած միգրանտները, մի քանի տեսակ են: Մի դեպքում, առանձնացվում են տարբերություններ, որոնք միգրանտին ընդունող հասարակությունից սահմանազատում են մշակութային առումով: Այս դեպքում սահմանը հեռացնում է, տարանջատում յուրայինը օտարից, բաժանում կյանքը «մենք»-ի ու «նրանք»-ի: Սա շատ բնորոշ է հատկապես սեզոնային միգրանտներին և ուսանող ու երկարատև միգրանտների այն ներկայացուցիչներին, ովքեր ընդունող հասարակությունից մեկուսանալու համար գտնում են բազմազան ձևեր: Նման ձևերից մեկն ըստ ազգային

հատկանիշի խմբավորվելն է: Սովորաբար նման միգրանտները գտնում են ազգությամբ հայ այլ միգրանտների ու խմբավորվում նրանց հետ կամ ինտեգրվում տեղական հայկական համայնքին:

Մեր հատվածում շատ օբյեկտներ կային, որոնց տերերը հայեր էին: Ես իրենց հետ էի շփվում: Իմ համար շփվելն ավելի հեշտ հայերի հետ էր:

Տղամարդ, 46 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան (Մոշի)

Նման միգրանտները նվազագույնի են հասցնում ընդունող հասարակության հետ առօրյա շփումները և հիմնականում աշխատանքից ու ուսումից ազատ ժամանակը անցկացնում են իրենց ազգային միջավայրերում: Այս դեպքերում միգրանտները շատ խիստ են գծում սահմանը յուրայինի ու օտարի միջև, հաճախ շեշտադրելով սահմանի անհաղթահարելիությունը: Դա, հատկապես, առաջանում է, երբ միգրանտի, որպես անհատ և սեփական մշակույթի միջև սահմաններն այն աստիճան են նույնացված, որ մշակութայինը, որպես խմբային ցուցիչ, դառնում է նրա ինքնության հիմնական բաղադրիչը, ստվերելով նրա անհատականության մնացած բաղադրիչները: Այդ պատճառով, միգրանտը առնչվելով ընդունող հասարակության առօրեականությանը և այն ներկայացնող տարբեր պրակտիկաներին, հաղորդակցվում է դրանց հետ ավելի շատ որպես էթնոմշակութային խմբի ներկայացուցիչ, այլ՝ ոչ թե որպես անհատ:

Այն գործարանում, որտեղ աշխատում էինք, այնպես էր, որ ամեն մեկը պետք էր իր տարածքը մաքուր պահեր, որ ոտքերի տակ ոչինչ չլիներ: Ամեն մեկը պետք է ավլեր իր տարածքը, մաքրեր: Բայց մեր հայ տղաները ինձ ասում էին, որ գնամ դեկավարներին բացատրեմ, որ դա մեր ավանդույթներին դեմ է, հայ տղամարդը ավել չի կարող անել: Ես մերժեցի իրենց: Իսկ այնտեղ այնպես էր, որ կամ պիտի անեիր կամ աշխատանքից

դուրս գայիր: Ու իրենց որոշ մասը աշխատանքից դուրս եկան, մի մասն էլ փոխվեց, ավել արեց:

Կին, 30 տարեկան,
ք.Երևան/ԱՄՆ (Զիկագո)

Նման դեպքերում ընդունող հասարակության հետ հաղորդակցման մեջ միգրանտը ավելի շատ ներկայացնում է ոչ թե ինքն իր անհատականությունը, այլ՝ իր էթնիկությունը և այն պայմանավորող հիմնարար գործոնը՝ մշակույթը: Ահա թե ինչու, ընդունող հասարակության հետ այս միգրանտների առօրյա փոխհարաբերությունը կառուցվում է մշակութային տարբերության ու հակադրության հիմքի վրա:

Եվրոպական արժեքների համակարգը մեր ավանդական-հայկականից տարբեր է: Երևույթներ, որ Եվրոպայում առօրյա են՝ սովորական, մեր ազգային նկարագրին հարիր չեն, խորթ ու անընդունելի:

Տղամարդ, 56 տարեկան,
ք.Երևան/Չեխիա (Պրահա)

Մշակույթը լինելով մարդկային կյանքի ամենից ընդգրկուն ֆենոմեններից մեկը, արտացոլվելով ամենօրյա փոխհարաբերությունների հարթությունում և դառնալով այն պայմանավորող գլխավոր գործոնը, հայտնվում է տվյալ անհատի ու ընդունող հասարակության անդամների առօրյա փոխհարաբերությունների միջև և թույլ չի տալիս, որ մշակութային խիստ ու միագիծ սահմանները բեկվեն անհատական փոխհարաբերությունների մակարդակում և ստանան անհատական յուրահատկություններից ու ոճականություններից բխող բազմերանգություն: Այն միգրանտները, ովքեր իրենք իրենց մեջ կարողացել են անցնել անհատի ու մշակույթի սահմանը, նրանց հաջողվել է ձևակերպել իրենց սուբյեկտությունը, ինչից հետո սահմաններն անցել են արդեն ոչ թե իր և օտար մշակույթների, այլ՝ իր անձի և առօրեականության տարբեր պրակտի-

կաների միջև, անկախ նրանից, թե դրանցից որը ինչպիսի մշակութային պատկանելություն ունի:

Ցանկացած անհասկացողություն մշակութային է: Մինչև չես խոսում, շփվում, անհասկացողությունը մնում է: Բայց, երբ փորձում ես վերանալ քո մշակութից, նայել հարցին դիմացինիդ տեսանկյունից, անհասկացողությունը վերանում է: Էտ միջավայրում սովորելը նվազեցրեց իմ ազգայնական, էքստրիմ մտածելակերպը: Իրենց հետ շփումներում ավելի օբյեկտիվ դատողություն ձեռք բերեցի:

Կին, 27 տարեկան,
ք.Երևան/Լեհաստան (Վարշավա)

Մեր հարցազրույցներում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի մեկնաբանությունների, որոնցում չնայած ընդունող հասարակության պրակտիկաները ընկալվում են ու, նույնիսկ, որոշ առումներով գնահատվում ճիշտ, սակայն դրանք չեն համարվում ընդունելի: Մա բավական հետաքրքիր նյութ է այն առումով, որ չնայած անհատական գնահատականների հարթությունում տվյալ պրակտիկան ընկալվում է, սակայն մշակութային սահմանը անցնել միգրանտին այդպես էլ չի հաջողվում և նա մերժում է իր կողմից այդ պրակտիկայի կիրառման հնարավորությունը:

Մարդիկ ընտեղ միանշանակ ավելի լավ կապրին ու ճիշտ: Ինչ որ կմտածեն, կձգտեն հասցնել իրանց նպատակին: Ընտեղ տարբերությունները շատ շատ են: Ընտեղ եթե երեխեն տասերորդ դասարան է, որոշում կայացնելու մեջ ծնողի դերակատարությունը համարյա չկա: Ինքն իրա զլխու տերն է, ամեն ինչի տեսակետից: Ընտեղ շատ ինքնուրույն են: Մեր վերաբերմունքն ու դաստիարակությունը ուրիշ է: Մեծերի նկատմամբ, էրեխեքի նկատմամբ: Մենք էրեխեքին շատ արգելքներ կուտանք՝ չի կարելի ու կարգելենք: Ընտեղ ջահել-մեծ հարաբերություններն էլ ուրիշ են: Բայց ես իրենցը չեմ

ընդունե: Ես կոնկրետ իմ վրա փոփոխություններ չեմ նկատել:

Տղամարդ, 35 տարեկան,
ք.Գյումրի/Ռուսաստան (Սանկտ Պետերբուրգ)

Միգրանտների տարբեր խմբերի պրակտիկաների առանձնահատկությունների վրա ազդել է նաև սեփական կարգավիճակի ընկալումն ու մեկնաբանությունը: Որպես կանոն սեզոնային աշխատանքային միգրանտների առօրեականության պրակտիկաները բխել են նրանց ձևավորած կարգավիճակից և նպաստել են ընդունող հասարակությունից մեկուսանալուն քան մերձենալուն: Շատ դեպքերում դրանք եղել են խուսափողական: Առօրեականության համարյա բոլոր ոլորտներում, սկսած ուտեստից ու հագուստից, վերջացրած անձնական ու հանրային ամենօրյա փոխհարաբերությունները, եղել են գլխավորապես *տարբերակման պրակտիկաներ*: Արդյունքում ձևավորել են սեզոնային *սևագործ աշխատանքային միգրանտի* հաբիթուս, ինչը դրա հանդեպ որոշակի վերաբերմունքի պատճառ է դարձել նաև ընդունող հասարակությունում: Նման միգրանտների հանդեպ, ովքեր մեկուսի են ու ձգտում են ընդգծել ընդունող հասարակությունից իրենց տարբերությունը, տեղացիների վերաբերմունքը նույնպես եղել է հակադրող-տարբերակող:

Իսկ այն միգրանտները, ովքեր ձգտել են ձևավորել երկարատև նպատակներով ժամանածի կարգավիճակ, ապա նրանց պրակտիկաները զգալիորեն տարբերվել են: Դրանց հիմնական բնութագրիչը չի եղել տարբերակվել-հակադրվելը: Հակառակը, շատ պարագաներում, միգրանտների այս խումբը ձգտել է յուրացնել ու կիրառել ընդունող հասարակության վարքի կանոնները, հանրային վայրերում փոխհարաբերվելու ձևերը, ուտեստի, հագուստի, ժամանցի, ժամանակի ու տարածության կազմակերպման որոշ պրակտիկաներ: Հատկապես կարևոր նշանակություն են

տվել այն հանրային պրակտիկաներին, որոնք մեղմում են ընդունող հասարակության հակադրման հնարավորությունը:

Ընդհանրացնելու դեպքում, կարելի է առանձնացնել ընդունող հասարակության առօրյա պրակտիկաների վերաբերյալ միգրանտների չորս հիմնական մոտեցում: Առաջինն այն է, երբ միգրանտը շատ ընդհանուր է նկարագրում ընդունող հասարակությունը, բնութագրելով այն հիմնականում իրենից շատ տարբեր, սխալ ու բնականաբար անընդունելի իր համար: Այս հարաբերություններին բնորոշ է միագիծ և դժվար անցանելի միջմշակութային սահմանը:

Երկրորդ դեպքում, միգրանտը բնութագրում է ընդունող հասարակությունը որպես շատ տարբեր, գնահատում դրանցից շատերը որպես ճիշտ, բայց իր համար դրանք համարում հիմնականում անընդունելի: Սրանք, ի տարբերություն առաջինների, սեփական ու ընդունող հասարակության տարբերությունը տեսնում են ոչ միայն լայն առումով մշակութային սահմանագծի երկու կողմերում, այլ մանրամասնում տարբերությունը ըստ առօրյա այնպիսի պրակտիկաների, ինչպես ասենք հագուստի, ժամանցի, ուտեստի, երիտասարդության ապրելակերպի, ծնող-երեխա, կին-տղամարդ փոխհարաբերությունների, օրենքի հանդեպ վերաբերմունքի, միջանձնային փոխհարաբերությունների, հասարակական վարվելակարգի և այլ պրակտիկաները: Սակայն, նրանց համար սահմանները շարունակում են առաջին հերթին գծված մնալ ըստ մշակույթների, այլ՝ ոչ ըստ պրակտիկաների: Այդ պատճառով էլ միգրանտի համար դրանք շարունակում են մնալ դժվար հաղթահարելի:

Երրորդ դեպքը որոշ առումով նման է երկրորդին: Այն նորից ընդունում է տարբերությունները, որոշակիացնում դրանք պրակտիկաների մակարդակում և դրանցից որոշները համարում ճիշտ: Բայց, ի տարբերություն, երկրորդի դրանք իր համար հիմնականում ոչ թե անընդունելի են, այլ՝ ընտրաբար ընդունելի: Նման դեպքերում միգրանտը դառնում է իր կողմից ընդունելի համարվող

պրակտիկաների գործադրողը: Հատկապես այնպիսի պրակտիկաների, որոնք խիստ կերպով չեն սահմանազատվում մշակութային պատկանելության ու էթնիկ ինքնության նկարագրի առումով: Դրանք հիմնականում վերաբերում են հանրային պրակտիկաներին, հասարակական միջավայրերում ընդունված վարվեցողության ձևերին, կարգ ու կանոնի պահպանմանը, մարդկային փոխհարաբերություններին: Մշակութային սահմանի խստությունը և միագծությունը սկսում է բեկվել և վերանալ այնպիսի անհատական պրակտիկաների մակարդակներում, որոնք տվյալ անհատի կողմից չեն դիտվում որպես իր էթնոմշակութային ինքնությունը խաթարող: Կարելի է ասել, որ այս դեպքում գործ ունենք անհատական պրակտիկաների մակարդակում սահմանների հաղթահարման երևույթի հետ, երբ մշակութային գործոնի դերը մեծ չէ պրակտիկաների ընդհանրություններ ձևավորելու մեջ: Սակայն, հատկանշական է այն, որ ի հայտ եկած անհատական բնույթի նոր պրակտիկաները դեռևս գտնվում են անհատի ու մշակույթի միջև առկա սահմանի տարբեր կողմերում: Անհատը դեռևս ազատ չէ այնքան, որ ինքը որոշի, թե որ դեպքերում կարելի է խախտել իր և մշակույթի միջև եղած սահմանները, որ դեպքերում՝ ոչ: Նա հիմնականում դեռևս ենթարկվում է սեփական մշակութային նկարագրի պարտադրած սահմաններին: Շարունակելով առաջնորդվել մշակութային ստերեոտիպերով, նա փոխառում է հիմնականում այն պրակտիկաները, որոնք չեն հակասում իր մշակութային ստերեոտիպերին ու վտանգավոր չեն իր անհատականության ու էթնիկ մշակույթի միջև բախումների առաջացման տեսանկյունից: Այս դեպքում կարելի է խոսել անհատի կողմից գործադրվող պրակտիկաների, բայց ոչ՝ անհատականության փոփոխման մասին:

Բայց իրենք ավելի թեթև կապրին: Հետո ավելի շատ կհոգան իրենց, իրենց ընտանիքի մասին: Հագնելը պտի տեղը եղնի, ուտելը: Ռուսական մե հատըմ լավ ասացվածք կա. «պատերազմը պատերազմ, բայց ճաշն իր

*ժամին պետք է լինի»։ Երևի իրանք հենց ըղպես էլ կապ-
րին։ Մենք քիչմ ավելի պահպանողական ենք, նորութ-
յունները լավ չենք վերցնե։ Բայց դե էդ էլ երևի ազգային
հոգեբանության հարց է։ Դրսում ապրելը իմ մոտեցում-
ների վրա կարելի է ըսել թեթև շտրիխներով ազդել է։ Օ-
րինակ ես հմի արդեն շատ պահպանողական չեմ։ Թե-
կուզ էրելների դաստիարակության պահով։ Կամ ըն-
կերների ու հարազատների հետ հարաբերություննե-
րում։ Թեկուզ ավանդույթ էլ լինի, էթե ինչ-որ բան կյան-
քում իրան սպառել է, պտի ըդուրից հրաժարվիս։*

Տղամարդ, 46 տարեկան
ք.Գյումրի/Ռուսաստան (Մոչի)

Չորրորդ դեպքը, ամենից յուրահատուկն է։ Այս դեպքում
նույնպես շեշտադրվում են մշակութային տարբերությունները։
Սակայն քննադատական մոտեցումը բնորոշ է ոչ միայն ընդունող
հասարակության պրակտիկաների հանդեպ, այլ նաև՝ սեփականի։
Նման միգրանտները աչքի են ընկնում պրակտիկաների հանդեպ
շեշտված անհատական վերաբերմունքով և ընտրում են պրակտի-
կաները ըստ անձի զարգացման ու իրացման անհրաժեշտության,
առաջնորդվելով գլխավորապես անհատական նպատակահարմա-
րության սկզբունքով։ Սեփականի հանդեպ քննադատական վերա-
բերմունքը շեշտված է հատկապես այն մշակութային իրողություն-
ների դեպքում, որոնք սահմանափակում են անհատի աճի ու ինք-
նաիրացման հնարավորությունները։ Նման անհատները, կարելի է
ասել, հատում են սեփական անհատականության ու իր խմբային
ինքնությունը ներկայացնող մշակույթի սահմանագիծը։ Սրանք
մարդիկ են, ովքեր անցում են մշակութային սահմանափակումնե-
րի ռուբիկոնը և գտնվում են իրենց անձի զարգացման ու իրացման
ուղիների փնտրտուքի մեջ։ Այնպիսի ուղիների, որոնք անհատին
մատուցվում են ոչ թե մշակույթի կողմից, որպես պատրաստի մի
բան, այլ՝ բացահայտվում են նրա կողմից, որպես կյանքում ճշմար-
տությունների ձևավորման ու հասնելու սեփական ուղիներ։

Առաջ շրջապատի, ընտանիքի ազդեցությունը կար իմ վրա: Իսկ հիմա ավելի շատ ես գիտեմ ինձ, ու գիտեմ իմ համար ինչն ա ճիշտ, հասկանում եմ ինքս ինձ: Ոչ թե ընտանիքը կասի քեզ ինչն ա ճիշտ: Այդ տարբերությունը շատ մեծ է:

Կին, 27 տարեկան,
ք.Երևան/Լեհաստան (Վարշավա)

Միգրանտների այս խումբը բնորոշվում է ինչպես ինտերպրետացիաների, այնպես էլ պրակտիկաների բազմազանությամբ: Սրանց մոտ ընդունող հասարակության ու իր միջև սահմանները անցնում են ոչ թե մշակութային ջրբաժանով, այլ՝ իր ու այդ հասարակությունում ապրող մյուս անհատների կողմից գործադրվող պրակտիկաների միջև: Այդ պատճառով էլ իրենց մոտ չկան այնպիսի բնորոշումներ, որ ընդունող հասարակությունը ճիշտ է կամ սխալ: Նրանց ավելի բնորոշ է այն հարցադրումը, թե արդյո՞ք տվյալ պրակտիկան անձամբ իր և մեկ այլ անհատի փոխհարաբերության համար ընդունելի ու նպատակահարմար է, թե՛ ոչ:

Ես կուզեի, որ մեկը սահմաներ, թե ճիշտ ապրելը ինչ է: Դա շատ հարաբերական է: Լրիվ մարդուց է կախված, ինքն իր համար ճիշտ կապրի, թե՛ չէ: Հա, եղել ա, որ հասկանում ես, որ տենց միանշանակ, ոչինչ կատեգորիկ չպիտի լինի: Ու չես կարող նույն բանը համահավասար տարածես, ենթադրենք նույն ազգի մեկ այլ ներկայացուցչի նկատմամբ, որովհետև իրանք շատ տարբեր են: Ու յուրաքանչյուր մարդու հետ ըստ արդեն էտ մարդու որակների, էության, բնավորության, տենց պիտի շփվես: Այսինքն ոչ մի համահարթեցում հնարավոր չի: Որ վրացի է, ուրեմն սենց կշփվեմ, որ աղբբեջանցի է, ուրեմն սենց կշփվեմ:

Կին, 29 տարեկան,
ք.Երևան/Լեհաստան (Վրոցլավ)

Նկատենք, որ այնպես չէ, որ այս միգրանտները կորցրել են ազգային պատկանելության իրենց գիտակցումը: Այն պարզապես փոխել է իր բնույթը: Նրանք ազգայինը ու մշակույթը դիտարկում են ոչ թե ինչ-որ մի կետում քարացած, փոփոխման չենթարկվող ու անհատի վրա իշխող մի բան, այլ՝ անընդհատ զարգացող և անհատի կողմից քննադատորեն փոխակերպվող մի երևույթ: Այդ պատճառով էլ վերադարձած միգրանտների այս խումբը Հայաստանում առավել դինամիկն է զարգացման ու առաջընթացի իր ձգտումներում ու միջավայրը փոփոխությունների ենթարկելու հակվածության առումով:

Առաջին ու երկրորդ դեպքերում ներկայացված միգրանտներն աչքի են ընկնում այնպիսի պրակտիկաներով, որոնցում կարևոր դեր են խաղում մշակութային տարբերությունները ցուցող սահմանները: Այդ պրակտիկաները, հատկապես առաջին խմբին բնորոշները, ոչ թե մոտեցնում, այլ՝ հակառակը տարանջատում են միգրանտին ընդունող հասարակությունից: Դրա համար նման միգրանտների առօրյա պրակտիկաներն ավելի շատ մեկուսացնող են, քան՝ մերձեցնող:

Երրորդ ու չորրորդ դեպքերում ներկայացված միգրանտներին բնորոշ են այնպիսի պրակտիկաներ, որոնց ընտրության դեպքում կարևորվում է ոչ միայն մշակութային գործոնը, այլ՝ անհատականը: Դրա համար, այս սյրակտիկաները բեկում են միգրանտի ու ընդունող հասարակության միջև մշակութային միագիծ ու կոշտ սահմանները տեղափոխելով սահմանը պրակտիկաների մակարդակ, դարձնելով դրանք առավել հեշտ հաղթահարելի: Ասվածը վերաբերում է հատկապես չորրորդ դեպքի տակ մեր կողմից խմբավորված միգրանտներին:

Միգրանտների միջավայրում տարածված մեկնաբանություններն ու նկարագրությունները կարևոր են, քանի որ դրանք, ըստ էության, ընդունող հասարակության հետ սեփական հարաբերությունները կառուցելու մասին դիսկուրսներ են: Դիսկուրսներ,

որոնք քննարկում են հարցեր, թե ինչն է ճիշտ ու ինչը սխալ, ինչն է բարոյական կամ ոչ բարոյական, ինչն է գեղեցիկ կամ տգեղ ընդունող հասարակությունում: Եվ այդ առումով, մշակվում են ընդունող հասարակության հետ փոխհարաբերվելու պրակտիկաների շուրջ մարտավարությունների բանավոր տեքստերը, որոնք տարածվելով միգրանտների մեջ, ձևավորում են միգրանտական այս կամ այն խմբին բնորոշ պրակտիկաներ: Դրանք այն երևույթներն են, որոնց Մ. Ֆուկոն անվանում է դիսկուրսիվ պրակտիկաներ (Foucault 1972. 21-64; Wooffitt 2005. 146-147): Այսինքն, գործողություններ, որոնք իրականացվում են խոսքի միջոցով և որոնք ազդում են իրականության վրա, առաջացնելով մարդկանց վարքի ու պրակտիկաների փոփոխություններ:

Որպես դիսկուրսներ, դրանք շատ տարբեր են և պայմանավորված են դիսկուրսը վարողների մշակութային հաբիթուսով, մշակութային, սոցիալական ու տնտեսական կապիտալների ուրակներով, կյանքում ունեցած նպատակներով, միգրացիոն նպատակադրումներով: Կախված նշված գործոններից, միգրանտները հայտնվում են այս կամ այն *դաշտում* (Լկատի ունենք Պ.Բուրդիյոյի *դաշտի* ձևակերպումը. (Bourdieu 1984. 226-230, Bourdieu 1993a. 38-43)), որտեղ նրանք սկսում են իրացնել իրենց միգրացիոն մարտավարությունները: *Դաշտերը*, որոնցում հայտնվում են միգրանտները, կարևոր դեր են խաղում նրանց հետագա մարտավարությունների ու պրակտիկաների համար: Դաշտի ընտրությունը կարևոր խնդիրներից է: Սովորաբար միգրանտները դաշտերն ընտրում են կախված իրենց կյանքի և միգրացիայի նպատակներից: Որպես այդպիսի դաշտեր կարող են դիտարկվել համալսարանը, շինհրապարակը, կուրորտային քաղաքը, փախստականների ճամբարը և այլն:

Շատ էական խնդիր է այն, թե ինչպես են փոխառվում ընդունող հասարակության հանրային կարգը կանոնակարգող պրակտիկաները: Ինչպես արդեն վերը նկատեցինք, դրանցում ա-

օանցքային դեր է խաղում միգրանտի կողմից պրակտիկայի համարժեքորեն մեկնաբանումը: Այսինքն, ընդունող հասարակությանը բնորոշ մեկնաբանությունների կամ տեքստերի համարժեք ընկալումը և ներկայացումը: Տեքստային մակարդակում միգրանտի ինտեգրվելը առաջացնում է մի շատ նշանակալի փոփոխություն: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Ն.Էլիասի կողմից ներկայացված այն երևույթին, որը նա անվանել է *արտաքին ստիպողականության տակ իրականացվող հանրային պրակտիկաներից անցում սեփական համոզմունքից բխող պրակտիկաների* (Elias 2000. 173-180): Տեքստի յուրացումը նպաստում է, որպեսզի միգրանտը ընդունող հասարակության պրակտիկաները իրականացնի ոչ թե արտաքին ստիպողականության տակ, այլ՝ սեփական գիտակցման հիմքի վրա: Այս դեպքում, հանրային պրակտիկաների մակարդակում նվազագույնի է հասնում ընդունող հասարակության ու միգրանտի միջև կոնֆլիկտայնության աստիճանը: Փոխհարաբերությունները մշակութային տարբերակման մակարդակից տեղափոխվում է անհատական մակարդակ: Այս առումով, հետաքրքիր է դիտարկել վերադարձող միգրանտների այն վարքագիծը, երբ հայտնվելով Հայաստան թոչող ինքնաթիռում, ոմանք արդեն այդտեղ սկսում են մի տեսակ սանձարձակ վարք դրսևորել պատճառաբանելով, թե վերջապես ազատվեցին ընդունող հասարակության կաշկանդող պարտադրանքներից և հարազատ միջավայրում կարող են իրենց մի փոքր ազատ զգալ: Դրանք հիմնականում այն միգրանտներն են, ովքեր միգրացիայի ողջ ընթացքում ընկալել են ընդունող հասարակության հանրային պրակտիկաները որպես արտաքին պարտադրանք, առանց յուրացնելու այդ պրակտիկաների հանրային կարգը կարևորող բովանդակությունները: Իսկ այն միգրանտները, ովքեր յուրացրել են պրակտիկաները տեքստերի ու համարժեք մեկնաբանությունների մակարդակում, նրանց մոտ էլ նկատելի է դառնում քննադատական մոտեցման դրսևորումներ:

Դա, հատկապես, բնորոշ է վերը նշած երրորդ ու չորրորդ դեպքերի տակ խմբավորած միգրանտներին:

Ամփոփելով նկատենք, որ մեր կողմից հարցված միգրանտների մեջ մեծամասնություն են կազմում նրանք, ովքեր չընդունելով հյուրընկալող հասարակության առօրեականության պրակտիկաները, միգրացիայի ընթացքում վարում են գլխավորապես մեկուսի կյանք, միգրացիայի ժամանակահատվածում հիմնականում ապրելով սեզոնային միգրանտներին բնորոշ յուրահատուկ առօրեականությամբ: Միգրանտների մեջ կան նաև այնպիսիները, ովքեր միգրացիայի ընթացքում ստիպված լինելով յուրացնել ու կիրառել ընդունող հասարակության հանրային կյանքին բնորոշ պրակտիկաները, Հայաստան վերադառնալուց հետո հրաժարվում են դրանցից ու նորից անցնում իրենց համար հարազատ համարվող հայաստանյան պրակտիկաներին: Մյուսը, միգրանտների մեջ փոքրամասնություն կազմող այն խումբն է, ովքեր ընդունող հասարակության պրակտիկաներին ցուցաբերելով անհատական մոտեցում, փոխառում են դրանցից որոշներն ըստ իրենց նախընտրության և Հայաստան վերադարձից հետո պահպանում դրանց մի մասը: Այսպիսիները հիմնականում հանդիպում են հարցմանը մասնակցած ուսանողների և արևմտյան երկրներից վերադարձած այն երկարատև միգրանտների մեջ, ովքեր ինտեգրված են եղել ընդունող հասարակությանը:

ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ

Ինչպես արդեն նշել ենք, այս հետազոտության հիմանական օբյեկտը վերադարձած միգրանտներն են, որոնց փորձել են դիտարկել որպես մշակութային միջնորդներ: Մեր խնդիրը չի եղել վեր հանել քանակական կամ վիճակագրական տվյալներ ազդեցությունների ձևերի ու դրանց հասարակական մասշտաբների մասին: Մեզ հետաքրքրում են փոխակերպումների խորքային, որակական առումները, սկսած անհատի ինքնության, կարգավիճակի, ռազմավարությունների ու նպատակների վրա վերադարձի ազդեցությունից, վերջացրած միգրանտների կողմից դրանց տրվող ձևակերպումներով ու հանրային վայրերում այն ներկայացնող (ռեպրեզենտացնող) պրակտիկաներով: Այդ պատճառով էլ, ինչպես միգրացիայի ընթացքում միգրանտի կրած փոփոխությունները հետազոտելու դեպքում, վերադարձից հետո նույնպես դրանց հետևանքների ու ազդեցությունների ուսումնասիրությունը իրականացրել ենք առօրեականության և այն ճանաչելի դարձնող պրակտիկաների հետազոտման միջոցով: Այսինքն, այս բաժնի նպատակը միգրացիայի ընթացքում փոխակերպված պրակտիկաների ազդեցության ուսումնասիրումն է: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում, մի կողմից, առօրեականության պրակտիկաների և, մյուս կողմից, հանրային ու քաղաքացիական պրակտիկաների վրա դրանց ազդեցության խնդրին: Այսինքն, մեզ հետաքրքրող խնդիրը ոչ թե վերադարձի միգրացիայի որակական կողմերն են, այլ՝ վերադարձածների հետմիգրացիոն շրջանի պրակտիկաների փոխակերպումները:

Վերադարձի միգրացիան և վերադարձողների ուսումնասիրության խնդիրը միգրացիայի հետազոտություններում հատուկ տեղ ունի: Վերադարձի միգրացիան ձևակերպելու առաջին փորձերը իրականացրել են Ֆ. Կերասեն (Cerase 1970. 217-239), Ռ. Քինգը (King 1978. 175-182) և Ջ. Գմելը (Gmelch 1980. 135-159): Ռ. Քինգն առաջիններից է, ով փորձել է միգրացիայի ուսումնասիրություններում վերադարձը ձևակերպել որպես հետազոտական առանձին խնդիր: Նա բնութագրել է վերադարձի տեսակները և տվել դրանց վրա ազդող գործոնները: Ռ. Քինգը առանձնացնում է վերադարձի հետևյալ տեսակները. 1) *հազվադեպ վերադարձ (occasional return)*, որը ոչ հաճախ կատարվող կարճատև ուղևորությունից (ճամփորդությունից, գործուղումից և այլն) հետո վերադարձն է: 2) *Սեզոնային վերադարձ (seasonal return)*, որը ներառում է սեզոնային արտագնա միգրանտների պարբերաբար վերադարձը: 3) *Ժամանակավոր վերադարձ (temporary return)*, որը ծագման երկիր վերադարձն է, ինչ-որ ժամանակ անց ռեէմիգրացիայի նպատակով: 4) *Մշտական վերադարձ (permanent return)*, որը ծագման երկիր վերադարձն է՝ այնտեղ վերահաստատվելու մտադրությամբ (King 2000. 10-11):

Սեզ համար առանձնապես հետաքրքիր է Ֆ. Կերասենի մոտեցումը, ով վերադարձի հարցում կարևոր է համարում միգրանտի սկզբնական մտադրության և միգրացիայի ընթացքում կրած մշակութային փոխակերպման խնդիրները: Նա ներկայացնում է վերադարձի 4 ձև 1) *ձախողականների վերադարձ (return of failure)*, որը վերաբերում է իր միգրացիոն նպատակի իրագործման հարցում խոչընդոտների հանդիպած և անհաջողության պատճառով ստիպված իր ծագման երկիր վերադարձած միգրանտներին: 2) *Պահպանողականների վերադարձ (return of conservatism)*, որ վերաբերում է նրանց, ովքեր հաստատվելով և որոշ ժամանակ բնակվելով այլ երկրում, բայց չկարողանալով հաղթահարել նոր միջավայրում հաստատվելու դժվարություններն ու մարտահրավերները՝ վերա-

դարձի որոշում են կայացրել: 3) *Նորարարների վերադարձը (return of innovation)* վերաբերում է այն միգրանտներին, ովքեր յուրացնելով նոր բնակության վայրի արժեքներն ու պրակտիկաները ինչ-ինչ պատճառներով վերադարձի որոշում են կայացրել և վերադառնալով՝ իրենց հետ նոր արժեքներ ու գաղափարներ են բերում: 4) *Թոշակատուների վերադարձ (return of retirement)*, որն ընդգրկում է այն միգրանտներին, ովքեր աշխատունակության տարիներին բնակվելով այլ երկրում, տարիքն առնելուց հետո հետ են վերադարձել հայրենիք (Cerase 1974. 245-262):

Կարելի է ասել, որ ըստ Ռ. Քինգի տիպաբանության, մեր հետազոտությունում առանձին և ընդգծված խումբ են ներկայացնում սեզոնային և մշտական վերադարձածները: Իսկ ըստ Ֆ. Կերասեի առանձնացրած տիպերի, գործ ենք ունեցել հիմնականում ձախողակների, պահպանողականների ու նորարարների վերադարձի հետ:

Մենք նախընտրել ենք միգրանտների նկարագրությունը իրականացնել ըստ վերադարձից հետո նրանց կողմից կիրառվող պրակտիկաների: Մակայն, խնդիր չենք դրել տիպաբանել նրանց ըստ այդ գործոնի, այլ կարևորել ենք վերադարձից հետո նոր պրակտիկաների ազդեցության որակական առումների վերլուծությունը:

3.1. Մասնավորը և հանրայինը սեզոնային աշխատանքային միգրանտների առօրյա պրակտիկաներում Հայաստան վերադարձից հետո. 1-ին հետազոտական դեպք

Որպես հետազոտական դեպք ուսումնասիրվել է առանձին վերցրած մեկ գյուղական համայնք, որտեղ մեծ թիվ են կազմում սեզոնային աշխատանքային միգրանտները: Իրականացվել են քսան անհատական խորացված, երեք փորձագիտական հարցազրույց և ինը ներգրավված դիտարկում: Հետազոտական թիմի անդամներ

րը, դիտարկման նպատակով, հյուրընկալվել ու գիշերել են համայնքի անդամների ընտանիքներում: Որպես հարցորդներ ընտրվել են տասերկու միգրանտներ և ութ միգրացիայի չմեկնող մարդ, որոնցից չորսը միգրանտ ունեցող ընտանիքի անդամ են և չորսը՝ միգրանտ չունեցող: Ներկայացվող հետազոտական դեպքի ուսումնասիրության նպատակն է, դիտարկել թե առանձին վերցրած մեկ համայնքի հանրային կյանքի վրա ինչպես է ազդում սեզոնային աշխատանքային միգրացիան: Հետազոտության համար ընտրվել է Շիրակի մարզի փոքր գյուղական համայնքներից մեկը: Համայնքի ընտանիքների մոտ 70 %-ում կան սեզոնային աշխատանքային միգրանտներ: Պատահում է, որ որոշ ընտանիքներից, սեզոնային աշխատանքի են մեկնում նույնիսկ մի քանի տղամարդ՝ հայրը և չափահասության տարիքի հասած տղաները:

Հատկապես վերջին քսան տարում այս համայնքի համար միգրացիան դարձել է առավել բնութագրական երևույթներից մեկը: Այն կյանքի նպատակների իրականացման ուղղված հիմնական մարտավարություններից է: Հարցման մասնակիցների կարծիքով միգրացիայի արդյունքում բավարարվում են գլխավորապես մի քանի տեսակի պահանջմունքներ: Առաջինն, իհարկե, ընտանիքի կենսապահովման առաջնային կարիքներն են՝ սնունդը, հագուստը, ձմռանը բնակարանի ջեռուցումը, անհրաժեշտության դեպքում առողջապահական պահանջմունքը: Երկրորդը, համայնքում ընտանիքի հասարակական կարգավիճակը վերաբրտադրելու խնդիրն է: Երրորդը, կրթական պահանջմունքներն են: Մասնավորապես, միգրացիայի շնորհիվ վաստակած գումարներով հնարավոր է լինում հոգալ երեխաների բարձրագույն կրթություն ստանալու ծախսերը: Չորրորդը, հասարակական կարգավիճակի ձևավորման պահանջմունքն է: Կարևոր խնդիր է համարվում համայնքում ընտանիքի արժանապատիվ ապրելակերպը և բարօրության աստիճանը ներկայացնող սոցիալական ցուցիչների ձևավորումը: Դրանք, հատկապես, վերաբերում են համեմատաբար թանկարժեք

հագուստին ու զարդերին, բնակարանի վերանորոգմանը, ավտոմեքենային և սոցիալական նշանակություն ունեցող միջոցառումների ու հանդիսությունների կազմակերպմանը: Մասնավորապես կարևոր է համարվում Նոր տարվա տոնակատարությունը ճոխ սեղաններով նշելը և հարսանիքների կազմակերպումը:

Էս պահի դրությամբ, եթե մենք հաշվում ենք, գյուղում էս վերջին տարիներին յոթ-ութ ավտոմեքենա ավելացել է: Այսինքն պարզ է, որ որոշ փոփոխություններ կան: Ուրիշ օրինակ բերեմ: Էն տարիներին էդքան հարսանիք չի եղել գյուղում, ինչքան էս վերջին երկու տարվա մեջ:

37 տարեկան, տղամարդ,
գ. Արփենի

Հատկանշական է, որ համայնքից միգրացիայի մեկնողները բոլորն էլ մեկ նպատակ են կարևորում՝ գումար վաստակելը: Այսինքն, վերադառնալուց հետո իրենց հետ նրանք հիմնականում բերում են տնտեսական կապիտալ: Սակայն, կարևոր է նկատել, որ բերված տնտեսական կապիտալի մի մասը տրամադրվում է ընտանիքի կենսապահովման կարիքների բավարարմանը, իսկ մի մասն էլ վեր են ածում սոցիալական ու մշակութային կապիտալներին: Տնտեսական կապիտալը մշակութայինի տրանսֆորմացման հիմնական ձևը երեխաներին բարձրագույն կրթության տալն է: Նման ծախսեր են նշել համայնքի անդամ հանդիսացող 18 հարցվածներից 7-ը:

Հիմնականում կենցաղային հարցեր ենք հոգում՝ հագնել, ուտել: Հետո որ երեխեքս մեծացան արդեն ուսման ծախս առաջ եկավ: Տղաս երկրորդ կուրսում ա սովորում: Հետո կինս ընդունվեց Գյումրիի մանկավարժական համալսարանը: Հինգ տարի սովորեց հեռակա, որ չկրճատվի, դպրոցում դաս էր տալիս: Տանեցիք էլ են զգում, որ չգնամ իրանք շատ բաներից հետ կմնան: Դե

*ուսում է, հազնել է, կապել: Քանի կերթա գիտությունը
կգարգանա, նոր բաներ կուզեն: Դե մեր ժամանակ ու-
րիշ է եղել, հիմա շատ բան կփոխվի:*

42 տարեկան, տղամարդ,
գ. Արփենիկ

Ավելորդ չէ նշելը, որ այս երևույթը բնորոշ է ոչ միայն մեր ուսումնասիրած համայնքի դեպքին, այլև՝ ողջ Հայաստանին (Hakobyan 2009. 123-128): Գյուղացիների կողմից կարևորվող մեկ այլ ներդրում է համարվում համայնքում ընտանիքի ու դրա գլուխը հանդիսացող տղամարդու կարգավիճակի ձևավորման ոլորտը: Նշվածը կարևոր է համարվում նաև չամուսնացած տղաների համար: Նրանք նույնպես կարևոր նշանակություն են տալիս նման ծախսերի իրականացմանը: Հիմնականում դա վերաբերում է ներկայանալի և թանկարժեք հագուստին, ոսկյա շղթային, հնարավորության դեպքում նաև արտասահմանյան մակնիշի ավտոմեքենային: Այս առումով, չափազանց հատկանշական օրինակ կարելի է համարել համայնքում մեր իրականացրած դիտարկումների նյութը: *Արփենին* չափերով փոքր գյուղ է, որի մի ծայրից մյուսը քայլելով հնարավոր է անցնել 20-25 րոպեում: Փաստացի 262 ընտրող, այսինքն չափահաս բնակիչ ունեցող համայնքից շուրջ 90-100 տղամարդ ամեն տարի մեկնում է արտագնա սեզոնային աշխատանքի: Վերադառնալուց հետո կարևոր նպատակներից մեկը արտասահմանյան մակնիշի ավտոմեքենա գնելն էր: Որոշ տների առջևում կարելի էր նկատել արտասահմանյան մակնիշի որևէ մի մեքենա: Չնայած գյուղի փոքրությանը *խուպանչի* տղաները գերադասում էին գյուղի մեջ մեքենայով տեղաշարժվել: Այն հարցին, թե ինչու են նրանք նախընտրում այդ փոքր տարածքում մեքենայով շրջել, այլ՝ ոչ թե ոտքով, նրանցից մեկը բացատրեց, որ իրենց համար հարգի է (պրեստիժային է) նոր գնած մեքենայի ցուցադրումը: Կարգավիճակի մեկ այլ կարևոր ցուցիչ է համարվում բնակարանի վերանորոգումը, կահույքն ու կահկարասին: Մեկ այլ կարգավիճա-

կային ցուցիչ էլ համարվում է Նոր տարուն ընտանիքի տոնակատարության ճոխության աստիճանը: Որպես ճոխության գնահատման ցուցիչ համարվում է տոնական սեղանի պարունակությունը:

Ով լավ փող ա բերում՝ ավտո ա առնում, տան կահույք: Դե աղջիկ-տղա են նշանում, էդ ծախսերն են հոգում: Առանց դրա չեն կարողանում ապրել, երեխեն կուզե ուսանող էղնի, տնեցիք կուզեն տան համար լավ բաներ առնեն, կուզեն մի հաստ ավտո առնել:

62 տարեկան, տղամարդ,
գ. Արփենի

Այսինքն, կարելի է ասել, որ միգրացիայի արդյունքում ձեռք բերվող հիմնական օգուտը տնտեսական կապիտալի հայթայթումն է, որն առաջնային կարիքների բավարարումից հետո, որոշ դեպքերում փոխակերպվում է նաև մշակութային ու սոցիալական կապիտալների և նպաստում, մի կողմից, ընտանիքի կարգավիճակի բարելավմանը, մյուս կողմից, ընտանիքի որոշ անդամների բարձրագույն կրթություն ստանալուն ու դիպլոմավորվելուն: Միգրացիայի շնորհիվ մշակութային ու սոցիալական կապիտալների աճի մեկ այլ դրսևորում է համարվում երիտասարդների արհեստագործական հմտությունների զարգացումը:

Գնացողներից երիտասարդների մեջ արհեստավորներ չեն եղել: Հիմա արդեն դրանց հիմնական մասն արհեստավոր է դարձել: Եթե գյուղում մնային, ոչ մի բան չէին սովորելու: Բայց հիմա իրանց արած գործերի նկարները համակարգչով նայում են, զարմանում: Լուրջ գործեր են անում ու երևում է, որ լավ արհեստավորներ են: Ես միշտ ասել եմ, որ դուրս գնալը պետք է: Մեր նման հեռավոր գյուղերում ասում են. «գյուղը ձոր է, մինչև դուրս չգաս, ոչ մի բան չես տեսնի»:

37 տարեկան, տղամարդ,
գ. Արփենի

Ինչ վերաբերում է միգրանտների անհատական ու հանրային պրակտիկաների փոփոխման խնդրին, ապա որոշ փոխակերպումներ նկատելի են հատկապես երիտասարդ տղաների մոտ: Նրանցից շատերը հակված են սեգոնային միգրացիան դարձնելու իրենց կենսակերպը պայմանավորող կարևոր պրակտիկաներից մեկը: Այն վեր է ածվել ապրելու մարտավարության:

Իրենց համար խոսքի գնալ-գալը դառնում է ապրելակերպ: Ուրիշ ճանապարհ չեն գտնում գումար վաստակելու: Ու ոնց հասկացել եմ, էդ գնացողները միշտ ուզում են գնան: Եթե էստեղ էլ առաջարկ լինի աշխատանքի, երևի գերադասեն դուրս գնալը: Ինձ թվում է իրենց ավելի էդ ապրելակերպն է դուր գալիս:

29 տարեկան կին,
գ. Արփենի

Ինչպես համայնքի անդամների հետ զրույցի ընթացքում հումորով նկատեց մի ծերունի, «դրանք նման են չվող թռչունների: Իրենց մոտ ռեֆլեքս է, հենց գարունը բացվեց, չվում են Ռուսաստան: Մի քիչ որ երկար մնան գյուղում, կարողա հիվանդանան»: Ինչպես երիտասարդների, այնպես էլ նրանց ծնողների ու հարազատների հետ անցկացված հարցազրույցները այդ մասին են վկայում: Նրանցից շատերն արդեն հետ են վարժվել գյուղական աշխատանքներից ու հրաժարվում են գյուղական կյանքի պրակտիկաներից:

Մանավանդ էն փոքր տղես, կըսե՝ պապ չհավատաս, որ ես գյուղ ապրեմ: Հմի գյուղը ինչ կա: Հըրը հոգսերը: Գյուղում հեշ ժամանցի տեղ չկա,

54 տարեկան, տղամարդ,
գ. Արփենի

Իրենք կերթան հանգիստ կյանքը կտվորին, կուզան ու էլ գյուղի գործ չեն ուզե էնեն: Դե էս ջահելությունը գյուղի հետ կապված բան չի սիրե: Մեկն իմ ամուսինը: Հավես չունի կովերի, գյուղի գործի: Ինքը չի ձգտե նման

*քաների: Ըսպես, էս մի քանի ամիսը մինչև խոպանի սե-
զոնը կուգա, նորից կերթան:*

27 տարեկան, կին,
գ.Արփենի

Միջին տարիքի տղամարդիկ նույնպես, ովքեր մեկնում են սեզոնային միգրացիայի, իրենց ընտանիքի համար անհրաժեշտ գյուղատնտեսական այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են խոշոր ու մանր եղջերավոր կենդանիների խնամքը, խոտ հնձելը և այլն, ավելի շատ հակված են կազմակերպել աշխատողներ վարձելու միջոցով:

Ես ինչքան նկատել եմ, իրենք վերադառնալուց հետո դժվարությամբ են հարմարվում նախկին գյուղական կյանքին: Դե իրենք հիմնականում էնտեղ քաղաքներում են աշխատում: Հետ գալով իրենց ավելի հեռու են պահում գյուղատնտեսական գործերից: Հատկապես ջահելները:

32 տարեկան, կին,
գ.Արփենի

Նրանցից որոշները Ռուսաստանում աշխատելու նպատակներից մեկն էլ համարում են իրենց ընտանիքին անհրաժեշտ գյուղատնտեսական աշխատանքների համար վարձակալվող աշխատուժի վարձավճարները ձեռք բերելը:

Հետևանքը կարելի է համարել այն, որ չնայած սեզոնային աշխատանքների մեկնող տղամարդիկ իրենց կապված են զգում իրենց բնակավայրի հետ, սակայն, պարբերական միգրացիայի պատճառով համայնքի խնդիրներով առանձնապես տեղեկացված ու մտահոգ չեն: Հիմնական պատճառն այն է, որ իրենց աշխատանքն ու վաստակը կապված չէ բնակավայրի հետ, ուստի և չունեն տնտեսական շահագրգռվածություն համայնքի հանրային խնդիրներով հետաքրքրվելու համար: Անցկացնելով համայնքում տարվա մեջ 4-5 ամիս, նրանք այդ ամիսները հաճախ ընկալում են,

որպես ընտանիք վերադարձի, տեսակցության ու հանգստի ամիսներ, որից հետո ընտանիքի համար վաստակ ապահովելու նպատակով նորից պետք է հեռանան Ռուսաստան:

Իրենք ինչքան դուրս կուզան էնքան կշահագրգռվին գնալով: Ըտենց մարդկանց մոտ ընտանիքը մի տեսակ երկյոռոդ պլան կգնա: Էնքան որ փող աշխատեն, տուն ուղարկեն: Ուրիշ բանով չեն հետաքրքրվի: Մի քանի ամիս կմնան գյուղում, կձանձրանան: Ինչքան հնարավորություն ունենան, շուտ կերթան:

47 տարեկան տղամարդ,
գ. Արփենի

Մի կողմից, այս տրամադրվածությունը, մյուս կողմից էլ այն, որ նրանց տնտեսական շահերն ավելի շատ կապված են Ռուսաստանի, քան թե իրենց համայնքի հետ, միգրանտների մոտ չեն ձևավորում նաև համայնքի հանրային և քաղաքացիական կյանքին մասնակցության տնտեսական շահագրգռվածություն: Կարելի է ասել, որ սեզոնային աշխատանքային միգրացիան նպաստում է համայնքի տնտեսական ակտիվության տարիքի տղամարդկանց մի զգալի մասի մոտ համայնքի հանրային կյանքի ու խնդիրների հանդեպ անտարբերության ու կրավորական վարքի ձևավորմանը: Միևնույն ժամանակ, արտագնա սեզոնային աշխատանքի շնորհիվ նրանց ձեռք բերած տնտեսական կապիտալը թույլ է տալիս գյուղում մնացած մյուս տղամարդկանց համար ձևավորել վարձու աշխատանքով զբաղվելու հնարավորություն: Վերջինս տնտեսական հարաբերությունների տեսանկյունից նոր երևույթ է գյուղի համար: Դեռևս դժվար է դատողություններ անել հանրային կյանքի վրա այս երևույթի թողած հետևանքների մասին: Բայց փաստ է, որ այս երևույթը ձևավորում է համայնքում աշխատանքային հարաբերությունների դիֆերենցման միտում.

Տղամարդկանց կեսը մնում է համայնքում: Ու մնացողների համար գործ է բացվում: Մնացողները գնացածների ընտանիքների համար փողով գործ են անում:

37 տարեկան, տղամարդ,
գ. Արփենի

Միգրացիայի ազդեցություններից մեկն էլ այն է, որ տղամարդկանց երկարատև բացակայության պատճառով ուժեղանում է կանանց դերը ինչպես ընտանիքում, այնպես էլ համայնքում: Եթե տղամարդու ընտանիքում գտնվելու պարագայում շատ հարցերի շուրջ որոշումները տղամարդունն էր, ապա, նրանց բացակայության ամիսներին, կանայք ստիպված են լինում իրենք որոշումներ կայացնել: Այս առումով, չնայած ոչ մեծ, բայց որոշ փոփոխություն կարելի է համարել նաև կանանց կողմից որոշումների կայացմանը մասնակցելու պրակտիկայի մասնակի դրսևորումները:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ միգրացիան համայնքի կյանքում հանրային և քաղաքացիական նոր պրակտիկաների ձևավորման առումով նկատելի դեր չի կատարել: Դրա հիմնական դրական ազդեցությունը տնտեսական կապիտալի ներհոսքերի ապահովումն է, որը նպաստում է ընտանիքի գոյատևման խնդիրների լուծմանը և սոցիալական կապիտալի վերարտադրությանը: Սեզոնային միգրանտները նպատակաուղղված լինելով տնտեսական կապիտալի ձեռք բերմանը, ընդունող հասարակության հետ շատ սերտ հարաբերություններ չեն հաստատել և առիթ չեն ունեցել լիարժեք կերպով ներգրավվելու նրանում: Նրանք ապրել են միգրանտական առօրյայով, քննադատորեն ու մերժողաբար են վերաբերել ընդունող հասարակության ինչպես անհատական, այնպես էլ հանրային պրակտիկաներից շատերին:

Որ վերցնես, մեր գյուղն ու ընդեղ շատ տարբերություն կա: Բայց ես ըտենց շատ չեմ շփվում իրենց կյանքին: Ես գիտեմ իմ գործը: Որ ընգնիս ռուսների խելքին, ուրիշ մարդ կդառնաս: Բայց ես ըտպես չեմ մտածե: Ես ու իմ

գործս ու ուշք ու միտքս ստեղ: Ստեղի համար կաշխատիմ:

28 տարեկան, տղամարդ,
գ. Արփենիկ

Այսինքն, ակնհայտ է, որ սեզոնային միգրանտներից շատերը, չնայած իրենց ժամանակի մեծ մասն անցկացնում են օտար միջավայրերում, սակայն իրենց համար իրական կյանքը ոչ թե միգրացիայի վայրում է, այլ՝ իրենց տանը: Նրանցից շատերի համար միգրացիայի վայրը ոչ թե ապրելու, այլ՝ ընդամենը գումար վաստակելու մի տեղ է: Այդ պատճառով էլ, նրանք առանձնապես շահագրգռվածություն չեն ցուցաբերում ընդունող հասարակության արժեքները յուրացնելու հանդեպ: Ընդունող հասարակությունը նրանց հետաքրքրում է ընդամենը նյութական արժեքների, մասնավորապես փող վաստակելու առումով, այլ՝ ոչ հանրային կամ քաղաքացիական արժեքների:

Դե իրենք դրսի կյանքի մեջ շատ բաներ են հավանում, բայց շատ ազատություններ քննադատում են, մտածում են լավ ա, որ մեզ մոտ չկա,

29 տարեկան, կին,
գ. Արփենիկ

Նրանք ավելի հետաքրքրված են հայրենիքում իրենց կարգավիճակի վերարտադրությամբ: Իսկ ընդունող հասարակությունում կարգավիճակի խնդիրն իրենց հետաքրքրում է այնքանով, որ չխանգարի անհրաժեշտ գումարը վաստակելուն:

Սակայն, դրանով հանդերձ, ձեռք բերելով իրենցից տարբերի հետ շփվելու փորձառություն, նրանց մոտ տեղի է ունենում մտահորիզոնի և տեղեկատվության ընդլայնում: Ճիշտ է, հիմնականում նրանք նշում են, որ իրենց հոգեհարազատ չէ ռուսաստանցիների ապրելակերպը, սակայն, մյուս կողմից էլ, ոմանք, հատկապես երիտասարդները, սովորելով ավելի աշխույժ միջավայրերում ապրե-

լուն, քննադատական հայացք են ձեռք բերում նաև գյուղական իրողությունների հանդեպ:

Սեզոնային միգրանտների կողմից համայնքի վրա ազդեցությունը ավելի շատ նկատելի է նյութական, քան վերացական արժեքների առումով: Այնպիսի վերացական արժեքներ, որոնք վերաբերում են քաղաքացիական հասարակությանն ու ժողովրդավարությանը սեզոնային միգրանտների պրակտիկաները չեն ձևավորում:

3.2. Վերադարձած միգրանտները քաղաքացիական շարժումներում և նրանց առօրյա պրակտիկաները. Հետազոտական դեպք - 2

Վերադարձած միգրանտների ազդեցությունը Հայաստանի հանրային կյանքի ու, մասնավորապես, քաղաքացիական հասարակության ձևավորման վրա գնահատելու նպատակով իրականացվել է առանձին վերցրած հետազոտական մեկ դեպքի ուսումնասիրություն: Որպես դեպք ընտրվել է վերջին տարիներին ամենից նշանակալից քաղաքացիական նախաձեռնություններից մեկը՝ Մաշտոցի պուրակի պաշտպանությանը նվիրված շարժումը: Քաղաքացիական նախաձեռնությունը ծավալվեց այն բանից հետո, երբ Երևանի քաղաքապետարանը որոշում ընդունեց Երևանի Մաշտոցի պողոտայի միջնամասում գտնվող պուրակներից մեկի կանաչապատ տարածքը տրամադրել մասնավոր ձեռներեցներին, այնտեղ առևտրական կրպակներ կառուցելու նպատակով: Կրպակների շինարարության հենց առաջին օրերին մի խումբ երիտասարդներ սկսեցին բողոքի ակցիա ընդդեմ հանրային տարածքը մասնավոր բիզնեսին տրամադրելու քաղաքապետարանի որոշման, հայտարարելով այն անօրինական: Ակտիվիստների պահանջներն էին դադարեցնել կրպակների շինարարությունը կանաչ տարածքում, դադարեցնել ծառահատումները և վերականգնել վնասված կանաչապատ տարածքները, պատժել անօրինական

որոշում ընդունած պաշտոնյաներին: Քաղաքացիական շարժումը տևեց շուրջ երեք ամիս և ավարտվեց ակտիվիստների պահանջներից առաջին երկուսի բավարարմամբ: Չնայած պուրակում շինարարությունն արգելվեց և այն կանաչապատվեց ու վերականգնվեց, սակայն ակտիվիստները դժգոհ էին, որ մեղավոր պաշտոնյաները պատասխանատվության չենթարկվեցին:

Որպես հետազոտական դեպք, այս քաղաքացիական նախաձեռնությունը մեզ հետաքրքիր է այն բանով, որ ակտիվիստների մեջ կան նաև վերադարձած ուսանող և երկարատև միգրանտներ: Մեր հետազոտության դեպքի նպատակն էր ուսումնասիրել, թե ինչ դերակատարում են ունեցել այս միգրանտները քաղաքացիական նախաձեռնության մեջ և ինչ պրակտիկաներ են նրանք հիմնականում ձևավորել ու տարածել: Հետազոտական դեպքի շրջանակում իրականացվել է 21 անհատական խորացված հարցազրույց և 11 ներգրավված դիտարկում: Հետազոտական համեմատական տվյալներ ձեռք բերելու նպատակով, ընտրվել են ինչպես միգրանտ, այնպես էլ՝ ոչ միգրանտ ակտիվիստներ: Հետազոտության իրականացման ընթացքում նպաստավոր պայմաններ էին ստեղծվել այն առումով, որ Մաշտոցի պուրակին նվիրված նախաձեռնության մասնակիցներից շատերը մասնակցում էին այդ ժամանակ տեղի ունեցող այլ քաղաքացիական նախաձեռնությունների: Իրականացված դիտարկումները թույլ են տվել վեր հանել միգրանտ և ոչ միգրանտ ակտիվիստների պրակտիկաներին վերաբերող որակական հետազոտական տվյալներ:

Վերադարձած միգրանտ ակտիվիստների հետ իրականացված հարցազրույցների տվյալները թույլ են տալիս անել մի շարք եզրահանգումներ: Նախ, այս միգրանտների նպատակը ի տարբերություն սեզոնային աշխատանքային միգրանտների ուղղորդված է եղել առաջնայնորեն ոչ թե տնտեսական, այլ՝ մշակութային կապիտալի ձևավորմանը: Մշակութային կապիտալի ձևավորմանն ուղղված նրանց պրակտիկաները նպաստել են չորս հիմնական

փոփոխության: Դրանցից մեկը վերադարձած միգրանտների մասնագիտական գիտելիքի ու ունակությունների զարգացումն է: Երկրորդը, վերադարձից հետո նրանց առօրեականության և ապրելակերպի փոփոխություններն են: Երրորդը, մտահորիզոնի, արժեքների ու ընդհանուր տեղեկացվածության մակարդակի աճն է և, չորրորդը՝ ինքնուրույնության աճը և անհատականության կայացումը՝ սեփական սուբյեկտության ձևակերպման ճանապարհով ու դրան համարժեք պրակտիկաների արմատավորումը:

Վերադարձած միգրանտ ակտիվիստների հարցազրույցներում միգրացիայի նկատելի ազդեցություններից մեկը համարվում է առօրեականության մեջ եղած փոփոխությունները: Հատկապես, կարևորվում են տարածության, ժամանակի, հագուստի, որոշ դեպքերում նաև սննդի պրակտիկաների փոփոխությունները:

Որպես կանոն, հետազոտական դեպքի բոլոր մասնակիցներն էլ ինչպես միգրացիայի վայրում այնպես էլ Հայաստան վերադարձից հետո, ունեցել են ժամանակի կազմակերպման ու իրացման պրակտիկաների զգալի փոփոխություններ: Ժամանակի կազմակերպման հարցում առանցքային է համարվում ինքնուրույնությունը և հեռանկարային պլանավորումը:

Ժամանակի կազմակերպման հարցում էլ իհարկե ինքնուրույն եմ դարձել: Չեմ ապի իդեալական եմ կազմակերպում, բայց դե ավելի հեռատես եմ դարձել, երկարատև հաշվարկով եմ կազմակերպում օրս, ոչ միայն տվյալ մի քանի ժամի:

Կին, 23 տարեկան,
ք Երևան/ԱՄՆ (Ֆլորիդա)

Հետազոտական դեպքի շրջանակներում հարցմանը մասնակցած վերադարձածների մեջ փոխվել են նաև տարածության կազմակերպման պրակտիկաները: Նախ, դա վերաբերում է իրենց անձնական տարածքի կազմակերպման խնդրին: Նկատելի են երկու տեսակի փոփոխություն: Առաջինն այն է, երբ վերադարձած ե-

րիտասարդը չնայած շարունակում է ապրել ծնողների հետ նույն բնակարանում, սակայն նա ունի իր տարածքը դրանում ու ծնողների մասնակցությունը այդ տարածքի կազմակերպման գործին նվազագույնի է հասցված: Երկրորդն այն է, երբ վերադարձածը նախընտրում է ապրել իր վարձակալած բնակարանում: Հանդիպում են դեպքեր, երբ բնակարանը վարձում են մի քանի ընկերներով համատեղ: Բնակարանային ընկեր ընտրելու հարցում կարևորությունը տրվում է ոճերի ու հետաքրքրությունների ընդհանրությանը: Նկատենք, որ խնդիրը վերաբերում է ոչ այնքան մենակ ապրելուն, որքան ինքնուրույն ապրելու տարածք ունենալուն: *Սեփական տարածք ունենալու խնդիրը շատերը կապում են իրենց կարգավիճակի փոփոխության հետ: Կարգավիճակում տեղի ունեցած փոփոխությունը հիմնականում ձևակերպվում է, որպես ինքնուրույն ու անկախ մարդ դառնալ: Վերադարձից հետո կարգավիճակի փոփոխությունը ձևավորում է նոր նպատակներ: Շատերի կողմից հենց այս առումով է կարևորվում ապրելու սեփական տարածք ունենալը: Այսինքն, տարածությունը դիտվում է որպես սեփական նպատակների ու դրանց իրագործման համար անհրաժեշտ պրակտիկաների իրացման կարևոր պայման: Լայն առումով, այն դառնում է անձի ինքնաիրացման ու առաջընթացի նախապայման: Այստեղ կարծեք թե նորից գործ ունենք Մ. դե Սերտոյի այն դիտարկման հետ, թե ստրատեգիաներ իրացնելու համար մարդիկ անհրաժեշտություն ունեն այնպիսի մի տեղի, որտեղից կկարողանան կազմակերպել դրանց իրագործումը (Certieu 1984. 36)*

Նկատենք, որ վերադարձից հետո տարածության կազմակերպման պրակտիկաների փոփոխությունը հաճախ դիտարկվում է մասնավոր ու հանրային պրակտիկաների փոխկապվածության համատեքստում:

Կարող եմ ասել, որ դրսում լինելը իմ վրա բավականին ազդեց: Հիմնականը մի կետով ասեմ, դա ազատության պահանջն է, ազատ ապրելու, անգամ առանձին ապրե-

լու պահանջը, քանի որ էտ երկու տարվա ընթացքում
ես առանձին էի ապրում: Երբ հետ ես գալիս ընտանիք,
շատ ավելի դժվար է լինում դասավորել առօրյան, քանի
որ ստիպված ես լինում հաշվետու լինել: Դրա համար
ազատության ես ձգտում: Ավելի շատ ազատության ես
ձգտում, քան առանձին լինելու: Նույնը դրսևորվում է
նաև հասարակական մակարդակում: Երկու տարի ապ-
րելով ավելի հանդուրժող, միմյանց հանդեպ բարյացա-
կամ տրամադրված հասարակությունում ու հետ գալով
քո հասարակությունը, բախվում ես խնդիրների ու ավե-
լի դժվար ես սկսում դրա հետ համակերպվել: Հետևա-
բար, դառում ես ավելի ակտիվ, քանի որ հասարակա-
կան փոփոխությունների պահանջ ես զգում: Էդ առու-
մով կարող եմ ասել, որ դրսի կրթությունը խթանում է
դառնալու ավելի ակտիվ քաղաքացի, առաջացնում է
այդպիսի ձգտում:

Կին, 24 տարեկան,
ք.Երևան/Հունգարիա (Բուդապեշտ)

Տարբեր են նաև նրանց հագուստի պրակտիկաները: Կար-
ևնորվում է ոչինչ չպարտադրող, պաշտոնականություն ու հիարար-
խիկ հարաբերություն չնշող և հատուկ ուշադրություն չգրավող
հագուստը: Աղջիկների կողմից բացասական է գնահատականը,
հատկապես, կյանքի առօրյա իրավիճակներում բարձրակրունկներ
հագնելը: Հատկանշական է, որ եթե սեզոնային աշխատանքային
միգրանտների համար հագուստը կարևոր էր իրենց կարգավիճա-
կի առավելություն ձևավորելու համար, ապա այս դեպքում կար-
ևնորվում է հարմարավետությունը, պարզությունը:

Անհատի առօրեականության պրակտիկաների փոփոխու-
թյունը ազդում է նրա ռճականության վրա ու պայմանավորում նաև
նրա կողմից հանրային ու քաղաքացիական կյանքում իրացվող
պրակտիկաների բնույթը: Այս առումով, հետաքրքիր է հարցման
մասնակիցներից մեկի հետևյալ մեկնաբանությանը.

Շատ է ազդում: Էտ ամեն փոքր բանը գումարվում ու դառնում է քո քաղաքացի լինելը: Էտ մանր-մանր բաները՝ ուտելիքից սկսած, որ գումարվում ու քեզ սարքում են մի մարդ, ով, նախ, կարծիք ունի հարցերի շուրջ: Ով կարող է ինքնավերլուծություն կատարել ու հասկանալ ինքն իրեն: Երկրորդ, ով պրոակտիվ է: Ով ուզում է փոխել ինչ-որ մի բան: Ուզում է, որ լավ լինի բոլորի համար: Տեսնում ես ինչքան վատ բաներ են կատարվում աշխարհում, որոնք մեզ մոտ դեռ չեն կատարվում, ու ուզում ես կանխել դա: Որ մեզ մոտ օրինակ ոչ մեկ դպրոց չի մտնի թու-թու-թու, ու բոլորին սպանի: Ուզում ես հասկանալ ինչն է պատճառը, որ մեզ մոտ չի կարող նման բան լինել ու որ դա պահպանես: Կամ, որ մեզ մոտ չեն հասկանում, որ կառավարությունը պետք է լինի հասարակության ծառան: Կամ ընտրության յոթ-վունքը դրսում ոնց է գործում, ինդիվիդուալիզմը: Ուզում ես ստեղծել լինի, որ մարդկանց համար լավ լինի: Մարդիկ երջանիկ լինեն:

Կին, 25 տարեկան,
ք. Երևան, / ԱՄՆ

Ինչ վերաբերում է միջանձնային ու հանրային փոխհարաբերությունների խնդրին, ապա այս դեպքում ակնհայտ է ոչ նյութական, վերացական արժեքների հիմքի վրա համագործակցության պրակտիկաների դերը: Մասնավորապես, համագործակցություն ձևավորող արժեքների թվին են պատկանում ազատության, հավասարության, ինքնուրույնության, հանդուրժողականության, արդարության անհատի ազատ ընտրության գաղափարները:

Հարցազրույցներում հաճախ կարևորվող հարցերից մեկն էլ վերաբերում է ճշմարտության խնդրին: Հետաքրքիր է, որ այս խնդիրը հաճախ քննարկվողներից է: Դա կապված է միգրանտի կյանքի այն առանձնահատկության հետ, որ նա միշտ առնչվում է իրենից տարբերին ու կանգնում այն հարցի առջև, թե, որն է ճիշտը: Սա կարևոր է ընտրություն կատարելու ու կողմնորոշվելու առու-

մով: Եվ եթե սեզոնային միգրանտների մոտ հիմնականում կարելի էր հանդիպել սեփականը որպես միակ ճիշտ ապրելու ձև մեկնաբանելը, ապա այս պարագայում օրինակներն այլ են: Ճշմարտության մասին դիսկուրսը այստեղ միաձուլված է հանդուրժողականության, տարբերի ճանաչման ու ընկալման հարցերի հետ: Ճշմարտության միակ ու բացարձակ լինելու ընկալումը շատերի մոտ փորձառությանը զուգահեռ փոխվում է: Ձևավորվում են ճշմարտության նոր մեկնաբանություններ, դրա փոփոխական լինելու և դրան հասնելու ուղիների բազմազանության մասին: Այն մասին, որ ճշմարտությունները ձևավորում են ոչ թե իշխանություն ունեցող ինչ-որ հեղինակություններ, այլ՝ ամեն մարդ ինքը՝ իր ինքնության իրացման հրամայականից ելնելով: Որ ճշմարտությունները անհատական բնույթ ունեն ու չկան գերակա ու ստորադաս ճշմարտություններ: Կան զուգահեռ ճշմարտություններ, որոնք ձևավորում են անհատները ու հենց դրանց շնորհիվ էլ ծնվում է մարդու իրացման հնարավորություններն ընդլայնող բազմակարծությունը, բազմազանությունն ու մյուսի ճշմարտության հանդեպ հանդուրժողականությունը:

Այնտեղ հասկացա, որ միակ ճիշտ, ճշմարտություն չկա: Այստեղ միշտ փորձում էին մեզ այնպես դաստիարակել, թե կա ինչ-որ բացահայտ ճշմարտություն: Եվ բոլորը պիտի դրան հասնեն ու ես դրա ազդեցության տակ էի գտնվում: Բայց Եվրոպայում սովորելուց հետո հասկացա, որ ինչ-որ բացարձակ ճիշտ ու սխալ բաներ չկան: Ամեն ինչ շատ հարաբերական է ու անհատական: Հիմա մտածում եմ, որ ամեն մարդ կամ հասարակական խումբ կարող է ուրիշ կողմից մոտենալ նույն հարցին և դրա արդյունքում էտ ճշմարտությունը ուրիշ կդառնա: Եվ դա ինձ սովորեցրեց հարգել ուրիշ մարդկանց կարծիքը ու մոտեցումները:

Կին, 23 տարեկան,
ք.Երևան/Հունգարիա (Բուդապեշտ)

Հարցվողներից շատերը կարևորվում է ոչ միայն քաղաքացիական արժեքներին ու գաղափարներին ծանոթացումը, այլ՝ հենց պրակտիկաների ձեռք բերումն ու կիրառումը: Սա հետաքրքիր է այնքանով, որ գործ ունենք մշակութային կապիտալի ոչ միայն *մարմնավորված*, այլ նաև *առարկայացված* ձևերի փոխառման մասին վկայությունների հետ (մշակութային կապիտալի ձևերի սահմանումը փոխառվել են Պ.Բուրդիեյից. Bourdieu 1986. 47-51):

Ակցիաներին մասնակցելու բան կար, որ են սովորել եմ հենց Շվեդիայում, որովհետև մի քիչ ռադիկալ խումբ էր մեր կուրսը: Ասենք կլիմայի փոփոխության դեմ ցույցի մասնակցող, ֆլեշմոբներ անող: Ենթադրում եմ, գործողության դիմելու էտ քաջությունը ավելի շատ են այդ տեղից եմ ստացել: Ոչ միայն գաղափարը, այլ հենց էտ, որ նաև պետք է կոնկրետ քայլ անես:

Կին, 26 տարեկան,
ք.Երևան/Շվեդիա (Ստոքհոլմ)

Ուսանող միգրանտների մոտ հանրային պրակտիկաների զարգացման վրա ազդել է նաև ուսումնառության շրջանում նման փորձառություն ունենալը:

Ամերիկայում ծնված օրվանից կամավորությունը առօրյաի մի մասն է կազմում: Դա պարտադիր պայման է: Եթե դու դպրոցական ես կամ ուսանող դու համայնքի համար օգուտ պիտի տաս, համայնքի համար աշխատանք կատարես: Էտ մի տարին, որ ես էնտեղ սովորում էի, ունեի համայնքային աշխատանքի լիմիտ, որը պիտի կատարեի: Ավելին անեի՝ խրախուսվում էր, բայց պակաս՝ չէի կարող: Ասեմ, որ էտ շատ լավ է:

Կին, 23 տարեկան,
ք.Երևան/ԱՄՆ

Հարցազրույցների տվյալները ցույց են տալիս, որ որոշ ուսանողներ ունեցել են ոչ միայն հանրային աշխատանքի փորձառություն, այլև՝ քաղաքացիական շարժումների մասնակցության:

Ասեմ, որ ես հենց Կանադայում գտնվելու ժամանակ եմ սկսել ակտիվիզմով զբաղվել: Դրսում գտնվելն այնքանով է նպաստել, որ երբ մենակ եմ եղել, բոլոր առումներով ես եմ իմ գլխի ճարը տեսել: Էդ ժամանակ մի տեսակ հատուկ ազատություն ես զգում: Ու քո մենակ ու ինքնուրույն վիճակը մի տեսակ քեզ քաջություն ա տալիս: Ինչ-որ ուժ ա տալիս, ազատության զգացում ես ունենում, ոչ մեկին չես ճանաչում, էդ դեպքում զգացողություն ես ունենում, որ ինչ ուզեմ, կարող եմ անել: Միզուցե այդ նույն ժամանակ այստեղ լինեի, այդպես նախաձեռնող չլինեի: Մի տեսակ ինքնավստահ ես դառնում:

Կին, 25 տարեկան,
ք.Երևան/Կանադա (Օտտավա)

Երբեմն դրանք վերաբերել են ուսանողական հիմնախնդիրներին, իսկ երբեմն էլ ավելի ընդգրկուն և համահասարակական բնույթ են ունեցել:

Լոնդոնի մեր համալսարանում, եթե ինչ որ շարժումներ էին կազմակերպվում, դրանց էի մասնակցում: Դե օրինակ մեր ուսման վարձերն էին բարձրացրել, պարզ է, որ դա բոլորիս շահերին էր դիպչում: Այնտեղի ակտիվիստների հետ էի ծանոթանում, համ պայքարի մեթոդներին, այդպես փորձ էի ձեռք բերում: Այդ ընթացքում սկսեցի նաև Հայաստանի գործընթացներին էլ հեռվից հետևել, ծանոթներիս հետ կապի մեջ էի:

Ֆրանսիայում մի անգամ գնում էի դասի, ճանապարհին, տեսնեմ, արհմիությունները ցույց են անում: Մի շաբաթ էր էդ արհմիությունների հետ ցույցի էի գնում: Դրանից հետո մի առարկա չստացա, բայց հետո վերահանձնեցի: Բայց դե ահագին փորձ ձեռք բերեցի: Ֆրանսիայի արհմիությունների հետ կոնտակտներ մինչև հիմա էլ ունեմ: Էդ ավելի լավ էր, քան թե մենակ դասի նստելը:

Կին, 31 տարեկան,
ք.Երևան/Անգլիա և Ֆրանսիա

Նկատենք, որ Հայաստան վերադարձից հետո որպես քաղաքացիական ակտիվության աճի վրա ազդող գործոն նշվում է ոչ միայն միգրացիայի ընթացքում հանրային ու քաղաքացիական պրակտիկաների ձեռք բերումը, այլ՝ անհատի հետ կատարվող փոփոխությունները: Խոսքը վերաբերում է ինչպես անհատական մակարդակում առօրեականության պրակտիկաների փոփոխությանը, այնպես էլ ինքնուրույնության և անհատական անկախության ձգտմանը, գաղափարական աճին, քննադատականության պրակտիկաների յուրացմանը և այն ամենին, ինչի արդյունքում անհատի մոտ տեղի է ունենում սեփական սուբյեկտության գիտակցումն ու ձևակերպումը: Հետազոտական տվյալներից ելնելով, կարելի է ասել, որ միգրացիայի ընթացքում անհատական մակարդակում կրած փոփոխությունը ձևավորում է նաև միջավայրի փոփոխության պահանջ:

Ես վերադարձա ու տպավորություն կար, որ ես ավելի շատ եմ փոխվել, քան նրանք ուլքեր մնացել էին Հայաստանում: Անցել էր նույն ժամանակահատվածը իմ համար էլ, իրենց համար էլ: Բայց ես իմ հետ ավելի նոր բան էի բերել ու էտ նորությունը ստեղծի նորությունով ապահովելու խնդիր կար:

Կին, 23 տարեկան,
ք Երևան/ԱՄՆ (Ֆլորիդա)

Որպես միգրացիոն փորձի հետևանք, կարելի է առանձնացնել նաև երկխոսելու, բանակցելու, վեճը դիսկուրսի վերածելու, իրականությունը քննադատորեն մեկնաբանելու, ուրիշի կարծիքին հանդուրժողականորեն վերաբերելու պրակտիկաները:

Իրականում դրսում ուսանածները խմբի մեջ շատ չեն եղել: Բայց, եթե բնութագրենք նրանց, ուլքեր կային, ապա ավելի հանդուրժողական են: Ավելի շատ են լսում ուրիշներին, քննարկելու մշակույթին են տիրապետում: Քո ասածի վրա շարունակում են խոսել, այսինքն, ոչ թե

*մենախոսում են, այլ՝ երկխոսում: Մարդկանց հետ շփումների մեջ են ավելի ազատ ու հեշտ են շփվում: Խմբային աշխատանք էլ, կարծես թե, ավելի լավ են ա-
նում:*

Կին, 31 տարեկան,
ոչ միգրանտ

Ամփոփելով կարող ենք ասել, որ միգրացիայի արդյունքում կրած հիմնական փոփոխությունները, որոնք բնորոշ են քաղաքացիական ակտիվություն ցուցաբերող վերադարձած միգրանտներին, հետևյալներն են.

- ուտեստի, հագուստի, ժամանակի, ժամանցի ու տարածության կազմակերպման առօրյա պրակտիկաներում նորությունների ու փոխառությունների ի հայտ գալը,
- նոր գիտելիքի ու տեղեկատվության ձեռք բերումը,
- այլ մշակույթներին ծանոթացումը և սեփական մշակույթին քննադատական հայացքով նայելու ունակության ու պրակտիկաների ձևավորումը,
- առանձին ապրելու պրակտիկայի ձևավորումը: Ինքնուրույնության աճը և անհատական մտածելակերպի խորացումը,
- ընդհանրապես, երևույթներին քննադատորեն նայելու, քննադատական ունակությունների և պրակտիկաների ձևավորում,
- այլը, տարբերը որպես այլընտրանքային ընկալելու ունակության ձևավորումը,
- հանդուրժողականության ունակության և պրակտիկաների ձևավորումը,
- երկխոսելու պրակտիկաներին տիրապետումը: Հակադրվելը, վեճը երկխոսության վերածելու հմտությունը,

- դիսկուրսիվ պրակտիկաների ձևավորումն ու տարածումը,
- ֆոնային պրակտիկաների փոխակերպումը,
- հանրայինն ու հասարակականը կարևորելու, դրանց հանդեպ ուշադրություն ցուցաբերելու պրակտիկաների ձևավորումը,
- քաղաքացիական ակտիվության ու մասնակցության պրակտիկաների ձևավորումն ու տարածումը:

Ինչ վերաբերում է վերադարձած միգրանտների դերակատարությանը քաղաքացիական ակտիվիզմի ոլորտում, ապա թե նրանց և թե ոչ միգրանտ ակտիվիստների վկայությամբ, միգրացիոն փորձառություն ունեցողները մյուսների համեմատ չեն ունեցել ակնհայտ առավելություն: Բհարկե, չի կարելի ժխտել միգրացիայի խաղացած դերը: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ քաղաքացիական ակտիվիզմի մեջ ներգրավված վերադարձած միգրանտներից որոշները, մինչև միգրացիան էլ են աչքի ընկել իրենց նախաձեռնողականությամբ ու նպատակամղվածությամբ: Այն, որ նրանք ձգտել են միգրացիայի միջոցով ձեռք բերել նոր հմտություններ, փոխել իրենց հասարակական կարգավիճակը ու հասնել իրենց նպատակներին, դա արդեն իսկ նրանց ակտիվության ցուցանիշ է: Այս առումով դիպուկ է հարցման մասնակիցներից մեկի հետևյալ նկատառումը.

Իրենք ակտիվ են ոչ այնքան այն պատճառով, որ դրսում սովորել են, այլ՝ ի սկզբանե եղել են ակտիվ, դրա համար էլ գնացել են դուրս սովորելու: Այսինքն, ներքին էլ զարգացման ձգտումը արդեն խոսում է այն մասին, որ ինքը ակտիվ մարդ է: Այսինքն չես կարող խիստ հստակ ասել, ինքը ակտիվիստ է, որովհետև ինքը դրսում է սովորել, թե՛ ինքը դրսում սովորել է, որովհետև ակտիվ ու գիտակից մարդ է:

Կիև, 41 տարեկան,
ք.Երևան/ԱՄՆ

Կարելի է ասել, որ վերադարձած միգրանտներից քաղաքացիական հասարակության կայացման գործընթացներում մասնակցություն ունեն հիմնականում արևմուտքից վերադարձած որոշ կրթական միգրանտներ: Վերադարձած միգրանտի քաղաքացիական վարքագծի վրա ազդող հիմնական գործոնը անհատականության մակարդակում կատարվող այնպիսի փոփոխություններն են, որոնք նրա ինքության մեջ զարգացնում են ինքնություն ու ազատ անհատ լինելու հատկանիշը: Նրանց մոտ նկատելի է դառնում ինչպես առօրեականության, այնպես էլ հանրային ու քաղաքացիական պրակտիկաների փոփոխություն, ինչը որ շարունակում են իրացնել նաև Հայաստան վերադարձից հետո: Հատկանշական է, որ միգրացիայի փորձ ունեցող ու չունեցող քաղաքացիական ակտիվիստների միջև համագործակցության հիմքերը հաճախ ձևավորվել են հենց առօրեականության պրակտիկաների հարթությունում:

Հետաքրքիր է, որ ես էլ էս վերջերս սկսեցի մտածել, թե ոնց եմ ծանոթացել ու ընկերացել իմ ակտիվիստ ընկերների հետ: Պարզվում է շատերի հետ մտերմացել ենք մինչ ակտիվիզմը, ասենք հեծանվարշավի, կամ արշավների ժամանակ, կամ էլի նման ինչ որ ժամանցային վայրում: Ու եկա այն եզրակացության, որ կան բաներ, որ մարդկանց միավորում են՝ արժեքները, նախընտրությունները, հոբիները, ընդհանուր կենսակերպը և այլն: Ներկայիս համարյա բոլոր ակտիվիստներին էլ նախկինում ինչ որ ձևով գիտեի: Կարծես հեռակա կարգով նույն շրջանակի մեջ լինեինք:

Կին, 31 տարեկան,
ոչ միգրանտ ակտիվիստ

Առօրեականության ու ոճականության շատ պրակտիկաներ նպաստում են մարդկանց ծանոթանալ ու համագործակցել, ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային խնդիրների ու նպատակների իրացման շուրջ: Դրանք օգնում են հայտնվել այնպիսի հասարակական դաշտերում, որոնք թույլ են տալիս նրանց շրջանառու-

յան մեջ դնել միգրացիայի ընթացքում ձեռք բերված մշակութային ու սոցիալական կապիտալը և դերակատարությունն ստանալ հասարակական տարբեր դաշտերում տեղի ունեցող կապիտալի բաշխման ու վերաբաշխման գործընթացներում: Հենց դա էլ քաղաքացիական ակտիվիզմի հիմնական էությունն է՝ կապիտալի բաշխման ու վերաբաշխման գործընթացներում մասնավորի ու հանրային միջև ներդաշնակության ձևավորումը և այդ գործընթացներում հանրային շահը իրացնելը:

Այս առումով, կարելի է ասել, որ միգրացիան նպաստել է որոշ միգրանտների քաղաքացիական ակտիվության աճին, քանի որ դրա շնորհիվ նրանց մոտ ձևավորվել են առօրեկանության այնպիսի պրակտիկաներ, կենսակերպ ու արժեքներ, որոնց շնորհիվ նա կարողացել է հայտնվել ու դիրքավորվել քաղաքացիական ակտիվիզմի դաշտում:

3.3. Միգրանտների պրակտիկաների առանձնահատկությունները Հայաստան վերադարձից հետո

Ժամանակի կազմակերպման ու ժամանցի պրակտիկաները: Հարցմանը մասնակցած վերադարձածների մեջ ժամանակի ու ժամանցի կազմակերպման փոփոխություններ նկատելի են, հատկապես ուսանող և, որոշ առումով, նաև երկարատև միգրանտների մոտ: Ինչ վերաբերում է սեզոնային աշխատանքային միգրանտներին, ապա նրանց մի զգալի մասը Հայաստան վերադարձից հետո չեն աշխատում: Գործատուների կողմից սահմանված ժամանակացույցից ազատ լինելը դիտվում է, որպես միգրացիոն սեզոնից հանգստանալու ձևերից մեկը: Կարելի է ասել, որ դա վերադարձից հետո սեզոնային աշխատանքային միգրանտներից շատերի բնականոն կյանքի ոճն է, որին բնորոշ է հանգստի ու անգործության դիրքը: Պատճառներից մեկն այն է, որ միգրացիայի ընթացքում նրանք ապրում են խիստ ծանրաբեռնված աշխատանքային դիրքում և վերադարձն ընկալվում է որպես այդ դիրքի փոփոխություն:

Դա տեղափոխություն է ժամանակի մեջ: Մի յուրօրօրինակ տեղափոխություն ժամանակային ուղիների կողմից մարդուն ճնշող աշխարհից մեկ այլ աշխարհ, որտեղ մարդն ինքն է տնօրինում իր ժամանակը: Ժամանակի ուղիների փոփոխությունն արդեն իսկ փոխում է նրա պրակտիկաները:

Հայաստան գալուց հետո փոփոխություններ կան: Հմի արդեն էդքան շուտ չեմ գարթնի, երևի հիմնական փոփոխությունն էդ է: Ըստեղ ես իմ գլխիս եմ: Իսկ ընտեղ նոր որ գնացել էի, ռեժիմի խնդիր կար:

Տղամարդ, 25 տարեկան,
գ. Մարմաշեն/ Ռուսաստան (Արխանգելսկ)

Վերադարձից հետո սեզոնային միգրանտների ժամանակային ուղիները լայն առումով հասարակական համախմբող դեր չեն իրականացնում: Ըստ մեր դիտարկումների, դրանք, գլխավորապես նպաստում են միգրանտների միջև ներխմբային հաղորդակցման ձևավորմանը: Դա թուլացնում է նրանց կապերը համայնքի մնացած բնակիչների հետ:

Տարբերությունը էն է, որ իրենք գյուղից մի տեսակ կառանձնանան, իրենք իրար հետ կլինեն: Կստացվի որ ես իրենց հետ շփվելու բան չունեմ: Տարբեր բնեղների մարդիկ ենք: Ես կշփվիմ, կաշխատիմ էն մարդկանց հետ, ում հետ ընդհանուր բան ունիմ, իսկ իրենք արտագնա խմբով իրար հետ:

47 տարեկան, տղամարդ,
գ. Արփենիկ

Կարելի է ասել, որ նախ, սեզոնային աշխատանքից վերադարձաների ժամանակի կազմակերպումն ու ժամանակացույցերը Հայաստանում աշխատանքային արդյունքների ձևավորմանն ուղղված ուղիներ չեն: Երկրորդ, այդ ժամանակային ուղիները միտված չեն հասարակական ընդհանուր նպատակների իրացմանն ու հանրային կարևորության պրակտիկաների ձևավորմանը: Վերա-

դարձից հետո սեզոնային միգրանտներից շատերի մոտ ժամանակի կազմակերպումն ու պլանավորումը այն աստիճան երկրորդական է, որ նույնիսկ չի նպաստում ժամանակային այնպիսի ընդհանրական բլոկների ձևավորմանը, որոնք վերաբերում են աշխատանքային ու հանգստի ժամանակներին:

Հայաստանում շաբաթ կիրակի չկա ինձ համար: Բոլոր օրերն էլ շաբաթ ու կիրակի են, որովհետև աշխատանք չունեմ: Որ ասեմ, էսօր երկուշաբթի՝ է, թե շաբաթ, անիմաստ է:

Տղամարդ, 40 տարեկան,
ք. Գյումրի/ Ռուսաստան (Միչուրինսկ)

Միգրացիայի ընթացքում ժամանակի կազմակերպման տեսանկյունից առանձնակի փոփոխություններ են կրում ուսանողներն ու երկարատև միգրանտները: Նրանց համար կարևոր նշանակություն են ստանում ժամանակի բաժանումն ըստ բլոկների, ժամանակացույցերի կազմումը և ըստ ժամանակային ռիթմերի առօրեականության կազմակերպումը: Ժամանակի կազմակերպումը նրանց համար նշանակալի դեր է կատարում այնպիսի հասարակական միջավայրերի հետ կոնսոլիդացվելու համար, որոնք կարևոր են կարգավիճակի ու նպատակների իրացման տեսանկյունից: Ժամանակի կազմակերպումը կարևոր դեր ունի նաև այս կամ այն հասարակական դաշտում դիրքավորվելու ու կապիտալի տարբեր տեսակների վերաբաշխման ու վերարտադրության գործընթացներին մասնակցելու առումով:

Վերադարձից հետո, ուսանող ու երկարատև միգրանտներից ոմանք բախվելով ժամանակի կազմակերպման հայաստանյան իրողություններին, ինչ-որ մի պահի հրաժարվում է դրսում ձեռք բերած որոշ պրակտիկաներից: Չհրաժարվելու դեպքում մեծանում է բախումների հավանականությունը միջանձնային և մասնագիտական փոխհարաբերություններում:

Վերադառնալուց հետո մոտ մի ամիս դուրս չէի գալիս։ Որովհետև ես պայմանավորվում էի ասենք ժամը 10-ին ու հանկարծ ժամը 11.30 ինձ զանգում են ու ասում, որ իրենք կարող է 40 րոպե ուշանան։ Ու դա ասում են մեկ ու կես ժամ ուշանալուց հետո։ Էդ ժամանակ արդեն դու լուրջ մշակութային շոկ ես ապրում։

Տղամարդ, 30 տարեկան,
ք. Երևան/ Գերմանիա (Ենա)

Սակայն, չի կարելի ասել, որ, ընդհանրապես, վերադարձածները կրավորական դիրք են ընդունում ժամանակի կազմակերպման սեփական պրակտիկաները պաշտպանելու հարցում։ Հատկապես նրանք, ովքեր Հայաստանի հետ կապված ստրատեգիական նպատակներ ունեն, առանց ժամանակի կազմակերպման սեփական պրակտիկաների կիրառման չեն կարող ձևավորել իրենց նպատակների իրականացման համար անհրաժեշտ կարգավիճակը և դիրքավորվել իրենց ընտրած այս կամ այն *դաշտում* (ըստ Պ. Բուրդիեյի ձևակերպման)։ Որպես այդպիսին կարող է լինել գործարանը, համալսարանը, շինհրապարակը և այլն։ Առանց *դաշտի* ընտրության ու դրանում դիրքավորման անհնարին կլինի կապիտալի այս կամ այն տեսակի վերաբաշխման ու վերարտադրության գործընթացներին մասնակցելը։ Չի կարելի ասել, որ վերադարձած միգրանտի այդ նպատակին ուղղված ժամանակի կազմակերպման պրակտիկաները հենց դրսում ձեռք բերած փորձառության պարզ ընդօրինակումն են։ Բայց, ժամանակի կազմակերպման ձեռք բերված հմտությունները կարևոր դեր են կատարում։ Հատկապես, արևմուտքում փորձառություն անցած միգրանտների հարցազրույցներում հաճախ է կարևորվում ժամանակի պլանավորման պրակտիկայի յուրացումը և դրա կիրառումը նաև Հայաստանում։ Դա նկատելի է այն միգրանտների մոտ, ովքեր վերադարձից հետո ավելի աշխույժ կյանք են վարում, կարողանում են ժամանակը կազմակերպել այնպես, որ ժամանցն ու աշխատ-

տանքը արդյունավետ պլանավորեն: Հատկապես, կարևորվում է ժամանակային բլոկների բաժանումն աշխատանքային ու հանգստյան: Հետաքրքիր է հենց այն ձևակերպումը, որ աշխատանքային բլոկից ազատ ժամանակը ձևակերպվում է որպես *հանգստյան*, այլ՝ ոչ թե որպես *ոչ աշխատանքային*: Նման ձևակերպումը նպաստում է, որ աշխատանքից ազատ ժամանակը հատկացվի հանգստին, այլ՝ ոչ թե պարզապես չաշխատելուն: Հանգստի պլանավորման ու կազմակերպման խնդիրը վերադարձած ուսանող և երկարատև միգրանտներից շատերի մոտ կարևոր պրակտիկա է: Որոշների մոտ դա դարձել է առօրեականության առանցքային բաղադրիչներից մեկը: Նման փոփոխություններ նկատելի են հատկապես արևմտյան զարգացած երկրներից վերադարձածների պրակտիկաներում:

Այնտեղից մնացել են ուրբաթ երեկոները պլանավորելը ու որևէ տեղ գնալը: Ինչ որ բան միշտ կազմակերպում եմ:

Կին, 21, տարեկան,
ք.Երևան/ԱՄՆ(Պորտլենդ)

Հայաստան գալուց հետո մեր ընտանիքում նաև ժամանցի կազմակերպման որոշ փոփոխություններ կան: Ամուսնանալուց հետո ես էլ, ամուսինս էլ ձգտում ենք, որ գոնե մեկ հանգստյան օրը նորմալ անցկացնենք, կենցաղային ինչ-որ բաներով չզբաղվենք:

Կին, 28 տարեկան,
ք.Գյումրի/Շվեյցարիա(Արաու)

Երբեմն ձեռք բերված նոր պրակտիկաները բախվում են մշակութային միջավայրով ու ստերեոտիպերով պայմանավորված պատճենների: Սակայն, որպես կանոն դրանք հաղթահարվում են այն մարդկանց կողմից, ովքեր հանդես են գալիս արդեն ոչ թե որպես մշակույթը կրող խմբի ներկայացուցիչ, այլ՝ մշակույթը նորու-

թայնացման ճանապարհով փոխակերպող ու զարգացնող անհատականություններ.

Հենց էտ էր տարբերությունը նաև, որ մեզ մոտ, եթե գիշերվա տասներկուսից հետո աղջիկը դրսում է, ինչ-որ բարում կամ փաբում, լավ չեն վերաբերվում: Ես Հայաստանում պայքարել եմ դրա համար: Իմ ընտանիքն էլ դրան դեմ էր: Վերադառնալուցս հետո ես ավելի երկար եմ մնում դուրսը, քան առաջ, որովհետև ուսանողությունից մնացած էտ սովորությթր մնում է քո մեջ: Մեր մոտ, Հայաստանում, ժամին կարևորություն է տրվում: Բայց ես դեմ եմ դուրս եկել էդ ընդունված ժամ հասկացությանը ու արդեն իմ ժամով եմ շարժվում:

Կին, 27 տարեկան,
ք.Երևան/Լեհաստան (Վարշավա)

Ժամանցի կազմակերպման նոր ձևերը հիմնականում իրականացվում են այնպիսի հանրային վայրերում, որտեղ մարդիկ հավաքվում են ոչ թե ըստ ազգայունակցականության, բարեկամության կամ մեկ այլ մեխանիկական խմբային հատկանիշի (ձևակերպումը վերցված է Էմիլ Դյուրքհեյմից՝ Durkheim 1984. 31-65), այլ անհատական հետաքրքրություննե րի ու նախընտրությունների: Նման դեպքերում ամեն մարդ ազատ է ինքը որոշելու, թե որտեղ և ինչպես է ուզում անցկացնել իր ժամանցը: Իսկ ընկերական խմբերն էլ փակ չեն, այլ՝ բաց ու դինամիկ: Կարևոր է նաև ժամանցի կազմակերպման գործում անհատի վարքը կանոնակարգող ժամանակի ընդունված խմբային նորմերին անհատական ժամանակային մոտեցումների հակադրումը: Դա թույլ է տալիս սոցիալիզացվել ոչ միայն ժամանակային ընդունված համընդհանուր ռիթմերի, այլև՝ անհատական մոտեցումներից բխող և անընդհատ փոփոխվող ռիթմերի հիման վրա:

Իհարկե, Հայաստանում ժամանցային քիչ թե շատ հարմար պայմաններ կան Երևանում: Եվ այս առումով, Երևանից դուրս բնակվող վերադարձած միգրանտների համար ժամանցի խնդիրը

բավական բարդ է: Ոմանք, չկարողանալով հաղթահարել միջավայրի հետ կապված դժվարությունները և իրացնել դրսում յուրացրած ժամանցային պրակտիկաները, հիասթափվում են ու նորից անցնում ընտանեկան ու ազգակցական ժամանցի ձևերին:

Շատ քիչ, հյուր երթալը կերթանք, բարեկամի կամ մոտիկ մարդու առիթ, ծնունդ: Բայց Գերմանիայի նման ամեն շաբաթ երեխեքին կոնկրետ տեղ տանելու նման չէր: Գյումրիի մեջ ուր տանես: Որ եկանք, երեխեքը տեսան, վախեցան: Ասեցին, էս որ թիվն է: Ժանգոտած, քանդված կառուսելների տեսքից վախեցել էին: Դրական էմոցիաներ չէին առաջացնում: Երեխեքը կըսեին ըղիկ ինչ է: Սկզբնական շրջանում վատ կընդունեին էտ ամեն ինչը: Բայց հաշտվան էտ վիճակի հետ:

Տղամարդ, 47 տարեկան,
ք.Գյումրի/Գերմանիա (Մայնի Ֆրանկֆուրտ)

Այսինքն կարելի է ասել, որ ժամանակի կազմակերպման ու ժամանցային պրակտիկաների փոփոխությունները հասարակական համերաշխության ձևավորման դերակատարում ունեն հիմնականում երևանաբնակ երիտասարդների միջավայրում: Բայց, մարզերում, մարդիկ վերադառնալով նորից հարմարվում են այնպիսի ժամանակային պրակտիկաների, որոնք առավելապես բարենպաստ են ազգակցական ու ընտանեկան միջավայրերում համերաշխության ձևավորմանը ու կապերի ամրապնդմանը:

Հայաստան գալուց հետո էլ ընկերների հետ շփումը կա, բայց Գյումրիում ժամանակ անցկացնելու քիչ տեղեր կան: Ըստեղ հիմնականում մի քանի բար ու կաֆե է: Դրանից էլ հոգնում ես: Իսկ ընտեղ գնում էինք բասկետբոլ կամ բիլյարդ խաղալու, սպորտդահլիճ մարզվելու: Ավելի հետաքրքիր էր:

21 տարեկան, տղամարդ,
ք.Գյումրի/ԱՄՆ (Օբլահոմա)

Տարածության կազմակերպման պրակտիկաները: Միգրացիայի ընթացքում միգրանտական առանձին խմբերի մոտ տարածության կազմակերպման պրակտիկաները բավական տարբեր են եղել: Ասենք օրինակ, սեզոնային աշխատանքային միգրանտների մոտ անձնական տարածքի կազմակերպման մեջ որոշիչ դեր են ունեցել գործատուները: Մահմանափակված է եղել նաև նրանց տեղաշարժման ազատությունը: Այսինքն, միգրացիայի ընթացքում, պայմանավորված գլխավորապես իրենց կարգավիճակով ու նպատակներով, տարածության կազմակերպման հարցում անհատական նախաձեռնողականությունը շատ թույլ է եղել:

Տարածության կազմակերպման փոփոխություններն առավել նկատելի են արևմտյան զարգացած երկրներից վերադարձած ուսանողների կամ երիտասարդ տարիքի երկարատև միգրանտների մոտ: Տարածության կազմակերպման հետ կապված հիմնական փոփոխությունը վերաբերում է անձնական տարածքի կազմակերպման ու ինքնուրույն տնօրինմանը: Տարածությունը շատերի համար ձեռք է բերել իր ինքնուրույնությունը իրացնելու նշանակություն: Վերադարձից հետո այդ միգրանտների մոտ նկատելի է տարածության կազմակերպման երկու տիպի պրակտիկաներ: Ումանք շարունակել են արտերկրում յուրացրածը և վերադառնալով Հայաստան, սկսել են առանձին ապրել իրենց ծնողներից: Դա հատկապես նկատելի է այն վերադարձածների մոտ, ովքեր արդեն ունեն հստակ ձևավորված նպատակներ և միգրացիան նրանց մոտ առաջացրել է կարգավիճակի փոփոխություն: Նման բան նկատելի է հիմնականում անհատականության աճ գրանցած անձանց մոտ:

Ամենամեծ տարբերությունն էն ա, որ վերադառնալով ես հասկացա, որ մենակություն շատ եմ սիրում: Ասենք, տանեցիների հետ ապրել և այլն, դրանք ինձ նեղում են: Ու հիմի ապրում եմ մենակ, վարձով, չնայած Այգեձորում ունեմ հայրական մեծ տուն: Հիմա գերադասում եմ

ունենալ իմ աշխատելու, մտածելու, անձնական կյանքով ապրելու տեղը: Էտ ա ամենամեծ տարբերությունը:

Տղամարդ, 32 տարեկան,
ք.Երևան, Ֆրանսիա (Փարիզ)

Վերադարձած երիտասարդների կողմից առանձին ապրելու պրակտիկան ծնողների կողմից հիմնականում հանդիպել է լուրջ դիմադրության: Հատկապես աղջիկների համար, դրա իրացումը եղել է բավական բարդ խնդիր: Ոմանց դա չի հաջողվել հաղթահարել և բավարարվել են ընդհանուր բնակարանում առանձին սենյակով: Այս դեպքերում որոշակի փոփոխություններ նկատելի են սեփական սենյակում առօրյա կազմակերպման ձևերի մեջ: Դավերաբերում է ինչպես սենյակում ներքին տարածության կազմակերպմանը, այնպես էլ ժամանցի ու ապրելու ոճին:

Հիմա լինում է, որ մահճակալիս մատրասն եմ գետնին դնում կամ բաժակս, մաման զարմանում է: Բայց այդպես ավելի հարմար է: Այդ պահին, որ զբաղված ես լինում միայն դասերով, էլ ոնց որ քեզ չի հետաքրքրում սենյակը հավաքված լինի: Մյուս կողմից էլ, էդպես թափթփված դաս անելը ավելի հավես է:

Կին, 21 տարեկան,
ք. Երևան/ԱՄՆ (Պորտլենդ)

Հատկանշական է, որ տարածական պրակտիկաների փոփոխումը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է չամուսնացած երիտասարդների ծնողներից առանձին ապրելու պրակտիկային, Հայաստանում բավական քիչ է տարածված: Այդ պրակտիկայի կիրառումը էլ ավելի է դժվարանում, երբ խոսքը գնում է աղջիկների առանձին ապրելու մասին: Այստեղ, պրոբլեմն այն է, որ վերադարձածը գործ պետք է ունենա ոչ միայն սեփական պրակտիկայի փոփոխման հետ, այլև՝ իր միջավայրի: Այդ միջավայրը ներառում է ինչպես նրա անմիջական, փոքր ընտանիքը, այնպես էլ ծանոթների ու բարեկամների շրջանակը: Այսինքն, տարածական պրակտիկա-

յի փոփոխությունը, դա հանրային ազդեցություն ունեցող մի բան է, որը խորքային իմաստով առնչվում է անհատի ազատության և ինքնուրույն կյանքով ապրելու իրավունքին: Որպես պրակտիկա այն մշակութային ստերեոտիպերի և անհատի ինքնության իրացման սահմանագծին է, որը կարողանում են հաղթահարել նրանք, ովքեր իրենց մեջ լուծել են սեփական սուբյեկտության ձևակերպման խնդիրը ու այդ միջոցով իրենք իրենց մեջ որոշակիացրել ու հաղթահարել անձի և մշակույթի սահմանը: Այս առումով *մշակույթը կարող ենք վերաձևակերպվել ոչ թե որպես անձի վրա խմբի իշխանությունը իրացնող պարտադիր պրակտիկաների ամբողջություն, որը փոփոխելի չէ անհատի կողմից, այլ՝ որպես փոփոխական պրակտիկաների ամբողջություն, որոնք կարող են փոփոխման ենթարկվել անհատների ստեղծագործորեն իրացվելու նպատակահարմարության ու ձգտումներին համապատասխան:*

Այն վերադարձածները, ովքեր չեն փոխում տարածքի կազմակերպման պրակտիկաները, հետ են վերադառնում նախկին ապրելակերպին: Որակական տվյալների վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ նման դեպքերում, խոսքը գնում է ավելի շատ անցումային վիճակի մասին: Վերադարձածներից շատերը, չնայած դրականորեն են հիշում միգրացիայի ընթացքում տարածքի կազմակերպման իրենց պրակտիկաները, որպես դրա հիմնական առավելություն ներկայացնելով անձնական կյանքի ու փոխհարաբերությունների կազմակերպման ազատությունը, սակայն ակնհայտ է, որ նրանք չեն վերաձևակերպել իրենց կարգավիճակը, որպես ինքնուրույն անհատականություն: *Կարգավիճակի ձևակերպման մեջ հստակության բացակայությունն էլ առաջացնում է տարածական նոր պրակտիկաների կիրառման անվճռականություն, քանի որ տարածքը չի ընկալվում որպես սեփական անհատականության և այն հանրայնորեն ներկայացնող կարգավիճակի իրացման համար հիմնարար բաղադրիչ: Այդ պատճառով, նրանց մոտ սեփական տարածքն ընկալվում է որպես մի բան, որը մարդը սպառում է*

հարմարավետության նպատակով, այլ՝ ոչ թե իր կարգավիճակի ու նպատակների իրացման համար դիրքավորվելու տեղ:

Ստեղ, ասենք, նստում, դաս են անում, բայց հաստատ գիտեմ, որ կողքի սենյակում քույրս է դաս անում կամ ինչ որ մեկը հեռուստացույց է նայում: Բսկ էնտեղ դու լրիվ էդ տարածքում մենակ էիր ու էդ տարածքը դու մենակ էիր օգտագործում: Հետո ասենք ցանկացած ժամի կարայի գայի տուն: Բսկ ստե մի քիչ ավելի պրոբլեմատիկ է: Այնտեղ ընկերներին կարող էի բերել: Գալիս էինք չայ էինք խմում կամ կոֆե: Ստեղ համարյա հնարավոր չէ: Էնտեղինը ինձ ավելի դուր էր գալիս: Բայց, չգիտեմ թե ինչի: Էնտեղինն իմ տարածքն էր, ես շատ լավ էի զգում, որ էդ իմ տարածքն է ու ինչ ուզեմ կանեմ իր հետ: Բայց ստեղ էլ, մերոնց հետ ապրելը, առանձնապես վատ չէ:

Կին, 24 տարեկան,
ք. Երևան/ԱՄՆ (Մինեսոտա)

Հագուստի պրակտիկաների փոխակերպումները: Մեր հարցազրույցների տվյալները ցույց են տալիս, որ միգրանտների մի զգալի մասի մոտ նկատելի են հագուստի ոճի ու պրակտիկաների փոփոխություն: Հիմնականում կարելի է առանձնացնել երկու տեսակի փոփոխություն: Դրանցից մեկը բնորոշ է սեզոնային աշխատանքային միգրանտներին: Մյուսը, արևմտյան զարգացած երկրներից վերադարձած ուսանող ու երկարատև միգրանտներին: Հատկապես երիտասարդ տարիքի տղաները միգրացիայի վայրում հագուստի իրենց պրակտիկաներով տարբերվում են միջին և հասուն տարիքից: Չնայած աշխատանքի բնույթի ու կարգավիճակի բերումով նրանց մեծ մասն ավելի շատ իր ժամանակն անցկացնում է աշխատավայրում ու իր սենյակում, սակայն հասարակական միջավայր դուրս գալու դեպքերում երիտասարդ տղաները ձգտում են, իրենց բնութագրմամբ, ճոխ հագնվել: Նրանց հագուստը գլխավորապես սև կամ մուգ երանգների մեջ է, տղամարդկային

ընդգծված խիստ ոճականությամբ: Կարևոր ատրիբուտներից է համարվում նաև ոսկյա շղթան:

Մենք մեր ձևով կհագնվենք ընդեղ: Հայ տղերքը սև կհագնին, վզները ցեփեր: Իմ տղեն էլ ունի: Հեշ բան որ չունենան, պտի ցեփը ըսպես գցեն, խաչը վզները: Մաղ կջոկեն որ հայ է:

50 տարեկան, տղամարդ,
գ. Արփենի/Ռուսաստան (Նիժնի Նովգորոդ)

Ռուսաստանից վերադարձած միգրանտների կողմից սեփական հագուստի ոճի բնութագրումը ցույց է տալիս, որ նրանց ոճականությունում շեշտադրումն առավելապես արվում է ընդունող հասարակությունից տարբերակվելու վրա: Հատկապես, ընդգծվում է հագուստի տղամարդկային, խիստ ոճականության կարևորությունը և “սոլիդությունը”, որպես հագուստի միջոցով սեփական անձի արժանապատվությունը շեշտող միջոց: Երբեմն, հատուկ շեշտադրում է արվում հագուստի, որպես տղամարդկային պատվարժանության ցուցիչ լինելու կարևորության վրա:

Հագուկապի մոմենտով որ ըսեմ, կարող է դաժե քիչըմ կոպիտ ստացվի, բայց ընտեղ տղեքը քիչըմ քույրիկավարի կհագնվին: Թագա մոդա ելած շալվարներ կան՝ կախ ընկած, կապիշոնով շորեր, բոթասներ կհագնին: Նորմալ կավկազցի տղեքը ընտեղ նորմալ, սոլիդ կհագնին:

Տղամարդ, 21 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան (Մոսկվա)

Վերադարձից հետո, նրանք իրենց միջավայրում նույնպես որոշակիորեն տարբերվում են հագուստով: Հիմնականում հագնում են ավելի թանկարժեք հագուստ: Դա այնքան ակնհայտ է, որ հիշատակվում է ոչ միայն միգրանտների հարցազրույցներում, այլև՝ համայնքի այլ անդամների:

*Բւ՛ տղեն հիմի շատ ընտիր կհագնի: Նախքան երթալը
ի՞նչ կհագներ, սովորական: Բայց հմի ընտիր: Ճաշակը
չի փոխվել, նույնն է, բայց շորերն ընտիր են:*

50 տարական, կին,
գ.Արփենի

Նմանատիպ փոփոխություններ նկատելի են նաև միգրանտների ընտանիքների անդամների, հատկապես, ընտանիքի երիտասարդ անդամների ու երեխաների հագուստում:

Հագուստի հետ կապված փոփոխություններ նկատելի են նաև երկարատև և ուսանող միգրանտների մոտ: Հատկապես, արևմտյան երկրներից վերադարձած միգրանտների նախընտրություններում ավելի շատ նկատելի են ոչ թե հագուստի թանկարժեքության ու ճոխության, այլ՝ դրա հարմարավետության կարևորումը: Ոմանք էլ կարևորում են հագուստը, որպես խմբային ճաշակից ազատվելու ու իր անհատական ոճականությունը ներկայացնելու միջոց:

Այս դեպքում մարդը գնահատում է հարմարավետությունը: Իր համար դա ավելի մեծ արժեք է, քան ասենք երկարակրունկ կոշիկի վրա շորորալով քայլելը, ինչ որ մեկին գայթակղելը: Օրինակ, իմ համար մեր «հայկական ոճի աղջիկը» անկեղծ չի: Կաբլուկներով իրեն անհարմար է զգում, բայց ինքը դա հագնում է, որովհետև այդպես պետք է հագնվել, որպեսզի համարվես գեղեցիկ, քո պահանջարկը մեծ լինի: Հարմարավետ հագնողն ավելի անկեղծ է առաջին հերթին ինքն իր հետ, իր նախասիրությունների մեջ, անում է այն, ինչ ուզում է: Մինչև մենք ինքներս մեզ հետ անկեղծ չլինենք, չեմ կարծում, որ ինչ որ քան կարող ենք փոխել:

Կին, 31 տարեկան,
ք.Երևան/Կանադա (Օտտավա)

Ոճականության փոփոխություններ ունեցողները նշում են, որ վերադարձից հետո սկզբնական շրջանում ունեցել են որոշ

դժվարություններ միջավայրի կողմից տրվող գնահատականների հարցում, ինչը սակայն ժամանակի ընթացքում հաղթահարվել է:

Հագուստի հետ կապված պրակտիկաների նկատելի փոփոխություններից մեկն էլ այն է, որ նպաստում է ոչ միայն հագուստի ու ոճականության տարապատկերի ընդլայնմանը, այլ ձևավորում է հագուստի, որպես հասարակայնորեն ներկայանալի ցուցիչի հանդեպ գնահատականների փոխակերպում.

Օրինակ հիմա ոչ միայն ուսանողիդ խելքին ես նայում, այլև՝ հագուստի ոճին: Ես լիքը բաների եմ ուշադրություն սկսել դարձնել, որ մինչ այդ չէի դարձնում: Օրինակ բարձրակրունկ հագնելը ինձ համար որոշ առումով ցուցիչ է, որը պատմում է այդ ուսանողի արժեքների ու կյանքի ոճի մասին: Կամ եղունգները քսելը և այլն:

Տղամարդ, 28 տարեկան,
ք. Երևան, Միչիգան, ԱՄՆ

Հագուստի պրակտիկաների վրա միգրացիայի շոշափելի ազդեցություններից մեկն էլ կարելի է համարել տարբեր ու բազմազան ոճականություններին ծանոթացումը, դրանց մասին ճանաչողության ընդլայնումը: Իդեալ, դա նկատելի է, ինչպես արևմտյան երկրներից վերադարձած ուսանող և երկարատև միգրանտների մոտեցումներում, այնպես էլ, սեզոնային աշխատանքային միգրանտների մոտ.

Ընդեղ կային տարբեր տեսակի ջահելներ: Մենք իրանց հետ չէինք շփվի: Չգիտեինք, թե իրանք ինչ ձևի են: Մեզի ընդեղ չէր հետաքրքրե, թե մեկը ինչ է հագել, կամ մազերն ինչ գույնի է ներկել: Քեզ էլ հեշ մարդ չէր նայե: Ինչ կուզեիր կենեիր: Բսկ ստեղ մեկիմ կտեսնին վրեն կխնդան: Ստեղ էլ, որ ընդեղի նման ազատ եղներ, ստեղ էլ լավ կեղներ:

Տղամարդ, 43 տարեկան,
ք. Գյումրի/Գերմանիա (Բեռլին)

Հագուստը կարևոր ճանաչողական միջոց է, որին միգրանտներն առնչվում են ընդունող հասարակություններում ապրելու ընթացքում և դրանց հանդեպ ձևավորված հանդուժողականության պրակտիկան նրանց մոտ պահպանվում և տեղափոխվում է Հայաստան: Եթե նույնիսկ ինքն իր ոճում փոփոխություններ չի կրում, շատ կարևոր է իրենից տարբեր ոճերի հանդեպ հանդուրժողականության պրակտիկայի ձևավորումը: Նկատենք նաև, որ հագուստի ու ոճականության տարբերության հանդեպ հանդուրժողականության պրակտիկաների ձևավորումը, նպաստում է, որ դրանք տարածվեն նաև այլ հարցերի ու կյանքի այլ բնագավառների վրա:

Ուտեստի պրակտիկաները վերադարձից հետո: Ուտեստի պրակտիկաների որոշ փոխակերպումներ հիմնականում նկատելի են արևմտյան երկրներից վերադարձած միգրանտների մոտ: Ինչպես ցույց են տալիս հետազոտության նյութերը, սեզոնային աշխատանքային միգրանտները միգրացիայի ընթացքում կերակրատեսակների հետ կապված փոփոխությունները շատ աննշան են: Հետևաբար և, այդ առումով, առանձնապես փոփոխություններ չեն լինում նաև վերադարձից հետո: Հետաքրքիր ձևով այս հարցը մեկնաբանեց սեզոնային աշխատանքային միգրանտներից մեկի ընտանիքի անդամներից մեկը, նկատելով, որ սեզոնային միգրացիայի ընթացքում միգրանտների սնունդն այնքան միօրինակ է, որ նրանք ոչ մի նորամուծություն էլ չեն կարող իրենց հետ բերել:

*Հղոնք ի՞նչ են կերել Ռուսաստանում, որ ինչ էլ բերեն:
Մակարոն չէ՞ կերածները:*

Տղամարդ, 73 տարեկան,
գ. Արփենի

Չեն փոխվել նաև ուտեստի հետ կապված այլ պրակտիկաներ: Մեզ հետաքրքրում էր, թե արդյո՞ք նրանք, ովքեր միգրացիայի ընթացքում իրենք են պատրաստել իրենց կերակուրները, Հայաստան վերադառնալուց հետո պահպանել են այդ պրակտիկան: Պատասխանը բոլորի մոտ էլ բացասական էր: Քանի որ կերակուր

պատրաստելը հայկական միջավայրում համարվում է կանացի զբաղմունք, տղամարդիկ վերադարձից հետո հրաժարվում են միգրացիայի ընթացքում ձեռք բերված այդ պրակտիկայից:

Պատկերն այլ է արևմտյան զարգացած երկրներից վերադարձած ուսանող ու երկարատև միգրանտներից շատերի մոտ: Իհարկե, նրանք բոլորն էլ Հայաստան վերադառնալով անցել են նորից գերազանցապես հայկական կերակրատեսակների: Սակայն, շատերի մոտ նկատելի է նաև որոշ նրբերանգների փոփոխություն: Փոփոխություններ նկատելի են ինչպես սննդամթերքների ու ճաշատեսակների ցանկում, այնպես էլ սնունդն ընդունելու պրակտիկաներում: Շատերը նշում են, որ վերադարձից հետո որոշ կերակրատեսակներ պահպանել են իրենց կերակրացանկում: Հիմնական փոփոխությունը վերաբերում է հատկապես բանջարեղենային կերակրացանկի կիրառմանը.

Շատ բանջարեղեն սկսեցի օգտագործել: Ասենք սպանախը, դդումը, դդմիկը, կաղամբը, բրոկոլին: Էլի ուրիշ բանջարեղեններ: Առաջ ուշադրություն չէի դարձնում:

Կին, 26 տարեկան,
ք. Երևան/ԱՄՆ (Մերիլենդ)

Վերադարձածներից ոմանց մոտ էլ պահպանվել են ընդունող հասարակության առանձին ճաշատեսակներ կիրառելու սովորույթը:

Դե տապակած պանիրը էնտեղ հարգված բանա, ու կինս հաճախ չէ, բայց այստեղ էլա սարքում:

Տղամարդ, 56 տարեկան,
ք. Երևան/Չեխիա (Պրահա)

Կերակրատեսակներից բացի, այս միգրանտների մոտ հանդիպում են նաև սննվելու պրակտիկաների փոփոխություններ: Նրանցից ոմանք ավելի հաճախ են կիրառում դրսում սննդի մի որևէ հաստատությունում ճաշելու պրակտիկան: Հատկապես, երիտասարդները, ովքեր մինչև մեկնելը հիմնականում սնվում էին տանը,

վերադարձից հետո հաճախ նախընտրում են դրսում սնվելը: Որպես կանոն, նրանք նաև ավելի մեծ ուշադրություն են սկսել դարձնել սննդի որակի ու առողջարար լինելու հանգամանքին:

Պրակտիկաների մեջ կարևոր փոփոխություններից մեկն էլ համարվում է ձեռք բերած նորույթի տարածումը իրենց միջավայրում:

Ես օրինակ հայտարարում եմ իմ ընկերներին, որ վաղը չէ մյուս օրը մենք ուտում ենք, օրինակ, քացախի մեջ եփած ձու: Ես դա անում եմ, որպեսզի իմ ընկերները զանազան տեսեն, որ այսպիսի ուտելիք էլ կա: Այստեղ ոչ մի տեղ չի մատուցվում: Դա գերմանական գյուղական ռեզեպտ է:

Տղամարդ, 30 տարեկան,
ք. Երևան/ Գերմանիա (Ենա)

Չնայած բացառիկ բնույթին, շատ հետաքրքրական է այն դեպքը, երբ վերադարձած միգրանտը սննդի ոլորտում ձեռք բերած իր հարուստ փորձառությունը վեր է ածել բիզնեսի, այդ ձևով փորձելով կիսվել մարդկանց հետ:

Հա, ես էստեղ բոլորին ուտել եմ սովորացնում: Դրա վառ ասպացույցն իմ ռեստորանի գոյությունն է: Էստեղ հայկական քիչ ուտեստներ կգտնեք: Շատ մարդիկ սկզբում երկմտում են փորձել, թե՞ ոչ: Հետո համոզում ենք, փորձում են ու շատ հավանում: Մեր ընտանիքում հասկապես քույրս, սիրում են ուտել: Ու սիրում են նոր բաներ փորձել: Օրինակ, էն օրը քույրիկենց տանը հավաքույթ էր ու սեղանին ոչ մի հայկական ուտեստ չկար: Բոլորը զարմացել էին, բայց հավանել էին շատ:

Գին, 30 տարեկան,
ք. Երևան, ԱՄՆ (Չիկագո)

Անհատական, միջանձնային և հանրային պրակտիկաները վերադարձից հետո: Մեր հետազոտական տվյալները թույլ են տալիս ասել, որ վերադարձած միգրանտների բոլոր խմբերում էլ նկատ-

տելի են անհատական ու հանրային պրակտիկաների փոխակերպումներ: Դրանք իհարկե տարբեր են: Օրինակ, սեզոնային աշխատանքային միգրանտների հիմնական մասի հարցազրույցներում կան վկայությունների, որ չնայած միգրացիան իրենց ապրելաճը չի փոխել, սակայն իրենցից շատերի համար միջավայրի փոփոխությունը թույլ է տվել ընդլայնել երևույթների մասին իրենց պատկերացումները, տեղեկատվությունը և մտահորիզոնն ընդհանրապես:

Դրսում ապրելն իմ մեջ շատ բան փոխեց: Առաջ ես տղամարդկանց ու կանանց ուրիշ աչքերով կնայեի: Մարդկանց մասին տարբեր պատկերացումներ ունեի: Բայց հիմի լրիվ փոխվել եմ:

Տղամարդ, 21 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան (Մոսկվա)

Տեղաշարժման շնորհիվ նոր պրակտիկաների ձեռք բերման հարցում միգրանտներն իրենք հիմնարար նշանակություն են տալիս *հաղորդակցման պրակտիկաների* բազմազանությանը: Տեղաշարժվելով մի տեղից մյուսը միգրանտները հանդիպում են նորա-նոր մարդկանց, տեսնում նոր երևույթներ, անձանոթ և ծանոթ նշաններ, որոնք ներկայացնում են նրանց համար ծանոթ ու անծանոթ իրողությունները: Եվ այս առումով, միգրանտի պրակտիկաների փոփոխության վրա առանցքային ազդեցություն է թողնում հենց հաղորդակցման բնույթը:

Իմ տարբերությունը խոսանչիներից նրանում է, որ եթե նրանք ութ ամիս ամբողջ օրը շինհրապարակում են, իսկ հետո էլ սենյակում, ես կոնկրետ ժողովրդի հետ եմ շփվում: Շատ տարբեր մարդկանց հետ շփվելով եկել եմ էն եզրակացության, որ մենք զարգանալու կարիք ունենք:

Տղամարդ, 28 տարեկան,
ք. Գյումրի/Ռուսաստան (Անապա)

Հատկապես, արևմտյան երկրներից վերադարձած ուսանող ու երկարատև միգրանտների հարցազրույցներում, հաճախ են հնչում իրենց անհատական հատկանիշների վրա միգրացիայի ազդեցության մասին վկայություններ: Շատ դեպքերում դրանք վերաբերում են միջանձնային փոխհարաբերություններին վերաբերող պրակտիկաներին: Կարևորվում է այլոց հետ հաղորդակցման, ծանոթություն ու կապեր հաստատելու պատրաստակամության, բաց լինելու, սեփական անձը ներկայացնելու, կարծիք հայտնելու, որիշների տեսակետը լսելու ու ընկալելու հատկանիշները: Կարևոր է, որ այդ հատկանիշները ձևավորվելով միգրացիայի ժամանակահատվածում, հետագայում պահպանվում և դրսևորվում են նաև Հայաստան վերադարձից հետո: Նմանատիպ անհատական հատկանիշների զարգացումը նպաստավոր ազդեցություն է թողնում ոչ միայն միջանձնային հարաբերությունների, այլև՝ հանրային կյանքին մասնակցության վրա:

Հայաստան գալուց հետո ընդհանուր առմամբ շփման մեջ ավելի ազատ եմ դարձել: Գյումրիում, իհարկե, մեկ-մեկ խնդիրներ առաջանում են մտածելակերպի հետ կապված: Ես նաև նկատել եմ, որ իմ մոտեցումները, իմ հայացքները ազդում են իմ ընկերների, իմ միջավայրի վրա: Ընկերներիս մեծ մասն էլ նման մտածելակերպ ունի: Ես համեմատաբար ակտիվ եմ դարձել ու էդ նաև ամերիկյան ազդեցությունն է: Նաև, ինստիտուտում շրջակա միջավայրի հետ կապված ծրագրեր ենք իրականացնում:

Տղամարդ, 21 տարեկան,
ք.Գյումրի/ ԱՄՆ (Օբլահոմա)

Ուշադրություն է դարձվում նաև այն փաստի վրա, որ Հայաստանում ազատ լինելը, երբեմն միջանձնային փոխհարաբերություններում բարդությունների պատճառ է դառնում, քանի որ ավելի փակ մտածելակերպ ունեցող մարդկանց մոտ դա առաջացնում է ոչ համարժեք արձագանք:

Նախ, սկսենք նրանից, որ նկատել եմ փոփոխություն
ինքս իմ մեջ: Բնավորության մեջ երևի ավելի ռեալիստ
եմ դարձել, ավելի ուժեղ: Բայց մարդկանց հետ շփվելն
ավելի ա դժվարացել այստեղ, որովհետև սիրում եմ ա-
զատ խոսել, ավելի անկեղծ լինել: Այստեղի մարդկանց
դուրը դա էնքան էլ չի գալիս: Համարում են երևի կոպ-
տություն:

Կին, 33 տարեկան,
ք. Երևան, Ավստրիա (Գրաց)

Արևմուտքից վերադարձածների հարցազրույցներում նոր
ձեռք բերված հատկանիշների թվում առանձնացվում են նաև իրա-
տեսությունը, ռացիոնալիզմը և պրագմատիզմը: Հատկապես, շեշտ-
վում է նպատակի ձևակերպման, գործողությունների ծրագրավոր-
ման, ժամանակացույցերի կազմման ունակությունների ձևավորու-
մը ու, ըստ այդմ, մարդկանց հետ փոխհարաբերության ու վարվե-
լակարգի նոր ձևերի արմատավորումը:

Նպատակին հասնելու ձևն ու արդյունավետությունը
ավելացավ ինձ մոտ: Սկսեցի ավելի հստակ հասկանալ,
թե կոնկրետ ինչ եմ ուզում: Ես ամենաշատը գերմանա-
ցիների հետ եմ շփվել ու իրենցից աշխատանքը առավել
կազմակերպված, քայլ առ քայլ պլանավորելու մոտե-
ցումն եմ սովորել: Գործերի ճիշտ հաշվառումը, բաշ-
խումն ըստ ժամանակի ու ծանրաբեռնվածության իրա-
կան պատկերացումը: Այստեղ մարդիկ իրենց վրա մեծ
բաներ են վերցնում ու հետո չեն կարողանում անել:
Նախ, կարելի է մեծ բաները քիչ-քիչ անել: Դա հենց
հաշվարկելու ու ճիշտ բաշխելու հմտությունն է: Էդ ա-
ռումով ես մեծ դպրոց եմ անցել: Նաև մարդկանց հետ
փոխհարաբերություններում էթիկայի հետ կապված
հարցերում եմ փոխվել:

Տղամարդ, 30 տարեկան,
ք. Երևան/Գերմանիա (Ենա)

Խոսքը վերաբերում է ոչ միայն աշխատանքում խնդիրներ դնելու ու դրանց իրականացումը պլանավորելու պրակտիկաներին, այլ՝ ընդհանրապես առօրյա կյանքում ավելի նպատակաուղղված ու խնդիրների լուծման առումով իրատեսությանը ու հետևողականության պրակտիկաներին:

Առաջ գիտեի ինչ եմ ուզում, բայց չգիտեի դրանց ոնց հասնել: Իսկ հիմա ինձ համար պարզ է դարձել, թե ոնց կարելի է մի բան պլանավորել ու դրան հասնել, ինչ միջոցներ կիրառել ուզածս ստանալու համար:

Կին, 30 տարեկան,
ք. Երևան/ԱՄՆ (Իլինոյս)

Հատկանշականն այստեղ այն է, որ թվարկածը կարևորվում է ոչ միայն պարզապես որպես հմտություն, այլ՝ ամենօրյա կյանքի մասը կազմող պրակտիկա: Հմտությունն ամենօրյա կիրառման դեպքում է դառնում պրակտիկա: Հմտությունների վերածումը պրակտիկաների կարևոր է, քանի որ դրանք որպես տեսանելի օրինակներ, ոչ միայն տարածում են իրենք իրենց, այլ՝ լայն առումով ազդում են առօրեականության վրա ու նպաստում նոր պրակտիկաների ձևավորմանը: Այսպես օրինակ, վերը հարցազրույցներից բերված մեջբերումներում նշված հմտությունները գործունեության ընթացքում ձևավորել են համապատասխան անհատական պրակտիկաներ, որոնք միջանձնային և հանրային փոխհարաբերություններում որոշիչ են դարձել տվյալ անհատի համար: Առօրյա կյանքում դրանք ոչ միշտ են ընկալվել ու ընդունվել համարժեքորեն: Հայաստան վերադարձից հետո, որոշ դեպքերում, այդ պրակտիկաները բախվել են վաղուց արմատավորված ստերեոտիպերին և ոչ միշտ է, որ պահպանվել են:

Հայաստան վերադառնալուց հետո փոփոխությունները շատ էին: Իմ համար շատ դժվար էր, որովհետև ընտել պլանավորումը շատ հեշտ է, ամեն ինչի համար կա ձև,

*կան տարբերակներ: Ըստեղ ես նույնիսկ աշխատանք
փնտրելու ձևը չգիտեի:*

Կին, 28 տարեկան,
ք.Գյումրի/Շվեյցարիա (Արաու)

Բախումների պատճառը հիմնականում նոր պրակտիկայի ու
Հայաստանում գործող իրականության միջև խորքային տարբե-
րություններն են եղել: Դրանում առանձնակի դեր է ունեցել այն, որ
միգրանտը որպես տեղաշարժվող մարդ, իր մեջ զարգացնում է **նո-
րություններ ընկալելու ու անընդհատ փոփոխվելու պրակտիկաներ:**
Սրանք, գլխավորապես, բնորոշ են արևմուտքից վերադարձած ե-
րիտասարդ տարիքի միգրանտներին: Այն, որ միգրացիայի ընթաց-
քում նրանց մոտ ի հայտ են եկել նոր պրակտիկաներ, իսկ իրենց
հայաստանյան միջավայրում՝ ոչ, դառնում է բախման պատճառ:
Նման իրավիճակներում կարևորվում է նաև **այլընտրանքը կամ
տարբերը ընկալելու ու հանդուրժելու պրակտիկան:** Միգրանտը,
այլ միջավայրում ներկայանալով որպես տարբեր և հանդիպելով
հանդուրժողական վերաբերմունքի, ընկալել ու յուրացրել է այդ
պրակտիկան: Հայաստան վերադարձից հետո նա դառնում է ոչ
միայն այդ պրակտիկան կիրառող, այլև՝ նման պահանջ ունեցող:
**Միջանձնային ու հասարակական հարաբերություններում նա
ձևավորում է նոր պրակտիկայի պահանջարկ:** Մովորաբար, նման
պահանջարկ ձևավորելու դեպքում, հայտնվում են նաև առանձին
անհատներ, ովքեր այդ պրակտիկայի կրողն են և տեղի է ունենում
նոր տիպի փոխհարաբերության պրակտիկայի ձևավորում: Սրանք
միջանձնային փոխհարաբերություններում նոր պրակտիկաների
ձևավորման նախադեպեր են, որոնց պատճառը հաճախ դառնում է
հին պրակտիկաների հանդեպ իրենց մոտ ձևավորված քննադա-
տական վերաբերմունքը:

*Ես վերադարձից հետո մինչև հիմա չեմ կարողանում
առօրյա պլանավորել: Ես այնտեղ ուրիշ բաների էի
սովորել ու ճիշտն ասած Հայաստանում ինձ շատ*

դժվար էր վերախնտեգրվելը: Ես մշակութային շուկ էի ապրում այստեղ: Հետաքրքիր է, որ դա երկկողմանիորեն էր շատ դժվար: Նախ, այն միջավայրը որտեղից գնացել էի, կարծես այդքան էլ ուրախ չէր, որ հետ էի եկել, զուտ այն առումով, որ իմ մեջ համախոհ չէին տեսնում: Ես իրենց մեջ օտար մարմնի պես մի բան էի դարձել և շատ կապեր խզվեցին: Ու հիմա արդեն, որ մի վեց ամիս անցել է, տեսնում եմ, որ կարծես օբյեկտիվ պատճառներ կային: Դու գալիս ես և դժգոհ ես: Այս մարդիկ սա ունեն և այլընտրանք չեն փնտրում և արդեն սովորել են: Դու դրսից գալիս ես և չես ուզում հին ձևով ապրել ու ուզում ես ինչ-որ բան փոխել: Եվ այդ ինչ-որ բան փոխելը շրջապատի հետ էր կապված: Եվ միակ տեղը, որ վերագտա դա համալսարանն էր: Այն էլ մի մարդու ըմբռման շնորհիվ, ով չնայած իմ կարծիքը կարող է չկիսել, բայց չի մտածում, թե մի բան եմ անում ինչն ինքը չի կիսում ոչ թե այն պատճառով որ անձամբ իրեն հակառակ եմ անում, այլ՝ որ պարզապես այլ կերպ եմ մտածում, այդ պատճառով:

Տղամարդ, 28 տարեկան,
բ.Երևան/ԱՄՆ (Միչիգան)

Միգրանտների կողմից կարևորվող պրակտիկաներից մեկն էլ **ճանաչողական պրակտիկաներն** են: Դրանք վերաբերում են ինչպես միջանձնային, այնպես էլ հանրային պրակտիկաներին: Դրանց կարևոր առանձնահատկությունը կարելի է համարել այն, որ նպաստում են անձանոթ պրակտիկաները ընկալելուն, այլ՝ ոչ թե միանգամից դիստանցավորվելուն ու մերժելուն:

Գիտես, ինչխ էր, իրանց համար հորքուր-մորքուր հաշվի չէին առնե: Մեր նման չէին: Կնայեին, եթե մարդը նորալ մարդ էր, լավ մարդ էր, կշփվեին հետը, չէին նայե, թե մեկը քուրս է, կամ ախպերս է, հավասար ու նորմալ բոլորի հետ: Մեր պես չէ, որ կնայենք, որ մեր մորը

օգնենք, մեր հարազատին օգնենք, մեր ընկերոջն օգնենք:

... Մինիստր էլ եղներ նույնն մարդն էր, հասարակ մարդ էլ եղներ նույն մարդն էր: Քաղաքապետը կուգար կսեր ըսիկ թուղթ գցելու արկղն է, ըսիկ պլաստմասինը: Մենք էլ կգարմանայինք: Քաղաքապետ մարդ էր, իրա հեծանիվով ամեն անգամ կուգար աղբը կնայեր: Իրեն շատ սովորական կպահեր, հագուստն էլ սովորական էր, չէր տարբերվի:

Տղամարդ, 43 տարեկան,
ք.Գյումրի/Գերմանիա (Բեռլին)

Ճանաչողական պրակտիկաների նման բնույթը նպաստել է միգրանտներից շատերի մոտ ձևավորելու միմյանց փոխկապակցված մի շարք այլ պրակտիկաներ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է քննադատական, հանդուրժողականության ու այլընտրանքի կարևորման պրակտիկաներին:

Հանդուրժողականության մակարդակը մեր մոտ շատ վատ ա: Իրենց մոտ այդ հանդուրժողականությունը կա ու որոշ առումով ես էլ իրենցից եմ սովորել: Հավասարը հավասարին չկար մեր մոտ: Հիմա մի քիչ որոշ սոցիալական շարժումներ կան, որոնք փորձում են հասարակությանը դա տեղ հասցնել, որ բոլորն էլ հավասար են այլն:

Կին, 27 տարեկան,
ք.Երևան/Լեհաստան (Վարշավա)

Տարբերը հանդուրժողաբար ճանաչելու այդ մոտեցումը, որպես վերադարձից հետո իրենց հետ Հայաստան բերած պրակտիկա, միգրանտներից շատերն են նշել: Հարցազրույցներում հանդուրժողականությունը կարևորվում է նաև այլընտրանքներ գտնելու տեսանկյունից: Այս կոնտեքստում հետաքրքիր է նաև ոչ միայն ուրիշին հանդուրժելու, այլև՝ սեփականը գնահատելու պրակտիկաների զարգացումը:

Միգրացիան ինձ սովորեցրել է գնահատել: Այստեղ մարդիկ շատ են բողոքում, ու եթե ես էլ չգնայի այստեղից կարող է ես էլ չգնահատելի այստեղինը: Բայց քանի որ տեսել եմ դրսինը սեփական աչքերով ու համոզվել, որ շատ բաներ այդքան էլ սիրուն չեն, որքան որ ներկայացնում են, սկսել եմ գնահատել այստեղինը. Օրինակ, այստեղ մարդիկ բողոքում են, որ իրենց մտերիմները քիթը խոթում են իրենց գործերի մեջ, բողոքում են շատ ուշադրությունից: Բայց իրենք չգիտեն, որ կա նաև սառնություն, անտարբերություն, ինչը շատ ավելի վատ է:

Կին, 30 տարեկան,
ք. Երևան/ԱՄՆ (Իլինոյս)

Սա շատ հետաքրքիր ու նուրբ դիտարկում է, որը հանդիպում է տարբեր միգրանտների հարցազրույցներում: Այս նյութը թույլ է տալիս եզրակացնել, որ միգրանտների մի միջավայրից մյուսը տեղաշարժերը նպաստում են քննադատական հայացք գցել սեփական պրակտիկաներին և փոխել սովորական դարձած մեկնաբանություններն և գնահատականները: Կարելի է ասել, որ տեղաշարժման պրակտիկաները նպաստում են նաև միգրանտների մոտ *ռեֆլեքսիվ պրակտիկաների* ձևավորմանը:

Որպես նորույթ է նշվում նաև նաև *սեփական անհատական-նությամբ ու հետաքրքրությունների իրացման պրակտիկաները*:

Այնտեղ հասկացա մի շատ կարևոր բան, որ եթե մի բան սիրում ես, ուրեմն դա պետք է իրագործես: Ինձ թվաց, որ ես ու իմ կողքի մարդիկ Հայաստանում ապրում ենք երազելով ու երբեք չենք փորձում երազանքներն իրականացնել: Հասկացա, որ մարդիկ մի բան որ ուզում են, անում են: Մեզ մոտ կյանքը աշխատանքն է, տունն ու հեռուստացույցը: Իսկ Շվեդիայում ես հասկացա, որ կյանքը շատ բազմազան կարելի է ապրել:

Կին, 29 տարեկան,
ք. Երևան/ Շվեդիա (Ստոքհոլմ)

Հատկանաշական է, որ անհատական հետաքրքրությունների իրացմանն ուղղված պրակտիկաներին զուգահեռ, հատկապես, ուսանող միգրանտների կողմից, նշվում է նաև քաղաքացիական շարժումներով հետաքրքրվածության աճը: Նրանցից ոմանք համալսարանական կյանքի ընթացքում ներգրավել են ուսանողական առօրյաի մասը կազմող տարբեր ակցիաների ու միջոցառումների կազմակերպմանը և շարունակել դա Հայաստանում: Ուսանող միգրանտների մեջ կան նաև այնպիսիները, ովքեր քաղաքացիական ակտիվություն են սկսել ցուցաբերել միայն Հայաստան վերադարձից հետո: Դա նկատելի է հատկապես նրանց մոտ, ովքեր կրթական միգրացիայի ընթացքում ունեցել են անհատականության իրացման պրակտիկաների փոփոխություն, որոնցում կարևոր դեր է խաղացել նրանց սուբյեկտության ձևակերպման ու իրացման գործոնը:

Այնտեղ ես հասկացա, որ կարող եմ ինձ շատ շատ տարբեր ոլորտներում փնտրել ու գտնել: Հիմա ես իմ մասնագիտությունից դուրս շատ բաներով եմ զբաղվում: Ֆոտոյով եմ զբաղվում, գրականությամբ, թարգմանություններ եմ անում: Վերջերս Բուկովսկի եմ թարգմանել: Իմ բլոգում եմ զբաղված: Ֆեյսբուքում եմ բավական ակտիվ: Սկսել եմ մասնակցել նաև քաղաքացիական շարժումներին:

Կին, 21 տարեկան,
ք. Երևան, ԱՄՆ (Պորտլենդ)

3.4. Ձեռք բերվող կապիտալի տեսակները և ինքնության ոճայրեզնետացիան

Միգրանտները բնորոշվում են տեղաշարժման իրենց յուրահատուկ պրակտիկաներով: Տեղաշարժման յուրաքանչյուր փորձառությունը թողնում է իր հետքը: Վերջինիս կարևոր բաղադրիչներից մեկն իրենից տարբեր մարդկանց պրակտիկաների մասին տե-

ղեկատվությունն ու պատկերացումներն են: Եվ եթե դրանք նույնիսկ չեն ձևավորում նոր պրակտիկաներ, ապա նպաստում են բարենպաստ հասարակական ֆոնի ստեղծմանը: Հատկապես, վերադարձած այն միգրանտները, ովքեր ընդունող հասարակությունում չեն ունեցել տեղաշարժման սահմանափակվածություն, ձեռք են բերել հաղորդակցման հարուստ փորձառություն, շփվել մարդկանց հետ, առնչվել բազմազան պրակտիկաների, նրանց մոտ տեղի է ունեցել ճանաչողության ընդլայնում: Դրան նաև նպաստել է այլ մշակույթների ճանաչման փորձառությունը: Վերջինս ձևավորվել է ճանաչողական տարբեր պրակտիկաների շնորհիվ: Այդ պրակտիկաներից որոշները եղել են մերժողական, որոշները հակադրվելու, որոշները ճանաչելու ու ընկալելու, որոշներն էլ հանդուրժողական:

Մինչև մեկնելը ես գաղափար չունեի, թե ուրիշ ազգերի հետ ինչպես շփվել: Մենք ուրիշ դաստիարակություն ունենք: Բայց տարիների ընթացքում ձեռք եմ բերել որոշակի հմտություն, ինչը ցանկության դեպքում, արդեն հնարավորություն է տալիս շփվել մարդկանց հետ: Հիմնականում ռուսներ, թաթարներ, չեչեններ, դաղստանցիներ, մորդվաներ ու էլի տարբեր ազգեր: Ռուսաստանում հարյուրավոր ազգեր, ազգություններ կապրին:

Տղամարդ , 40 տարեկան,

ք. Գյումրի/ Ռուսաստան (Միչուրինսկ)

Եթե նույնիսկ, վերադարձածները գտնում են, որ միգրացիայի ընթացքում իրենք չեն փոխվել, հիմնականում նկատի ունեն այն, որ իրենց առօրյա պրակտիկաներն են մնացել անփոփոխ: Սակայն, երբ ծանոթանում ենք խորացված հարցազրույցների նյութերին, հասկանում ենք, որ դա այդքան էլ այդպես չէ: Նրանք, իհարկե, կրել են որոշակի փոփոխություն առաջին հերթին գիտելիքի մակարդակում: Միգրանտներն իրենք, հաճախ դա չեն կարողանում սահմանել որպես փոփոխություն, այն պատճառով, որ դա մի տե-

սակ ֆոնային բնույթ ունի: Դա գիտելիք է միգրանտի համար ան-
 ծանոթ ու նոր առօրեականության և պրակտիկաների մասին: Այն-
 պիսի գիտելիք, որը, եթե նույնիսկ, չի հանգեցնում միգրանտի կող-
 մից տվյալ պրակտիկան յուրացնելուն, բայց փոխում է նրա վերա-
 բերմունքն այդ պրակտիկայի հանդեպ: Դա նպաստում են նաև փո-
 խելու իր համար անծանոթ երևույթների ու խնդիրների մասին *դա-
 տողությունն անելու պրակտիկաները*: Որոշ դեպքերում դրանք դեռ
 մնում են հակադրվելու պրակտիկաներ: Սակայն, փորձառության
 հետ միասին *ճանաչողական պրակտիկաներն* իրենք են փոփոխ-
 վում: Միգրատներից ոմանք նկատում են, որ իրենք նաև կարողա-
 նում են այլ դիրքից նայել խնդրին ու հասկանում են, որ ճշմար-
 տություններն ու դրանցով պայմանավորված պրակտիկաները կա-
 րող են շատ տարբեր լինել: Եվ պարտադիր չէ, որ այդ տարբերը սե-
 փականի համեմատ միշտ սխալ լինի կամ անընդունելի: *Մա առա-
 ջացնում է տարբերք բազմազանության համատեքստում մեկնա-
 բանելու պրակտիկա և նպաստում անծանոթին ու նորին հանդուր-
 ժողաբար վերաբերվելուն*: Միգրացիան փոխում է միգրանտի տե-
 դեկատվական բազան և դրանով հանդերձ նրան դարձնում ավելի
 ընկալունակ: Նրանք շատ որոշակիորեն հասկանում են, որ կան
 բաներ, որոնք տարբերվում են իր մշակույթից և կան բաներ էլ, ո-
 րոնք ոչ միայն տարբեր են, այլ՝ ընդհանրապես բացակայում են
 դրանում: Այսինքն, միգրացիան ավելի հանդուրժող է դարձնում
 մարդուն տարբերի հանդեպ և, եթե նույնիսկ, միգրանտը չի ընդօ-
 րինակում ու յուրացնում այդ տարբերն իր առօրյա կյանքում, ամեն
 դեպքում, դառնում է ավելի ընկալունակ նորի ու տարբերի հան-
 դեպ: Նշվածն իր բնույթով առաջին պլանի երևույթ չէ և միանգամից
 չի նկատվում: Այն մի տեսակ ֆոնային բնույթ ունի: Երբեմն այն
 արտացոլվում է միգրանտների խոսքում: Դրանք, մի տեսակ, այն-
 պիսի խոսքեր են, որոնք առկա են գործողության մեջ, որոնք դար-
 ձել են կամ վեր են ածվում գործողության խոսքը հնչելու հետ միա-
 սին ու դրա միջոցով ձևավորում ֆոնային պրակտիկաներ: Դրանք

խոսքային գործողություններ են: Վերջիններս նման են պրակտիկաների տեսության մեջ բազմիցս քննարկված այն երևույթին, որը որոշ գիտնականների կողմից ստացել է *ֆոն* (Wittgenshtein 1980. 97) *ֆոնային պրակտիկա* (Searle 1980. 227), *ֆոնային սպասումներ* (Garfinkel 2011. 54), *ֆոնային գիտելիք* անվանումները, որոնք նկարագրում են այն գիտելիքը, որը ձևավորում է կարծիք, վերաբերմունք: Որոշ դեպքերում, այդ գիտելիքը ներկայացվում է խոսքի միջոցով: Դրանք հենց այն խոսքի ձևերն են, որոնք փոխում են առօրեականությունը, առաջացնելով քննադատականություն, հանդուրժողականություն, տարբերի, այլընտրանքի, նորի, հանրայինի, քաղաքացիականի շուրջ այնպիսի դիսկուրսներ, որոնք փոխում են մարդկանց դիրքորոշումները, փոխհարաբերություններն ու միջավայրը: Այդ ֆոնային պրակտիկաներն ունեն քողարկված բնույթ, քանի որ արտաքուստ շատ դժվար նկատելի են: Սակայն, դրանք նույնպես պրակտիկաներ են: *Վերադարձած միգրանտների մոտ հանդիպող նման պրակտիկաները կարելի է անվանել տարրերի հանդեպ հանդուրժողականության պրակտիկաներ:* Հանդուրժողականությունը մի երևույթ է, ինչն առաջին հայացքից կարող է չնկատվել, քանի որ այն միտված չէ առարկայորեն իրեն ցուցադրելու, ինչ-որ բանի վրա ներագդելու ու փոխելու: Սակայն, այն ձևավորում է նոր պրակտիկա, որ հայտնվելով մարդու առօրյա վարքագծում, փոխում է մարդկանց և հասարակական հաստատությունների հետ նրա փոխհարաբերությունների բնույթը: Այն փոխում է տարբերի հանդեպ ագրեսիվ վարքը, մերժողական արձագանքման ձևը և դրանով իսկ նպաստավոր ֆոն ձևավորում հասարակությունում նոր պրակտիկաների ձևավորման ու իրացման համար: *Սա մի պրակտիկա է, որը ձևավորվում է ինչ-որ բան չանելու արդյունքում և պարադոքսալ կերպով այդ ինչ-որ բան չանելը վեր է ածվում ինչ-որ բան անելու՝ հանդուրժելու պրակտիկայի ձևով:*

Նշվածից բացի նկատելի է նաև ֆոնային պրակտիկաների փոփոխման մեկ այլ դրսևորում: Խոսքը վերաբերում է անհատա-

կան մակարդակում տեղի ունեցող այնպիսի փոփոխություններին, որոնք ուղղված են ոչ թե գործող պրակտիկաները մերժելուն ու դրան հակադրվելուն, այլ՝ *պրակտիկաների տարապատկերն ընդլայնելուն*։ Դրանք սովորաբար այնպիսի պրակտիկաներ են, որոնք իրենց կյանքի իրավունքը ձեռք են բերում առանց կոշտ կերպով հակադրվելու գործող պրակտիկաներին ու էթնոմշակութային ստերեոտիպերին։ Դա կարող է լինել հագուստի նոր բաղադրիչը, ուտեստի նոր տեսակը, մատուցման ձևը, նոր երգը, խնջույքի կազմակերպման ձևը, տարածության կազմակերպումը, ժամանակի ու ժամանցի պրակտիկան, ավտոմեքենայի մոդելը, կին-տղամարդ փոխհարաբերության ձևը և այլն։ Այսինքն, որոշ միգրանտներ իրենց առօրյա վարքագծով, հագուստով, սնվելու, ժամանցի կազմակերպման ձևով առաջացնում են Հայաստանում առկա ֆոնային պրակտիկաների միատիպության փոխակերպում։ *Դրանց շնորհիվ ֆոնը միտվում է դառնալու ավելի բազմազան։ Ֆոնային պրակտիկաներում բազմազանության ձևավորումը լայն առումով ազդում է հասարակության մեջ հանդուրժողականության ընդլայնմանը*։ Որոշ առումով դրանք նպաստում են նաև հիմնական պրակտիկաների փոխակերպմանը և, ընդհանրապես, հասարակության մշակութային դիապագոնի ընդլայնմանը։

Մեկ այլ կարևոր երևույթ կարելի է համարել միգրանտների կողմից *քննադատականության պրակտիկաների* ներմուծումը։ Քննադատական պրակտիկաները ունենում են տարբեր դրսևորումներ, սկսած դիսկուրսիվ պրակտիկաների ձևավորումից վերջացրած գործունեության տարբեր ձևերին վերաբերողները։ *Դիսկուրսիվ պրակտիկաները* կարևոր են, քանի որ առաջացնում են քննարկումներ ու քննադատական մոտեցումներ հիմնական պրակտիկաների հանդեպ։ Հաճախ դրանք ուղղված են միակ ու բոլորի կողմից ընդունելի ճշմարտությունները, բարոյական ու գեղագիտական նորմերը ներկայացնող պրակտիկաների քննադատությանը և այլընտրանքային պրակտիկաների ձևավորմանը։ Այս

քննադատական վերաբերմունքը ձևավորում է դիսկուրսիվ պրակտիկաներ, որոնք տարածվելով ավելի ու ավելի լայն շրջանակներում, նպաստում են կարծիքների բազմազանության ձևավորմանը: Դրանք երբեմն բախվում են իրար, այդ բախման միջոցով ներկայանում մեկմեկու, դառնում ճանաչելի, որոշ դեպքերում նաև ընդունելի:

Հայաստանում առօրեականության վրա ազդեցության ու փոփոխությունների տեսանկյունից կարող ենք առանձնացնել վերադարձած միգրանտների մի քանի տիպեր .

- a) Միգրանտներ, ովքեր ունեցել են տարբեր մշակույթի ու պրակտիկաների մասին տեղեկատվության ընդլայնում ու տարբերի հանդեպ հանդուրժողական մոտեցում:
- b) Միգրանտներ, ովքեր միգրացիայի վայրում իրենց պրակտիկաներում կրել են որոշակի փոփոխություններ: Չնայած, վերադարձից հետո նրանք հրաժարվել են դրանց մի մասից, բայց, միաժամանակ, դրանք նպաստել են տեղական պրակտիկաների հանդեպ քննադատական մոտեցումների ձևավորմանը:
- c) Միգրանտներ, ովքեր փոխառել են մի շարք առօրյա պրակտիկաներ և շարունակել դրանք կիրառել նաև վերադարձից հետո: Խոսքը վերաբերում է մասնավորապես սննդի, հագուստի, ժամանցի, ժամանակի ու տարածության կազմակերպման, միջանձնային փոխհարաբերությունների, հանրային և քաղաքացիական պրակտիկաներին:

Ինչ վերաբերում է պրակտիկաներին, ապա կարելի է ասել, որ կան այնպիսիները,

- a) որոնցից միգրանտները վերադարձից հետո հրաժարվում են,
- b) որոնք վերադարձից հետո պահպանվում են,

- с) որոնք ձևավորվում են միգրացիայից հետո, չեն կրկնում միգրացիայի ընթացքում ձեռք բերածները, սակայն հենվում են դրանց վրա:

Հայաստան վերադառնալուց հետո միգրանտները հրաժարվում են այն պրակտիկաներից, որոնք իրենց կարծիքով պարտադիր չեն կամ չեն ծառայում Հայաստանում իրենց կարգավիճակի վերարտադրությանը և նպատակների լուծմանը: Իսկ պահպանվում են պրակտիկաներ, որոնք բնականաբար ծառայում են կարգավիճակի վերարտադրությանն ու նպատակների իրացմանը: Կան պրակտիկաներ, որոնք կիրառվել են միգրացիայի ընթացքում, սակայն Հայաստան վերադարձից հետո, կտրուկ դադարեցվել են: Դրա պատճառը հիմնականում կապված է վերադարձից հետո միգրանտի կարգավիճակի ու նպատակների փոփոխության հետ: Խնդիրն այն է, որ կան կարգավիճակներ, որոնք հակասության մեջ են որոշ պրակտիկաների հետ և բացառում են դրանց հնարավորությունը Հայաստանում: Ասենք օրինակ, տղամարդու կարգավիճակը հայկական միջավայրում բացառում է տանը կերակուր եփելը, ափսե լվանալը, բնակարանի հատակն ավելելը և այլն: Այդ պրակտիկաների գործադրումը կարող է առաջացնել տղամարդու կարգավիճակի անկում: Սակայն, հետազոտական տվյալներում հաճախ կարելի է հանդիպել դեպքերի, երբ միգրանտի կարգավիճակը չի բացառում նույն պրակտիկաները ընդունող երկրում: Ըստ միգրանտների եղել են դեպքեր, երբ իրենք են ճաշ պատրաստել, իրենց և մյուսների ափսեները լվացել: Եղել են նաև դեպքեր, երբ ամուսինը օգնել է կնոջը տան գործերում, երեխայի խնամքի հարցում և այլն: Օտար միջավայրում, քանի որ դա չի ազդել տղամարդու կարգավիճակի անկման վրա, թե հանրային լայն միջավայրում և թե ընտանիքում ունանց համար համարվել է ընդունելի:

Միգրանտներից նրանք, ովքեր վերադարձից հետո վերաձևավակերպում են իրենց կարգավիճակը և նպատակները, երբեմն շարունակում են միգրացիայի ընթացքում փոխառած որոշ պրակտի-

կաները կամ ձևավորում են նորերը: Սեզոնային միգրանտների մոտ նոր պրակտիկայի ձևավորման օրինակ կարելի է համարել տնտեսական կապիտալը սոցիալականի փոխակերպելուն ուղղված այնպիսի պրակտիկայի տարածումը, ինչպես ասենք, միգրացիայի ամիսներին վաստակած գումարով արտասահմանյան մակնիշի մեքենա գնելը և թաղամասում կամ գյուղում ցուցադրաբար վարելը:

Ինչ վերաբերում է կարգավիճակի փոփոխության խնդրին, ապա դրա վրա ազդող առավել էական գործոնը ինքնության ձևակերպումն ու վերաձևակերպումն է: Եթե միգրացիան չի ազդում ինքնության ձևակերպման վրա, ապա կարգավիճակի ու նպատակների փոփոխության խնդիրներ դժվար են առաջանում: Սակայն, որպես կանոն միգրացիան այս կամ այն կերպ ազդում է ինքնության ձևակերպումների վրա: Սեզոնային միգրանտների ինքնության մեջ ի հայտ է գալիս «խոպանչու» բաղադրիչը (Հայաստանում այդպես անվանում էին խորհրդային ժամանակաշրջանում Հայաստանից Ռուսաստան արտագնա սեզոնային աշխատանքի մեկնողներին (Գալստյան 2006. 17)): Իսկ ուսանող միգրանտների մոտ, օրինակ, որոշ դեպքերում ի հայտ է գալիս ինքնություն անհատականության ինքնությունը, կամ՝ միջազգային որակավորում ունեցող մասնագետի, քաղաքացու և այլն:

Վերադարձից հետո հանրային պրակտիկաների վրա վերադարձած միգրանտների ազդեցությունը պայմանավորող կարեվոր հարցերից է այն, թե կապիտալի ինչ տեսակներ են նրանք բերում Հայաստան:

Ուսանող միգրանտները վերադառնալով Հայաստան, բերում են երկու տեսակի մշակութային կապիտալ: Դրանց մի մասը մասնագիտական գիտելիքներն են: Իսկ մյուսը՝ առօրեականության, միջանձնային հարաբերությունների, հանրային կյանքի և տարբեր տեսակի վերացական արժեքների մասին գիտելիքները: Մշակութային կապիտալի որոշակի դրսևորում կարելի է համարել

նան անձի մակարդակում տեղի ունեցած անհատականության աճը և սեփական սուբյեկտության ձևակերպումը: Վերադարձից հետո, միգրանտի մոտ իր մշակութային կապիտալը շրջանառության մեջ դնելու ու վերարտադրելու խնդիր է առաջանում: Մշակութային կապիտալն իր բնույթով այնպիսին է, որ շրջանառության մեջ դնելու դեպքում կարող է նպաստել նաև կապիտալի տնտեսական ու սոցիալական ձևերի բաշխման գործընթացներին մարդու մասնակցության աճին և արդյունավետության բարձրացմանը:

Մասնագիտական գիտելիքների ձևով Հայաստան ներկրված մշակութային կապիտալը նրանք սովորաբար ներդնում են տնտեսական կապիտալի բաշխման ու վերաբաշխման համար նպաստավոր դաշտերում: Այդ դաշտերը շատ բազմազան են՝ հեռահաղորդակցում, բարձր տեխնոլոգիաներ, բարձրագույն կրթություն, կառավարման ու մարկետինգի ոլորտներ և այլն:

Հանրային կյանքին վերաբերող գիտելիքների ձևով Հայաստան բերված մշակութային կապիտալը սովորաբար ներդրվում է սոցիալական կապիտալի բաշխման գործընթացներում: Այստեղ է, որ տեղի է ունենում քաղաքացիական հասարակության, որպես սոցիալական կապիտալի բաշխման իրականացումն ապահովող դաշտի հանդեպ վերադարձածների հետաքրքրության աճ: Որպեսզի մասնակցեն սոցիալական կապիտալի բաշխման գործընթացներին, նրանք ձգտում են դիրքավորվել այդ դաշտում՝ օգտագործելով ու իրացնելով հանրային բովանդակություն ունեցող գիտելիքների ու պրակտիկաների ձևով իրենց հետ բերած մշակութային կապիտալը: Քաղաքացիական հասարակության, որպես սոցիալական կապիտալի բաշխման յուրահատուկ դաշտի կայացման ու զարգացման մեջ այս միգրանտների շահագրգռվածությունը պայմանավորված է այն բանով, որ ապահովում է իրենց մշակութային կապիտալը շրջանառության մեջ դնելու ու կարգավիճակ ձևավորելու հնարավորություն: Խնդիրն այն է, որ վերադարձածների մի մասն իր նոր կարգավիճակը ձևակերպում է իր ինքնության մեջ

տեղի ունեցած փոփոխություններից ելնելով: Նոր կարգավիճակի ձևակերպման անհրաժեշտությունը առաջացնում է միգրացիայի ընթացքում տեղի ունեցած ինքնության փոփոխությունը, իսկ որոշ դեպքերում, ձևավորված նոր ինքնությունը իրացնելու ձգտումը: Իսկ դրա համար կարևոր խնդիր է նոր կարգավիճակը հասարակական դաշտում հաստատելը: Այդ խնդիրը լուծելու համար միգրանտը պետք է մասնակցի սոցիալական կապիտալի բաշխման գործընթացներին, ինչի համար նրան անհրաժեշտ է դիրքավորվել համապատասխան հասարակական դաշտում: Այդպիսի դաշտ է քաղաքացիական դաշտը: *Այսինքն, կարգավիճակը հասարակական դաշտում անհատի դիրքավորումը երաշխավորող գործոն է: Այն ինքնությունը ներկայացնելու/ռեպրեզենտացնելու դիրքն է, իսկ ներկայացման միջոցները՝ պրակտիկաներն են:*

Նկատենք, որ սեզոնային միգրանտն իր կարգավիճակը իրացնելու համար, քաղաքացիական հասարակության, որպես սոցիալական կապիտալի բաշխման դաշտի կարիքը չի զգում: Նրա համար նախընտրելի դաշտն իր թաղամասն է, գյուղը, կամ ազգակիցների ու ընկերների միջավայրը: Իսկ սոցիալական կապիտալը վերարտադրելու համար ներդնում է ոչ թե միգրացիայի ընթացքում ձեռք բերված մշակութային կապիտալը, այլ՝ տնտեսական կապիտալը:

Սեզոնային միգրանտի առանձնահատկությունն այն է, որ ինքը Հայաստանում իր կարգավիճակը վերարտադրելու համար ներդնում է տնտեսական կապիտալ և դրա շնորհիվ ձեռք է բերում ցուցիչային նշանակության նյութական արժեքներ, որոնց ներկայացման/ռեպրեզենտացման պրակտիկաները քաղաքացիական հասարակության զարգացման հարցում առանձնապես կարևոր դեր չեն իրականացնում: Իսկ ուսանող միգրանտի համար ցուցիչային նշանակության արժեքները ոչ նյութական բնույթի են, որոնց ներկայացման պրակտիկաները նպաստում են քաղաքացիական հասարակության զարգացմանը:

Երկարատև միգրացիայից վերադարձածները տարբերվում են ինչպես սեզոնային, այնպես էլ ուսանող միգրանտներից: Նրանք խնդիր չունեն իրենց կարգավիճակը վերարտադրել ամենամյա աշխատանքային միգրացիայի միջոցով, ինչպես անում են սեզոնային միգրանտները: Վերադարձից հետո նրանց խնդիրը Հայաստանի տնտեսական դաշտերում դիրքավորվելն է: Այդ պատճառով տնտեսական կապիտալը ներդրում են մանր ու միջին բիզնես հիմնելու մեջ: Իսկ եթե չունեն բավականաչափ տնտեսական կապիտալ, ապա փորձում են մտնել մի որևէ տեղ աշխատելու: Հարցմանը մասնակցած միգրանտների այս խմբի մոտ միգրացիայի ընթացքում չնայած ձևավորվել է ընդունող հասարակության արժեքների և որոշ պրակտիկաների ընկալում, սակայն անհատականության փոխակերպում և ինքնության վերաձևակերպման խորքային փոփոխություններ չեն կատարվել: Այդ պատճառով, սրանք հասարակական փոխակերպման խնդիրներ չեն բարձրացնում: Սակայն, կարևոր է նկատել, որ իրենց ֆոնային գիտելիքներով, մասնավորապես արևմտյան հասարակության պրակտիկաների մասին տեղեկատվության աստիճանով ու ֆոնային պրակտիկաներով ձևավորում են նպաստավոր ֆոն, որոնք երբեմն դրսևորվում են իրենց միկրոմիջավայրերում նպատավոր դիսկուրսիվ և քննադատական պրակտիկաների դրսևորմամբ: Ասենք օրինակ, իրենք անձամբ չեն մասնակցում քաղաքացիական շարժումներին, սակայն իրենց միջավայրում դրական կարծիք են արտահայտում դրանց մասին:

Հետազոտության որակական տվյալները թույլ են տալիս ասել, որ քաղաքացիական հասարակության զարգացմանը նպաստող պրակտիկաների տարածման հարցում կարևոր դեր են խաղում հենց անհատական մակարդակում տեղի ունեցող փոփոխությունները: Միգրացիան, հատկապես երիտասարդ տարիքում, նպաստում է, որ միգրանտը հաղթահարի ու անցնի մշակույթի սահմանը և մտնի իր իսկ անհատականության տարածք: Անհատի

մեջ տեղի ունեցող այս տեղաշարժը արմատական փոփոխություն է առաջացնում նաև իր և ընդունող հասարակության միջև փոխհարաբերություններում դիրքավորվելու հարցում: Դրանցում կարևոր դեր է սկսում խաղալ ոչ թե իր և օտար մշակույթների տարբերությունը, այլ՝ կոնկրետ պրակտիկաների: Փոխվում են *սահմանները գծելու պրակտիկաները*: Երբ միգրանտն իր անհատականությունը պայմանավորում ու ներկայացնում է որպես էթնիկ մշակույթի ներկայացուցիչ, նա նաև պրակտիկաների մակարդակում է շարունակում մնալ մշակույթի տարածքում, սեփական անհատականության սահմանից այն կողմ: Նրա ինքնությունը սահմանում է իր մշակույթը, այլ՝ ոչ թե ինքը, որպես անհատ: Բայց, երբ նա հաղթահարում է մշակույթի ու անհատականության միջև սահմանը և մտնում իր անհատականության տարածք, նա իր համար կարևորում է ընդունող հասարակությունում ոչ այնքան իր մշակույթի, որքան իր անհատականության ներկայացումը: *Նա հաղթահարում է սեփական մշակույթի սակրալության ստերեոտիպային արգելքը*: Այդ դեպքում, առօրեականության մակարդակում նրա համար սահմանը իր և ընդունող հասարակության ամուր ու դժվար հաղթահարելի սահմանից տեղափոխվում է պրակտիկաների աշխարհի, որտեղ սահմանները պրակտիկաների մեջ են և սահմանը սահմանողը ոչ թե մշակույթն է, այլ՝ ինքը, անհատը:

Վերը նկարագրված խորքային և որակական բնույթի փոխակերպումներն են, որ ազդում են վերադարձածների քաղաքացիական վարքագծի վրա: Վերադարձածների մեջ նման խորքային փոխակերպում ապրածներն են, որ մշակույթով պայմանավորված, առօրեականության ստերեոտիպային պրակտիկաներին հակադրում են անհատականը ու քաղաքացիականը: Նրանք են, որ քննադատում են իշխանության պաշտոնական պրակտիկաները և, որպես այլընտրանք, ներկայացնում ու պաշտպանում քաղաքացիական պրակտիկաները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում հասարակական գործընթացների փոխակերպումների վրա միգրացիան ունենում է նկատելի ազդեցություն: Դրանում նշանակալի է միգրանտների առօրյա պրակտիկաների փոխակերպումների դերը: Դրանք արտացոլված են առօրեականության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հագուստի, ուտեստի, տարածության ու ժամանակի կազմակերպման, ժամանցի, միջանձնային փոխհարաբերությունների պրակտիկաները: Փոփոխություններ են տեղի ունենում նաև հանրային կյանքին անհատի մասնակցության պրակտիկաներում: Այդ առումով հատկապես կարևոր են քաղաքացիական պրակտիկաների փոխակերպումները: Դրանք, առանձնապես, նկատելի են 2010 թվից իվեր Հայաստանում աշխուժացած քաղաքացիական նախաձեռնություններում: Այդ պրակտիկաները զգալիորեն նպաստում են նաև մասնակցային ժողովրդավարության զարգացմանը: Մեր ուսումնասիրած հետազոտական դեպքը թույլ է տալիս նկատել, որ Երևան քաղաքում հանրային ու կանաչապատ տարածքները առևտրային գոտու վերածելու քաղաքային իշխանությունների որոշման դեմ պայքարում կիրառված քաղաքացիական պրակտիկաների շնորհիվ հնարավոր եղավ հասնել այն բանին, որ քաղաքային ու հանրապետական իշխանությունները ստիպված եղան որոշում կայացնելու գործընթացում հաշվի նստել քաղաքացիների կարծիքի հետ: Հայաստանի իշխանություններն այս հարցում դեռևս շատ պահպանողական ու ավտորիտար են: Հաճախ նրանք իրենց դրսևորում են, որպես խորհրդային ավտորիտար ու հիերարխիկ կառավարման ավանդույթների շարունակող: Քաղաքացիական պրակտիկաների կարեվոր կողմերից մեկը հենց այն է, որ դրանք ներկայանում են որպես իշխանության կողմից կիրառվող պրակտիկաների այլընտրանքներ: Քաղաքացիական այս նախաձեռնությունների միջոցով դրա

մասնակիցները ոչ թե իրենք են հակադրվում իշխանությանը, այլ հակադրում են քաղաքացիական պրակտիկաները իշխանության պրակտիկաներին, դրանով նպաստելով իշխանության ավտորիտար և հիերարխիկ պրակտիկաների փոխակերպմանը հորիզոնականի ու մասնակցայինի:

Կարևոր է նաև այն, որ դրանք նպաստում են կառավարման համակարգում ընդունվող որոշումները հանրային շահերի վրա կառուցելու ավանդույթների ձևավորմանը: Քաղաքացիական պրակտիկաները Հայաստանում, իհարկե, դեռևս սաղմնային վիճակում են: Սակայն, մեր իրականացրած ներգրավված դիտարկումների և խորացված հարցազրույցների տվյալները թույլ են տալիս ասել, որ դրանք որակական ու քանակական առումներով աճի ու տարածվելու միտում ունեն:

Չի կարելի ասել, որ քաղաքացիական նախաձեռնությունների ձևավորումը պայմանավորված է միգրանտների կողմից Հայաստան բերված պրակտիկաներով: Բայց, հստակ է, որ այդ նախաձեռնություններում ներգրավվում են նաև վերադարձած միգրանտներ, որոնց արժեքային համակարգում ու պրակտիկաներում քաղաքացիական բաղադրիչը զարգացել է հենց միգրացիայի ընթացքում: Վերադարձի միգրացիայի ազդեցությունն այն է, որ նպաստել է քաղաքացիական շարժումներում ակտիվ մասնակիցների քանակի աճին և գործադրվող քաղաքացիական պրակտիկաների բազմազանության ձևավորմանը: Դրսի քաղաքացիական ակտիվիստների հետ ումանց ձևավորած կապերը նպաստում են նաև ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ իրականացնել հեռացանցային քննարկումներ և փորձի փոխանակում:

Հետազոտական տվյալները թույլ են տալիս ասել, որ քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացների վրա առավել անմիջական ու ուղղակի դեր են ունենում Հայաստան վերադարձած ուսանող միգրանտները: Այդ գործընթացների վրա ազդեցության տեսանկյունից անմիջական չէ, սակայն նպաստավոր է

նան արևմտյան երկրներից վերադարձած երկարատև միգրատների դերը: Ինչ վերաբերում է սեզոնային միգրանտներին, ապա հիմնականում, քաղաքացիական հասարակության ձևավորման ու զարգացման գործընթացների վրա նրանց ազդեցությունը չեզոք է: Ավելին, նրանք միգրացիայի ընթացքում յուրացնում և Հայաստան են բերում պրակտիկաներ (անտառբերության, խուսափողականության, հարմարողականության և այլն), որոնք իրենց բնույթով ավելի նպաստավոր հող են ստեղծում իշխանության ավտորիտար ու հիերարխիկ պրակտիկաների տարածման համար, քան քաղաքացիականի:

Կարևոր է նաև նկատել, որ վերադարձած միգրանտների միջոցով Հայաստան բերվող պրակտիկաները քաղաքացիական հասարակության զարգացման առումով մի քանի տեսակի են.

- քաղաքացիական պրակտիկաներ, որոնք ուղղակի են ազդում գործընթացների վրա,
- առօրեականության հիմնական պրակտիկաներ (տարածության ու ժամանակի կազմակերպման, ժամանցի, միջանձնային և հանրային փոխհարաբերությունների, հագուստի, ուտեստի անհատականություն պրակտիկաներ և այլն), որոնց կրողները նպաստավոր արժեքային ու հասարակական դաշտ են ձևավորում քաղաքացիական հասարակության կայացման համար: Նրանք նպաստում են նաև հասարակական միջավայրերում քաղաքացիական հասարակության ձևավորումը կարևորող դիսկուրսների ձևավորմանը,
- առօրեականության ֆոնային պրակտիկաներ (հանդուրժողականության, քննադատականության, ռեֆլեքսիվ, այլընտրանքային, երկխոսության, դիսկուրսիվ և այլ պրակտիկաներ), որոնց կրողները նույնպես նպաստում են քաղաքացիական հասարակությ-

յան զարգացմանը վերաբերող դիսկուրսների տարածմանը և ձևավորում են քաղաքացիական շարժումների քաջալերման հասարակական ֆոն:

Հետազոտական տվյալները թույլ են տալիս ասել, որ քաղաքացիական պրակտիկաները ուղղակիորեն կապված են առօրեականության այնպիսի պրակտիկաների հետ, ինչպես ասենք սննդի, հագուստի, ժամանացի, ժամանակի ու տարածության կազմակերպման և այլն: Այս առումով քաղաքացիական հասարակության ձևավորման հարցում կարևոր դեր են կատարում ոչ միայն հենց բուն քաղաքացիական պրակտիկաները, այլ՝ ընդհանրապես առօրեականության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, որոնք ազդում են անհատի ոճականության, նրա ազատագրման ու ինքնորոշման վրա: Վերջինս կարևոր դեր է կատարում անհատի քաղաքացիական ինքնության ձևավորման ու ակտիվության հարցում: Անհատի ազատագրումը և ինքնորոշումը վերջին ժամանակներս քաղաքացիական հասարակության զարգացմանը նպաստող շարժումներում կարևորվող առանցքային խնդիրներից են: Դա հատկապես զգալի է ուսանող միգրանտների մոտ: Հայաստան վերադարձից հետո նման անհատները ունենում են առօրեականության այնպիսի փոխակերպումներ, որոնք ֆոնային պրակտիկաների առումով խիստ կարևոր են քաղաքացիական հասարակության զարգացման համար: Չնայած իր անվանմանը, որպես ֆոնային, չի կարելի ասել, որ այս գործոնը երկրորդական դեր ունի: Դրա դերը նույնքան կարևոր է, որքան որ առաջին պլանի կամ հիմնական պրակտիկաներինը, քանի որ դրա միջոցով հասարակական կարծիքում ձևավորվում է այն կրիտիկական կետը, ինչը նպաստում է քաղաքացիական գործընթացների առաջին գծում գործողների ազդեցության մեծացման ու արդյունքների ձևավորման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Al-Ali N. Khalid K. (eds.) 2002. New Approaches to Migration? Transnational Communities and Transformation of Home. London: Routledge.
2. Anwar M. 1979. The Myth of Return: Pakistanis in Britain. London: Heinemann.
3. Berger P. and Luckmann T. 1991. The Social Construction of Reality: A Treatise in the Sociology of Knowledge. London: Penguin Books.
4. Bhabha H.K. 1994. The location of Culture. London and New York: Routledge .
5. Boccagni P. 2012. Rethinking transnational studies: Transnational Ties and the Transnationalism of everyday life. European Journal of Social Theory, vol. 15 (1). pp. 117-132.
6. Brettell C. 2003. Anthropology and Migration. Rowman: Altamira press.
7. Bourdieu P. 1984. Distinction: A Social Critique of the Judgement of Taste. Cambridge, Massachusetts: Harvard University Press.
8. Bourdieu. P. 1986. The forms of capital. In J. Richardson (ed.) Handbook of Theory and Research for the Sociology of Education. New York: Greenwood Press.
9. Bourdieu P. 1992. Outline of The Theory of Practice. Cambridge University Press.
10. Bourdieu, P. 1993a. The Field of Cultural Production: Essays on Art and Literature. Columbia University Press.
11. Bourdieu P. 1993. Sociology in Question. London: Sage.
12. Cerase F.P. 1970. Nostalgia or disenchantment: consideration on return migration, The Italian Experience in the United State., Tomasi S.M. and Engel M.H. (eds.). New York, Center for migration Studies.

13. Cerase F.P. 1974. Expectations and Reality: A Study of Return Migration from United States to Southern Italy. *International Migration Review*, 8(2). pp. 245-262.
14. Certeau M. de. 1984. *The Practice of Everyday Life*. Berkeley and Los Angeles: University of California Press.
15. Chamber I. 2005. *Migrancy, Culture, Identity*. London and New York: Routledge
16. Chobanyan H. 2012. *Return Migration to Armenia: Issues of reintegration*.
http://cadmus.eui.eu/bitstream/handle/1814/21574/CRIS_Brief_2012_01_Armenia.pdf?sequence=1, Accessed November 03, 2013
17. Clifford J. 1997. *Routes: Travel and Translation in the Late Twentieth Century*, Cambridge & London: Harvard University Press.
18. Clifford J. 1992. *Travelling Cultures*. In: L. Grossberg, G. Nelson, P. Treichler et al (eds.), *Cultural Studies*, 96-116. New York: Routledge.
19. Derrida J. 1982. *Sending: On Representation*. In: *Social Research*, 49. pp. 294-326.
20. Durkheim E. 1984. *The Division of Labor in Society*. New York: Free Press.
21. Elias N. 2000. *The Civilizing Process: Sociogenetic and Psychogenetic Investigations Vol.1*, Oxford: Blackwell. pp. 47-182
22. Faist T. 2000. *The Value and Dynamics of International Migration and Transnational Social Spaces*. Oxford: Oxford University Press
23. Fitzgerald D. 2002. *Negotiating Extra-Territorial Citizenship: Mexican Migration and the Transnational Policies of of Community*. Center for Comparative Immigration Studies. Monograph Series, 2. La Jolla.
24. Fleischer A. 2012. *A Statistical Overview on Return Migration to the republic of Armenia*.
http://cadmus.eui.eu/bitstream/handle/1814/21297/RDP_CRIS_20

[12_01_AN_Fleischer.pdf?sequence=1](#), Accessed November 03, 2013.

25. Foucault M. 1972. The Archaeology of Knowledge and the Discourse on Language. New York: Pantheon Books
26. Գալստյան Մ. 2006. ՀՀ գյուղական բնակչության աշխատանքային միգրացիայի սոցիոլոգիական հետազոտություն. Երևան:
27. Գալստյան Մ. 2009. Արտագնացությունը Հայաստանում (19-րդ դարի երկրորդ կես - 1980-ական թվականներ): Հայ ազգագրություն և բանահյուսություն. հ. 26, Երևան, էջ 5-83.
28. Galstyan M. and Makaryan G. 2012. Costs and Benefits of Labour Mobility between the EU and the Eastern Partnership Partner Countries: Country report: Armenia. Yerevan.
29. Galstyan K. 2009. Migration Management and Human Development. In: Migration and Human Development: Opportunities and Challenges. Yerevan. pp. 77-103.
30. Galstyan K. Prutsch F. and Pier Rossi-Longhi P. 2008. Progress Review of Migration Management in the Republic of Armenia. Yerevan.
31. Garfinkel H. 2011. Studies in Ethnomethodology. Polity Press.
32. Geertz C. 1973. The Interpretation of Cultures. New York: Basic Books.
33. Gevorgyan V. 2009. Poverty, Inequality, and Migration. In: Migration and Human Development: Opportunities and Challenges. Yerevan. pp. 51-77.
34. Gmelch G. 1980. Return Migration. Annual Review of Anthropology, vol. 9. pp. 135-159
35. Goffman E. 1970. The Presentation of Self in Everyday Life. New York: Anchor Books Edition

36. Goffman E. 1974. *Frame analysis: An Essay on the Organization of Experience*. New York: Harper & Row
37. Hakobyan I. 2009. Remittances of Migrants: The Role of Diaspora in Human Development. In: *Migration and Human Development: Opportunities and Challenges*. Yerevan. pp. 103-125.
38. King R. 1978. Return Migration: a neglected aspect of population geography. *Area*, vol. 10(3). pp. 175-182.
39. King R. 2000 Generalization from the History of Return Migration. In: Ghosh B. (ed.); *Return Migration: Journey of Hope or Despair?*. pp. 10-11.
40. King R. and Ruiz-Gelices E. 2003. International Student Migration and the European "Year Abroad" Effects on European Identity and Subsequent Migration Behavior. In: *International*, vol. 9. pp. 229-252.
41. Kivitso P. 2001. Theorizing Transnational Immigration: A Critical Review of Current Efforts. *Ethnic and Racial Studies*, vol. 24 (3). pp. 549-577.
42. Levitt P. 1998. Social Remittances: Migration Driven Local-Level Forms of Cultural Diffusion. *International Migration Review*, vol. 37(4). pp. 926-948.
43. Levitt P. and Jaworsky N. 2007 Transnational Migration Studies: Past Developments and Future Trends. *Annual Review of Sociology*, vol. 33. pp. 129-156.
44. Levitt P. & Lamba-Nieves D. 2011. Social remittances revisited. *Journal of Ethnic and Migration Studies*, vol.37(1). pp. 1-22.
45. *Migration and Development: Armenia Country Study*. 2009. Yerevan
46. *Migration and Skills in Armenia*. 2012. Results of the 2011/2012 Migration Survey on the Relationship between Skills, Migration and Development, Yerevan.

47. Մինասյան Ա., Պողոսյան Ա. 2008. Վերադարձի միգրացիան Հայաստանում 2002-2008 թթ., Երևան. Ասողիկ:
48. Մինասյան Ա., Պողոսյան Ա. 2007. Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2005-2007 թթ., Երևան. Ասողիկ:
49. Մինասյան Ա., Պողոսյան Ա. 2005. Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2002-2005 թթ., Երևան. Ասողիկ:
50. Միքայելյան Հ. 2013. Արտաքին միգրացիան Հայաստանում. Միտումները, ուղղությունները, թվաքանակը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6836, վերջին դիտումը 16. 07. 2013:
51. Ortiz F. 1995. Cuban Counterpoint: Tobacco and Sugar. Durham. NC: Duke University Press.
52. Полетаев Д. 2004. Некоторые аспекты пребывания в регионах России нелегальных мигрантов из Кавказского региона. В кн: Искандарян А. (ред.) Кавказ – Россия: Миграция легальная и нелегальная.
53. Remittances and Development: Armenia Country Study. 2009. Yerevan.
54. Rutherford J. 1990. The Third Space: Interview with Homi Bhabha. In: Rutherford J. (ed.). Identity: Community, Culture, Difference. London: Lawrence & Wishart. pp. 207-221.
55. Said E. 1990. Reflections on Exile. In: Ferguson R. et al. (eds.) Out There, Marginalization and Contemporary Cultures. The New Museum of Contemporary Art and MIT Press. pp. 357-370.
56. Said E. 1983. Traveling Theory. In: The World, the Text and the Critic. Cambridge, MA: Harvard UP. 226-247.
57. Sample Survey of External and Internal Migration of Armenia. 2008. UNFPA, NSS RA. Yerevan.
58. Searl J. 1980. The Background of Meaning. In: Speech Act Theory and Pragmatics.

59. Simmel G. 1998. On Culture: Selected Writings. Frisby, Patrick D. and Featherstone M. (eds.). London: Sage Publications.
60. Simmel G. 1971. On Individual and Social Forms. Chicago: University of Chicago Press.
61. Тюрюканова Е. 2004. Мигранты из республик Кавказа на неформальном рынке труда в Москве. В кн: Искандарян А. (ред.) Кавказ – Россия: Миграция легальная и нелегальная.
62. Tadevosyan A. 2009. Migration – Current Trends in Human Development. In: Migration and Human Development: Opportunities and Challenges. Yerevan. pp. 131-149.
63. Vertovec S. 2009. Transnationalism. London & New York: Routledge.
64. Waldinger R. and Fitzgerald D. 2004. Transnationalism is Question. American Journal of Sociology, 109 (5) pp. 1177-1196.
65. Wimmer Andreas & Glick Schiller Nelli (2002) "Methodological Nationalism and Beyond: Creation of a National State, Migration and Social Sciences", *Global Networks* 2(4), pp. 301-334.
66. Wittgenshtein L. 1980. Remarks on the Philosophy of Psychology. vol. 1. Anscombe G. and von Wright G. (ed.). Chicago: Chicago University Press.
67. Wooffitt R. 2005. Conversation Analysis and Discourse Analysis: A Comparative and Critical Introduction. Sage Publications.
68. Yeganyan R. 2009. Migration Trends, Globalization, and Human Development. In: Migration and Human Development: Opportunities and Challenges. Yerevan. pp. 23-51.
69. Zerubavel E. 1981. Hidden Rhythms: Schedules and Calendars in Social Life. Berkeley: University of California Press.
70. Zerubavel E. 1991. The Fine Line: Making Distinctions in Everyday Life. New York: Free Press.

Թուղթը՝ օֆսեթ: Չափսը 80x64: Ծավալը՝ 10.5 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 500:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում

**ԷԴԻԹ
ՊՐԻՆՏ**
Խրատարակչություն



Թումանյան 12, 3,
(ՃԴԻ) 52 08 48
56 08 41
info@editprint.am

600 ր.

ԳԱՍ ՉԻՃՆԱՐԱՐ ԳԻՒ. ԳՐԱԴ.



FL0672510

И
A 110465